


12941



891.542-3

Ը-15

ԱՀԱՆԻՔ ՄՈՒՐԱՅԻՆ

9/64-

ՅՈՐՈՏ - ՄՈՐՈՏ

ՊԱ.ՑԿԵՐՆԵՐ ԲԲՍ.ԿԱ.Ն ԿԵՍ.ՆԻՒ.Ց

ԱՌԱՋԻՆ ԳԻՐԺ

ԹԻՖԼԻՍ

1898

ՑՈՎԱՆՆԵՍ ՄԱԼԻԱՍԻՆ

39891.99

U-15

43

ZORNS-ZORN

ՊԱՏԻԵՐՆԵՐ ԽՐԱԿԱՆ ԿԵԱՆՔԻՑ

5

ՀԱՅ Ճ
ԱՌԱՋԻՆ ԳԻՐ.

ՈՒՍՏԱՅ

Государство
911

Nov 24 1974

ԹԻՖԼԻՍ ԹԻՓԵԼԸ
Տպագրան. Մ. Դ. Պոտիմնեանցի
Տիպօգրաֆիա Մ. Դ. Ռոտինանց.
1898

2954

ՏՊԴՈՒ-ՏՊԴՕՏ

Дозволено Цензурою. Тифлисъ, 30-го Апрѣля, 1898 г.

ՑԱՆԿ

ԵՐԱԽ.

ԱՂԲԱՏ ՀԵՐԱՊԻ ԵՐԻՆՁԲ.	7
ԱՂԲԱՏՈՒԹԵԱՆ ՃԻՐԱՆՆԵՐՈՒՄ Կամ ՄԱ- ՐԱՊԱ.	29
ԳԵՂԻ ԱՂԵՆ.	55
ՀԱԻԱՏԻ ՇՈՒՐՁԲ Կամ ԽԱԻԱՐԻ ՄԷԶ. . . .	83
ԹՔ ԻՆՉՊԻՍ ՄԱՐԴԸ ԿՐԹՈՒՄ Է ԿՆՈՁԲ. . .	135
ՀԱՃԻ ԶՄՐՈՒԹԻ ԿՈՐՑԲԱԾ ՓԻՄՓԻԼՃԻ ՓԻ- ԼԻՃԲ.	153

2003

ԵՐԿՈՒ ԽԾՎՔ ԼԵԶՈՒԻ ՄԱՍԻՆ

«Հօրոտ-Մօրոտ» պատկերները վերցնելով Զաւախէթի կեանքից, դրեցի նոյն գաւառի բարբառով. բայց որովհետև այդ բարբառի մէջ կան բաւական թուով թուրքերէն բառեր, որոնց փոխարէն գիւղական կրթուած մասը յաճախ գործ է արում և հայերէն բառեր, միննոյն ժամանակ կան շատ խորդուբորդութիւններ՝ աշխատեցի, ա) որքան կարելի է գրել թուրքերէն բառերի փոխարէն հայերէնը, բ) կոկել, գեղեցկացնել բարբառը, զէն ձգելով այն ամեն ձեերն ու ոճերը, որոնք անհասկանալի դարձնելով գրուածքը, կորցնում են գեղարուեստի գեղեցկութիւնը։ Բայց այդ անեն կերպ աշխատեցի հարազատ մնալ բարձո՞ւ ամեն կերպ աշխատեցի հարազատ մնալ բառի խկութեանն ու ձեերին, մազի չափ անգամ չշեղուելով լեզուի ոգուց։

Չեմ կարծում, թէ դրանով մեղանչած լինիմ լեզուի գէմ, մանաւանդ, որ «Հօրոտ-Մօրոտ» պատկերներն աւելի գրականութեան բելետրիստ մասին կերպերեալ բաներ են, քան մասնագիտական, լեզուանական։

Բարբառի ոգին խկութեամբ պահպանելով նոյն խկութեամբ չկարողացաւ պահպանել հնչիւնաբանութիւնը, քանի որ մեր 36 տառերը շատ տեղերում չեն կարողանում լիովին արտասանել տալ այնպէս՝ ինչպէս խօսում է բուն ժողովուրդը, թէ ձայնաւոր և թէ մանաւանդ բաղաձայն հընչիւնները։

ԾԱՆՈԹՈՒԹԻՒՆ

Հօրոտ-մօրոտը լեռնային ծաղիկ է, որ շատ հնուց լայտնի է հայոց մէջ. գրւում էր հաւրուտ-մաւրուտ, որ լետոտ փոխուել է հօրոտ-մօրոտի. Սա մանրիկ, կապուտակ, փնջաձե, անուշահոտ ծաղիկ է, որ բանում է աղբիւրների եզերքներում:

Ըստ պարսկական մի աւանդութեան Արոթ և Մարոթն երկու հրեշտակ էին, որոնց Աստուած ուղարկեց աշխարհ խեղճ մարդկանց միսիթարելու. Ասկան նրանք հետևելով մարդկանց հեշտասէր բարքին՝ ծաղիկ դառնալով մնացին երերիս երեսին:

ԱՂՔԱՏ ՀԵՐԱՊԻ ԵՐԻՆՃԵ

I.

Օգոստոս ամսի վերջերն էր: Արեւ գեռ երկար կամար կապելով երկնքի երեսին իւր կիզող ճառագալթներով այրում, չորացնում էր իւր ներքե գտնուած երկիրն ու բուսականութիւնը: Շտապելու՝ կեանքի ու մահուան օքեր էին: Գիւղի մի ծալրից որ մտնէիր միւս ծալրով գուրս գալիք՝ բացի աղբը քջուջ անող հաւ ու ճիւից, հողերի հետ խաղացող մանուկներից և գոանը կուչ եկած, ձեռքից-ոտքից ընկած պառաւներից, որ քը՛շ-քը՛շ անելով հազիւ էին կարողանում վուրնտել երեսներին նստող հարիւրաւոր ճանճերը՝ ոչոքի չէիր պատահի. բոլորը գուրս թափուած տներից-բներից՝ ցրուել էին դաշտ ու ձոր:

Առողի երիտասարդը շորերը հանած զնդացնում էր իւր պսպղուն գերանդին և կծղած արտը շտապով քաղում. ծերունին միմիայն սպիտակե-

զէնն հագին եղան էր անում, քաղած լասը (հնձած հաշանի շերտ) խնամքով դարսում, փուրուլ կամ հուպուլ (փոքրիկ դէզ) շինում. իսկ սրանց ետևից նորատի հարսն ու ջահէլ աղջիկը փեշերը վեր քաշած գոտիները զարկած, արիւն-քրտինք մտած շտափով փոցին էին անում և խրխաների փեշերով չուտ-չուտ երեսների քրտինքը սրբում. մանուկ եզնարածն արտերի թմբերում լծկանն արտացնելով դէս ու դէն էր վագ տալիս, և քաղուորի հրամանները կատարում. ոմանք էլ սալլը սարի չափ բարձած մի գոյգ գոմէշ ամոլ լըծած, մի գոյգ եզ էլ նրանց առաջ հորիկ, կամ ինչպէս իրենք են ասում չորոց լծած՝ ճիպտին էին անում, որանը կալը կրում, կալսում, ծեծում, ուտելիք հասցնում, ձմեռուալ համար բնադոն պատրաստում: Բոլոր դաշտը մարդ էր դառել, որ կողմը նալէիր՝ սպիտակ շապիկ էր շարժւում: Գիւղական աշխատանքի ալնպիսի տաք ժամանակն էր, որ, ինչպէս իրենք են ասում, «քիչ էր մնում մեռելը տեղից հանէին, դատեցնէին»:

Աշխատանքի ալդ բաղդից զըկուածը մի-միալն աղքատ Հէրապի ընտանիքն էր: Հէ-րապը, կամ ինչպէս նրան կոչում էին գիւղում Աղքատ-Հէրապն օտարական էր: Նա եր-

կար ժամանակ աստանդական կեանք վարելով վերջն եկել ընակութիւն էր հաստատել Զաւախէթի Սուլտա գիւղում: Բաղդն այստեղ ևս չէր ժպտացել նրան. մի անգամ մշակութիւն անելիս, որով նա պահում էր իւր կնոջըն ու հինգ մանրուխոշոր աղջկներին՝ աջ ոտին խեղում էր ստացել, որով և կորցրել էր իւր միակ յուսն՝ առողջութիւնը. ուստի նա իրեն համար արհեստ էր ընտրել կամ քարելը. դրանով նա հազիւ էր կարողանում ցամաք (չոր) հաց մատակարարել իւր բազմանդամ գիւղաստանին:

Հէրապն օտարական լինելով այդ գիւղում զըկուած էր հող ունենալու իրաւունքից, այն գլխաւոր միջոցից, որ գեղջուկի միակ ապաւէնն է: Նրա միակ կարողութիւնը մի աչք տունն էր և միքանի հաւերը, որոնց ածած ձուերով նա կարողանում էր մի կերպ հոգալ իւր առօրեալ ամենակարեւոր պէտքերը:

Հէրապը միքանի շաբաթ էր ինչ գնացել էր Զըլտըր, թուրքերը կամ քարելու: Նրակինն ու աղջկները դուն շէմքին նստած անհամբեր սպասում էին նրա վերադարձին և սրտամաշ նախանձով դիտում հարեանների բաղդաւորութիւնը, դաշտալին աշխատանքը:

— Հաւղը (խալիսը) էսման *) օրով չիտէ թէ ինչ էնէ, մէջ տեղէն քանի կտոր ըլլի գործ էնէ մենք էստեղ կարօտ մալից (տաւար), կարօտ հողից պարապ-սարապ նստել ենք, սև օր կանցընենք. դատաստընիդ մեռնիմ Աստուած—, սիրտը քաշելով խորը հառաչեց Հերապի կինը Զարմանը:

— Ա-՛խ-ախ-սի, եարաբ մեր վերջն ինչ պիտի ըլլի, եարաբ մեր գուռն էլ մալ ու օչխար պիտի բառաչէ, եարաբ մենք էլ արտի ու չայիրի տէր պիտի ըլլինք—, սրտամաշ վրայ բերեց մեծ աղջիկը Մանանը:

Տան-տօն, տան-տօն, լսուեց գիւղի եկեղեցու փոքրիկ զանգակների զօղանջը, որ արձագանգ տուեց սարերին ու ձորերին, հաւատացեալ ժողովրդին աղօթքի և երկրպագութեան հրաւիրելով:

Երբէք, երբէք այդ սովորական զօղանջն այնքան խորհրդաւոր, այնքան մխիթարիչ չէր թուացել նրանց, որքան այդ երեկոյ. նա ինչ-որ մօտալուտ բաղդ, յուսատու խնդում էր աւետում:

— Քաջան, նոր միտքս ընկաւ—, երեսն երկիւղածութեամբ խաչակնքելով խօսեց Մա-

նանից փոքր քոյրը Մաքանը, — էս գիշեր էրածս (երազ) տեսայ, եանի (իբր) թէ մեր գուռում մէ կարմիր լալէմ (կակաչ) էր բուտէ, մենք էլ ուրախ-ուրախ էդ լալի չոլս բոլորը կխաղալինք, ու խնդըներուս չիտէինք, թէ ինչ էնէինք... մէկ էլ բիրդան (յանկարծ) մի սեծիաւոր եկաւ, մեզի վախեցուց, էդ լալէն պոկեց, ձեռներէս խլեց, փախաւ:

— Աղջի, գրողն երեսդ, գէշ էրած ես տեսէ. տեսնիս ինչ պիտի ըլլի. լալէն՝ խնդում է, սեն էլ թէզ... Սէյրանենց Թիրինջն էստեղ ըլլիր՝ հարցնէինք—, պատասխանեց մայրըն և երեսը շրջեց միւս կողմը. նա տեսաւ, որ Փոշտի կողմէն մէկը կաղի տալով, առաջը մի կենդանի խառնած, մի խուրձ խոտ էլ թևէ տակ դրած գալիս էր գիւղի:

— Աղջի Մանան, Փառան, գէմէն մէկը կուգալ, աղջի Մաքան, լաւ աշեցէք, կսես հէրդ ըլլի, հետն էլ էն ինչ է, աչքս լաւ չի զոկէ, կոնկ է, թէ աչառ, առաջ խառնած Փոշտի քովէն կիջնի:

— Ղորթ:

— Հաղորդ (հաղորդութիւն):

— Ուր է:

— Տիա, ալ, Սըրի ե ամ ճէն (զառիվայր),

*) Էս-նման=էսպէս:

Հըմը (հէնց) Փոշտի քովէն կիջնի, լաւ աշեցէք:

— Հա՛, զ՞րթ օր (որ), կսես ամիս ըլլի —, վրայ բերեց Մաքանը:

— Ամիս է, ամիս —, նրան ճանաչելով ուրախ աղաղակեց Մանանն և վեր թռչելով տեղից վազեց դէպի հալրը:

— Ամիս է, ամիս, վուլ եկաւ, հոգուն մեռնինք —, ձայնեցին մնացած չորս քոյրերն և Մանանի ետևից վազ տալով ուրախ-ուրախ շըջապատեցին հօրը:

Մոխրագոյն, սիրուն, չաղ, կլորիկ երին-ը գրաւեց նրանց սէրն ու ուշադրութիւնը:

— Ամի ջան, ամի, էս ինչ երինջ է, էս ումն է, էս ինչք կբերես —, իրար ետևից հարցեր տեղացրին նրանք հօրը:

— Մերն է, բալէք ջան, մեր երինջն է —, ուրախ սրտով ու քաղցր ժպիտով նրանց աւետեց հալրն ու բոնեց ամենափոքր աղջկայ ձեռից, որ հազիւ էր հասել նրա մօտ և այլ ևս թափ չունէր միւս քոյրերի հետ գնալու:

— Վուլ, վուլ, մերն է, մեր երինջն է, վուլ, մենք էլ երինջ ունեցանք —, ցնծացին երեխաներն և ուրախ-ուրախ թռչկոտացին տեղերում:

— Վեպ (ով) տուեց —, անհուն ուրախու-

թեամբ լցուած ամուսնուն հարցրեց Զարմանըն, երբ երինջն արդէն կանգնել էր գռանը:

— Նէն է, ու զէն կենայ Զըլտըլցի Պալրամ աղի տունը. կամերը մի շաբաթ քարեցի, հախիս տեղ տուեց:

— Զան, ջան, երինջ ունինք —, նորից ճվըրտացին երեխաներն ու մեղուի պէս բըզբացին երնջի շուրջը:

Հսակացաւ արգեօք կենդանին կարօտ երեխաների ուրախութիւնն, ինքն էլ ուզեց մասնակից լինել թէ ինչ է, այդ բոպէ մի քաղցը բառաչեց:

— Օղորմութանդ մեռնիմ, Աստուած —, գլխարկը վերցնելով աղօթեց Նէրապը —, օր աղքատ նաչարիս (տնանկ) էլ էս օրուան, էս բաղդին արժանացուցիր, քանըհինդ տարուալ կարօտ աչքս կշատացուցիր, օր իմ գուռս էլ մալ բառաչեց... Դու քեագարսըզ (անվըտանդ) պահես երինջս, գարունը ծնի, կով դառնալ, հորթի ու մոզու տէր ըլլիմ, տունս ու տղէքս եղի ու պանրի երես տեսնին:

Այդ ժամանակ Մանանը ներս վազեց հաց բերելու:

— Ե՛, անունն ինչ դնենք:

— Անունը —, Մաքանի հարցը կրկնեց մալլը:

— Հա՛:

— Նարինջ:

— Հա՛, հա՛, Նարինջ, լաւ ըստը Նարինջ —, մօր խօսքին վրայ բերին երեխաները հըրճուանքով, որ Մանանը հացը բերեց:

— Կե՛, Նարինջ ջան, կե՛ —, հացն երնջի բերանին մօտեցնելով փաղաքշեց Մանանը:

— Վո՞ւ, ջանին մեռնիմ, տես հացն ինչպէս կուտէ —, խօսեց փոքր քոլրերից մէկը —, ինձի տուր մի քիչ էլ ես ուտեցնեմ, իմ էլ վրէս սորդի:

Հալրը քարերի վրայ նստած անհուն հրճուանքով նախում էր, թէ ինչպէս ուրախանում և մխիթարւում էին որդիքն երնջին նայելով, երնջին փայփայելով: Այդ ըստի ին կարծես ամբողջ աշխարհը նրան էին տուել, այնքան որ մեծ էր նրա ուրախութիւնը:

— Դէ, հերիք է, հիմի նես տանինք, խոտը դնենք առաջը, թող ուտէ —, ասաց Հէրասին և երնջի ականջից բռնելով տարաւ ներս:

Երինջը, որ իւր կեանքում դուցէ ոտը թոնրատուն ներս ամենևին դրած չէր, և եթէ դրել էր, ով է իմանում ինչպիսի ծանր հարուածներ ստանալով դուրս էր վարնտուել՝ այժմ նայելով չորս կողմը կարծես գար-

մանում էր, թէ դա ինչ պատիւ էր, որ տալիս էին իրեն:

Աղջկներն ամենևին չէին հեռանում նրանից, որը պոչն էր բռնում, որը ճակատը շփում, որն աչքերն ու երեսը համբուրում, որը խոտը դաստա անում բերանին մօտեցնում... Եւ այդ գիշեր գրեթէ ոչ մէկի քունը չտարաւ, շուտ-շուտ նրանք աչքերը բաց էին անում և մթութեան մէջ աշխատում էին տեսնել, թէ ինչպէս է պառկել կամ ինչպէս է ուտում երինջը: Փոքր քոլրերից երկուսը, որ իրար ծոց էին պառկել, մինչև անգամ մի-երկու անգամ վեր կացան, կսկուծ համբուրեցին երնջի թշերն ու նորից պառկեցին:

Միւս առաւոտ Մաքանն իւր երկու փոքրը քոլրերի հետ, ինքն առաջ անցած, քոլրերին կողքերին գցած երինջը տարաւ մօտիկ աղբինների *) թմբերում արածացնելու և երեկոյեան նոյն կարգով բերեց տուն:

Նուտով կենդանին վարժուեց իւր այդ նոր կեանքին. նա առանց շփոթուելու գալիս կանգնում էր իւր տեղը: Եւ այդպիսով Նարիջն Աղքատ Հէրասի տան ոչ միայն ուրախացնող ու բաղդաւորեցնող առարկան դա-

*) Գիւղի մօտի աղբած արտ.



ռաւ՝ այլ և ընտանիքի անբաժան անդամը,
տան ազիզը:

II.

Միքանի օրից վրայ հասաւ կիւրակին,
որին սպասում էր և Հերապը. նա այդ օրը
պէտք է յայտնէր նախրջուն երնջի մասին և
խառնէր եօզը *):

Պայծառ առաւոտ էր. փողոցներում տա-
րածուել էր թաֆա հացի տնուշ հոտը: Նա-
բաթներով արօտատեղում արածող, տանից-
տեղից փեր կվցած (օտարացած) եօզը հե-
ղեղի նման թափուեց գիւղ. չաղացած-տողած
մողիները պոչերը վեր տնկած, տոտինո ա-
լով վազվզում էին փողոցներում: Ամառ արդ
իւր գուան սալաքարերի վրայ կանգնած աղ
էր ուտեցնում իւր եօզին. Հերապն էլ իրեն
դուան սալաքարի վրայ կանգնած աղ էր տա-
լիս երնջին. նա հետն աղը ցանում էր նրա
առաջ, հետն էլ «Նարինջ ջան, Նարինջ» ա-
սելով ճակատն ու աչքերն էր շփում: Նրա

*) Եօզ (թ.) կոչում է մողիների, գեատակ-
ների, չնուռած կովերի, երինչների, արջառների
խառնուրդը որ դաշտում աղատ արածում է, և 1—2
շաբաթը մի անդամ զալիս է գիւղ աղ ուտելու:

կինն ու աղջկերքը պատած երնջի շուրջը կա-
րօտալի նայում էին նրան. նրանց սրտին այդ
օրն ինչ որ գաղտնի տիրութիւն, անհասկա-
նալի թախիծ էր պատել. թւում էր, թէ այդ
տիրութիւնն, այդ թախիծն երնջի եօզը խառ-
նուելու, հեռանալու պատճառով էր:

— Քա, հիմի եօզն երկու շաբաթ էլ գեղ
գալու չէ:

— Զէ—, պատի աղջկան կիսասիրտ պա-
տասխանեց մայրը:

— Ըսել է երկու շաբաթ էլ նարնջին
տեսնելու չենք —, երկու ձեռքը կրծքին ծա-
լելով գրեթէ արտասուակալած հարցրեց երկ-
րորդ աղջիկը:

— Քա չէ, չէ, քանի հեղ (անդամ) ըսեմ —,
առաջասխանեց մայրը, որի սիրտը նոյնպէս
տիրամած էր:

— Վայ-վայ-վայ —, խորը հառաչեց փոքր
աղջիկն ու աչքերը քամեց:

Այդ բոպէին դագանակը ձեռին, վիզն
առաջ երկարացրած, գող կատուի նայուած-
քով նրանց մօտեցաւ թորօի տղէն կամ, ինչ-
պէս կոչում էին նրան գիւղում, Հարամխոռը:

Հարամխոռ ասելով գիւղացիներն հաս-
կանում էին մի մարդ, որ հարամով կեղեքու-
մով, թալանով է ապրում:

Հարամխոռը, որ արտաքինով թուրքի շատ նմանութիւն ունէր, այնքան երկրագործութեամբ չէր պարապում, որքան երկրորդական բաներով, որոնք գիւղի համար այնքան էլ պարզ չէին. գիւղացիները գիտէին, որ նա տոկոսով սրան-նրան փող ու հաց է տալիս, զանազան տեսակ մութ անձնաւորութիւններ նրա տանն են վէր գալիս, սիրում է բագոսը և ալլն.

Հարամխոռը բոլոր գիւղի աչքից ընկած էր. նա շատերի արտասուքով էր առօգել իւր կեանքի ծաղիկ օրերը... Յայտնի թէ անյալտ շատերը նրանից հարուածներ էին ստացել... Սլդպիսով նա «կոտրել էր ամբողջ գիւղի աչքի ճիճուն» և վաստակել ընդհանուրի ատելութիւնս ու արհամարհանքը:

Հարամխոռը մօտեցաւ Հերապին, մի-երկու վայրկեան լոեց և աղա ձայնեց.

— Հերապ:

— Համմէ, աղա ջան:

— Բարով. էսքան վախտ է որտեղ էիր:

— Բարին արեգ, զուրբան (մատաղ) ըսիմ ջանիդ, Զըլտըր էի գնացէ:

— Զըլտըր:

— Հրամանք ես:

— Քանի անգամ եկայ, ետ դարձայ...

— Ինչի, Պօղոս աղա ջան. ի՞նչ կայ:

— Ինչի որն է, ախալէր, էս տարին ե. կաւ լմբնցաւ, ինչ գարին տարել ես, ոչ կըերես, ոչ էլ տէրը կըլիս... ախը էսպէս չիլի: Սլդ լսելուն պէս Հերապը զարմանք կտրաւ, երեսի գոյնը գնաց, չիմացաւ ինչ պատասխան տար, քանի որ գարին վերադանելու պայմանով չէր վերցըել:

— Զէ օր (որ) գարին տանելուս ժամանակ խօսանք, որ տեղը կամերդ քարեմ:

— Կամերը: Նախատական հայեացքով նայեց Հերապի երեսին:

— Հրամանք ես:

— Անհաւատ թուրքերն ինձէն լաւ էին, հա, օր իմ գործս թողած առաջ գնացիր էնոնց կամերը քարեցիր —, քիչ-քիչ ձայնը բարձրացնելով իւր չար դիտաւորութիւնը պատճառարանեց Հարամխոռը:

— Վնաս չունի, Պօղոս աղա ջան, մենք է, ձեզանով ենք եօլո երթալու. ներող եղի, մէկ էլ առաջուց իմաց չէիր տուէ... դեռ գուք կալ չէք էլ ցքէ, մի-երկու օրուալ մէջ կըալեմ, կհասցնեմ, էգոր համար մի նեղենաւ —, նրա ալդ վարմունքի մէջ ոչինչ լետին միտք չկասկածելով աղաչեց Հերապը:

— Էլ էսդից ետև հարկաւոր չէ, չեմ ու-

գէ, քանի օր ինձի թուրքէն ցած դասեցիր.
գալիս տու...

— Գարիշ, կրկնեց Հէրապն և մնաց
շուարած այդ անսպասելի պահանջի առաջ,
քանի օր այդպիսի բան երբէք չէր նախա-
տեսել և ոչ էլ հնար ունէր վճարելու:

— Հա, գարիս:

— Հիմի ես որդից տամ:

— Ինչք որդից տաս. այ գնացել էիր
Չըլտըր, փարէցէ-մարէցէ չառաջ... հիմի էլ
խօյ պարտպ չես...

— Պարապ չեմ, հըմը չունիմ:

— Զունիս՝ այ երինջդ... խօսեց Հարամ-
խոռն ու անկուշտ աչքով նայեց սիրուն, չաղ,
կլորիկ երնջին, որի վրայ ոչ մի կեղտ չէր
մնացել, այնքան որ շփել ու փալփալել էին
նրա մարմինը Հէրապի աղջկերքը: Նրա մէջ
վերստին երևան եկաւ այն չար, յափշտակող
հոգին, որ միքանի օր առաջ զարթել էր
երնջի մասին, երբ տեսել էր արտերի թմբե-
րում արածելիս և մտքում որոճացել. «ինչ
լաւն է, ինչ երինջ է... աղքտի դուռն էդ-
պէս երինջ... չեմ կարայ մի Փանդով (հնար-
քով) ձեռնէն խլէ...» և իսկովն լիշել էր նրան
պարտք տուած 4 կոտ գարին ^{*)}:

^{*)} Մօտ 4 պուդ:

— Երինջս, կրկնեց Հէրապն, և նրա
սիրտը դողաց:

— Հա, երինջդ:

— Պարտքս է, ալիտի տամ, ջանիդ դուր-
բան... օր էղման է ինչ կարամ ըսէ—, աղ-
քտին յատուկ ճնշումով խօսեց Հէրապը:

— Հօրդ խէրին կուտաս—, իւր կողմից
վրայ բերեց Հարամխոռը:

— Միան (միայն) միքանի օր համբերէ,
հոգնւդ զուրբան, մինչի մի տեղէ ճարեմ...
յուսահատութիւնը դէմքին ցոլացնելով աղեր-
սեց Հէրապը:

— Զէ, ես ժամանակ չիտեմ... ինչքան
համբերել եմ հերիք է. էս սահաթիս կուզեմ:

— Էս սահաթի՛ս... սարսափած կրկնեց
Հէրապն և ամբողջ մարմնով թուլացաւ, երբ
հասկացաւ Հարամխոռի զանազան պատճա-
ռաբանութիւններով քօղարկուած մտադրու-
թիւնը:

— Հա, էս սահաթիս:

— Էս սահաթիս որդի՛ց տամ. գոնէ մի-
քիչ մաճալ (հնարաւորութիւն) տու:

— Զեմ կարայ...

— Ախր էս... ախր ինչ կարմ էնէ էս
սահաթիս... լեզուն կապուեց Հէրապի:

— Չիտեմ...

Հէրապը մնաց լոած, քարացած:
— Հը, տալու ես թէ չէ, ըսա, թէզ,
թէ չէ երինջդ տռաջ կիսառնեմ.. .

Այդ սպառնալիքը մինչև ոսկորները սար-
սեցրեց աղքատ Հէրապին. նա անճարտցած՝
մոլորուած աչքերով նալեց կնոջ ու աղջկնե-
րի երեսին, որոնք պատի հետ կողքէկողք
շարքով կանգնած տիսուր, արտասուակալած
աչքերով նալում էին երնջին: Նրանց լացաց-
նողը հօր խղճալի դրութիւնը չէր, այլ երնջի
անփոխարինելի ոէրը:

— Թէ էն պաշտում պատարագը կսիրես,
թէ մեռած հօրդ, Ատայիդ — Թորօի հոգին կսի-
րես՝ էնո՞ր խէրին միքանի օր համբերէ, էս-
քան տղոցս աղի-արտըսունք մի թափել տալ —,
ձեռքը գէպի աղջկերքը պարզելով գլխարկը
վէր առաւ Հէրապը:

— Են օր (օր) անօթի էիր մնացէ, լաւ
եկար ջվլներդ լցիր տարար, չհամբերեցիր...
հիմի ինձի կսես համբերէ, հա... Դէ, շուտ...
Զես տայ... Հօ, Հօ —, սիրտը քար դարձրած
խուեց Հարամխոռն ու միքանի անգամ ամուր
խփեց երնջի մէջքին:

Կենդանին անսպասելի հարուածից ցըն-
ցուեց ու չիմացաւ ո՞ր կողմը շարժուի, քա-
նի օր նրա չորս կողմը պատել էին:

Այդ հարուածն այնպէս ծանր ագդեց
Հէրապի կնոջն ու աղջկների սրտին, որ կա-
սես նրանց իրենց մէջքին իջեցրին: Նրանք
այլ ևս չկարացին իրենց փուլ եկած սիրտը
պահէլ՝ սկսեցին լաց լինել:

Այդ դրութիւնն ինչպէս կալծակ շան-
թեց Հէրապին. կարծես արիացաւ նրա ճըն-
շուած, ընկճուած հոգին, և նա Հարամխոռի
առաջը կտրելով ինքն-իրեն կորցրածի ալէս
գոռաց.

— Ե՛լ, Բնչ կինես, ում մալը կտանիս:
— Դէ, գարիս տու, չես թողնի —, ճչաց
Հարամխոռը:

— Զէ, չեմ թողնի... Բնչ իրաւունք ու-
նիս, 4 կոտ գարու տեղ զօշա երինչս զօ-
րով ձեռնէս խլելու:

— Զես թողնի... Հօ:
— Զէ, չեմ թողնի, օօ հօ:

— Տօ էնդին կորի, ճամպայ տու, թէ չէ
դանակս վրէդ ջարդուփշուր կէնեմ... որո-
տաց Հարամխոռն և շարժուեց գէպի Հէրապը:

— Զէ, չէ, չեմ թողնի, Բնչ պիտի էնես...

— Զես թողնի, հա, չես թողնի... գէ
կէ, դէ կէ, հը՝ դէ կէ, հարամզադա (ապօ-
րինի ժառանգ), դէ կէ, ալ քեզի չթողնիւ,
դէ կէ օր ջանդ դինջանայ, ես գիտեմ կկեռար

(քոր գալ), դէ կե... ընհ... տեսա՛ր... ես էն քու... Եւ պատկառանքն իսպառ կորցրած ինչպէս մի ամենայետին սրիկայ հայհոյեց Հարամխոռն ու մահակով այնպիսի ծանր հարուածներ հասցըեց նրա թիկունքին ու ուսերին, որ տարիքն առաջ ծերունին սաստիկ ցաւից ընկնելով քարի վրայ լաց եղաւ:

Այդ տեսնելով նրա կինն ու որդիքը՝ սկսեցին ազիողորմ լաց լինել:

Պօղոս աղա ջան, ինձի խղճա, աղջըկներուս խղճա, մեղք է, մի զարկէ, իղդեար, բէքէֆ (ծեր, տկար) մարդ է—, նրա թևերին փարուելով աղերսեց Զարմանը:

—Մի բռնէ ինձի, ատափսըզ (անամօթ)—, ցոյց տալով թէ Զարմանի աղերսանքն ու իրեն փարուիլը թշնամական՝ իրեն բըռնելու մտքով է հասկանում, որոտաց Հարամխոռն, և որքան ոյժ ունէր՝ շպրտեց նրան պատին:

Խեղճ կինն այնպիսի հուժկու հարուած ստացաւ մէջքին, որ չկարողացաւ իրեն պահել, գլորուեց գետին և ամբողջ մարմնով մեկնուեց փողոցում:

—Վուլ, ապլա ջան, վուլ, նարինջջան—, մղկտացին աղջկերքն ու սարսափելի լաց ու որոտ բարձրացըին:

Աշխարք բռնող լաց ու կոծի վրայ հաւաքուեցան միքանի գիւղացի:

—Մտիկ տու, մտիկ տու, թէ Հարամխոռն հարամզաղէն ինչ օրն է ցքէ աղքատօղորմելուն, մտիկ տու:

—Վայ ես էն էգոր... վրայ բերեց երկրորդ գիւղացին և շտապեց միւսների հետ դէպի կոււատելը:

—Հարամ կաթ օր ծծած չըլլի՛ բա աղքատ մարդուն էդ օրը կցքէ... օրական մի տուն կըանդէ... մի սազ գեղ կաւիրէ...

—Էգոնք ցեղով շուն են, ցեղով. մինչի աղքտի ունեցածը ձեռնէն չխլեն, ուրուշի տունը չքանդեն՝ չեն կշտանալ... հոգեստանքը դուս կուգայ...

—Պօղոս ջան, Պօղոս, թէ մեզի կսիրես, մի էնէ, աղքատ-օղորմելի մարդ է, միքանի կոտ գարու համար խեղճ անասուններուն մի լացընէ, մի մաղիկ—մաղիկ բերէ—, միջամըտեց մի տարիքաւոր գիւղացի:

—Ախակը, կսէք հըմը, ինչ էնեմ, էս մի տարի էղաւ տանիլը, ոչ գարին կբերէ, ոչ էլ շահ կուտայ. եկել եմ կուզեմ՝ հըլը բերանն էլ օխտը թիզ կբանալ...

—Պօղոս ջան, մարդը կսէ մի քիչ համ-

բերէ՝ դու էլ համբերէ —, վրայ բերին չորս
կողմից:

Համբերելը մէկ կըլլի, երկուս կըլլի. դուք
էղէք իմ տեղս, ինչք տէր եմ, ամեն մարդ
որ տարածը չբերէ՝ ես ի՞նչ պիտի էնեմ —,
աղուէսութիւն արեց Պօղոսը:

—Վնաս չունի, համբերէ, համբերէ:

—Զէ, չեմ կարայ:

—Ինչք չես կարայ, ի՞նչդ է պակտս —,
տաքացած վրայ բերեց մի դեռահասակ գիւ-
ղացի:

—Է՞նպէս, չեմ կարայ... սիրտ շատ
կցաւի՝ բե ինքդ տու —, այս անդամ արհա-
մարհանքով խօսեց Հարամխուն և երինջն
առաջ խառնեց:

—Ե լաւ, երկու կոտ գարու տեղ սաղ
երինջը խլել կըլլի...

—Զեզք զեկ սիւգիտ դրեց գլխուս, ես
հախս էնորէն կուգեմ...

—Թէ՛ւ, ես էն քու կուալաշտ... ափսանս,
ափսանս բերնիս, օր մունտուեցի, քեզի հետ
լիզու թաթխեցի, թէ՛ւ, թէ՛ւ —, զզուանքով
թքեց միջամտող տարիքաւոր գիւղացին և
քաշուեց մի կողմ:

Հէրապը ոտքի կանգնելով դրացիների ար-
դարագատութեանը դիմեց:

—Օ՞օ-հօ, օ'օ'-հօ, աղջի Մական, տա-
րաւ, մի թողնի, օ'օ'-հօ, նարինչ ջան, մի
երթա, օ'օ'-հօ —, աշխատելով երնջի առաջն
տոնել՝ լուսահատ ճիչ բարձրացրեց Մանանը:
— Օ'օ-հօ, նարինչ ջան, օ'օ'-հօ —, միւս
կողմից երնջի առաջը կտրեցին Մաքանն ու
Փառանը:

Երինչն ետ դառաւ և ուզեց կանգնել
իւր տեղում:

— Հօ... ես էն քու ծախողիդ... հալ-
հուեց Հարամխուն, և այս անգամ այնպիսի
անաստուած երկու հարուած իջեցրեց երնջի
մէջքին, որ կենդանին կոկծից բառաչեց և
գժուածի նման ճանապարհ բացեց, ու սկսեց
փողոցներում դէս ու դէն վազվակել:

Աղջկերքն արտասուլքն աչքերին, ամեն
ինչ մոռացած՝ նորից վազեցին ետ դարձնելու.
սակայն այս անգամ իւր մահակը դէպի նրանց
գարձրեց Հարամխունը:

— Էնդին կորիք, շան լակոտներ, թէ չէ
էս է, եկաւ. բոլորիդ էդտեղ և եթ շան սա-
տակ կէնիմ —, և վրայ վազեց:

Աղջկները զարհուրած նրա գժոխալին
արտայտութեամբ վայլող աչքերից՝ վազե-
ցին ապաստարան գտնելու հօր մօտ, որ յու-

ստհատ անէծքներ թափելով վազում էր իւր
աղջկների և երնջի ետևից:

Բայց Հարամխոռը թողեց նրանց և վագեց
հասաւ երնջին:

Զարմանը, որ հազիւ ուշքի էր եկել, երբ
աչքերը բացեց, տեսաւ, որ աղջկերքը լալով
դալիս են, իսկ Թորօի Հարամխոռ տղէն ե-
րինջը քաշում է դէպի իւր տուն՝ ձեռները
դէպի երկինք պարզեց ու անիծեց.

—Վուլ, չվալելնս, Թորօի տղալ, վուլ,
տունդ ու տեղդ բըիշակ ըլլի, վուլ Աստուած,
արդար դատաստանիդ մեռնեմ, բան չեմ խընդ-
րէ, ինչ օր օր (որ) ինձի ցուց տուեց Թո-
րօի տղէն՝ իրեն կնիկն էլ իմ օրս ընկնի...
Վուլ քոռանամ ես Նարինջ ջան, էդ ուր
կտանին քեզի...

ԱՊՐԵՍՈՒԹԵԱՆ ՇԻՐԱՆՆԵՐՈՒՄ

կամ

ՄԱՐԱՊԱ *

I.

189 . . . թուականի սկսումութ ձմեռն
էր. դեռ վետրուար ամիսը չհասած խոտի ու
դարմանի սաստիկ թանկութիւն ընկաւ Զաւա-
խէթում: Դիւղացին «իւր բերնից կտրելով»
սնունդ հասցրեց իւր անբաժան ընկեր, իւր
աջ կուռը գրաստներին, որ գարուն հասցնէ,
նրանցով վար վարէ, ցանք անէ. սակայն
ձմեռն հազիւ էր մօտեցել իւր վախճանին,
որ եղջիւրաւոր անասունների մէջ ցաւ ընկաւ:
Համաճարակը շատ աչեր թողեց արտասուա-
կալած, շատ լոյսեր խորտակուած, շատ ճտեր
ծուռը, շատ ձեռներ ծոցը...

*) Ուրիշի դուանը ճորտ — ծառակ:

Բայց ոչոքի ստացած հարուածն ալնքան
զգալի, վիշտն ալնքան մեծ չէր՝ ոլքան Յ...ցի
Մարապոնց երկու եղբօր, Քերոբի ու Սերոբի:

Քերոբն ու Սերոբն իրար հետ սիրով եղ-
բայրներ էին: Հայրը մեռնելուց յետու թողել
էր նրանց միջակ կարողութիւն. աղքատու-
թիւնը վաղուց բաղխելով նրանց դուռը՝ խը-
լել էր շատ բան, և թողել էր մի զոյտ եզր,
մի կով, մի մատակ ու մի մոզի: Երկու եղ-
բայրն ուսերը դէմ տուած կռւում էին մարդ-
կութեան ալդ ամենասոսկալի թշնամու դէմ,
որ անդառնալի կերպով նրա ճանկը չընկնէին.
բայց 189... թուի համաձարակը տարաւ նը-
րանց եզան մի ուսը, մատակն ու մոզին. և
երբ գարունը բացուեց՝ նրանք լծելու եզ չու-
նէին:

— Սերոբ չան—, խօսեց մի օր Քերոբը:

— Համմէ—, ձայն տուեց փոքր եղբայրը:

— Մարալն ախըր թաք (կենա) մնաց, ինչ
էնենք:

— Զիտեմ, ափա՞ր ջան (նա մեծ եղբօրն
իբրև պատիւ ափար (եղբայր) էր ասում.— էդ
քու գիտնալիքդ է:

— Զէ, ինչք, հաւսար ախպէր ենք. լաւ
կըլլի, խորհուրդ էնենք:

— Ըստ, ինչ խորհուրդ:

— Ինչ կսես, ինչպէս էնենք, ընկեր առ-
նենք, թէ ծախենք:

Սերոբի գլխին կարծես սառը ջուր ածե-
ցին.— ինչպէս թէ ծախենք... ապա վար, ա-
պա ցան... առանց եզակ մնանք—, ու լուգ-
մունքից կորցրեց, լեզուն խառնուեց.— ը՛ը՛ն-
կեր առնինք:

— Առնինք, լաւ կսես. ընկեր առնինք
հըմը, ինչով...

Եւ այդ ինչով էր, որ պարունակում
էր իւր մէջ և լացը նրանց և ժպիտը:

Պարտքերս մինչի բողազներս է հասէ—,
շարունակեց Քերոբն.— ուրուշ տնէն էնպէս
ծախելու էլ բան չունինք, օր ծախենք առ-
նինք, ինչ էնենք...

— Ափար—, եղբօրն երեսին խորհրդաւոր
եղանակով նայելով խօսեց Սերոբը:

— Ըստ:

— Մենք երկու ախպէր ենք, չէ:

— Համ:

— Տունն երկու մարդու էլ ինչ գործ
կալ, օր երկուսն էլ տունը (տանը) մնանք.
մէկս ու մէկս հերիք ենք:

Քերոբը հասկանալով եղբօր միտքն, ա-
սաց.

— Համ, ես էլ էն կարծիքին եմ. մէկս ու

մէկս մտնենք մշակ. եա ես մտնիմ, դու տունը կեցի, եա դու մտի, ես տունը կկենամ:

—Ես պզտի ախպէր եմ, ես կմտնիմ... էս մի տարին հախովս եզ կառնինք, Մարալին ընկեր կէնենք:

Քերոբը բեկուած սրտով համաձայնեց:

Եւ գտրնան սկզբներին Սերոբն արդէն Մը... գիւղում մի թուրք տղալարի մօտ մըշակ (ծառալ) էր:

Դա նրանց առաջին քալն էր, որ թողնելով հօր օջաղը գնում էին ուրիշի օջաղը շէնացնելու:

II.

Քերոբն իրեն պէս մի չքաւոր գիւղացու հետ մօտգամ (ընկեր) դառնալով իւր մի ուս եզը միացրեց նրա նոյնպէս մի ուս եզան հետ, օրավար ու կէս հերկը Բեդեշէն կոչուած մասում վարեց, ցանեց:

Արտը բսեց, մէծացաւ, ատոք հասկեր բոնեց և քաղելու արդէն մօտ էր, որ Քերոբը մէկ օր ժպիտն երեսին հասկերից մի դաստա կապած Աստծուն փառք տալով, կեռման ճանապարհները թողած արտերն ու թմբերը ճղելով դալիս էր գիւղ:

—Քերոբ, էդ ի՞նչ գարի է—, ատոք հասկերը աեսնելով ուրախացած հարցը մի ծերունի:

—Մեր արտի գարեցէն է. ամի. կտեսնիս ի՞նչ գարի է, էֆֆ, Աստծու խաչը վրէն՝ կսես մատղցու դըմբոջիկ գառ ըլլի...

Եւ մի անհուն բերկրանքով շարունակեց ճանապարհը:

—Քերոբ, էդ ձեռիդ խարախարմանն *) ում արտէն է—, քիչ լետով չարաճճիութիւն արեց մի նորատի կին:

—Մեր, ում—, վիրաւորուած հպարտութեամբ պատասխանեց Քերոբը. — յունտիկ Մարջան, քեզի պէս գէր ու գընթոր է, մէկ աշէ... հալ պապամ-պապամ, մի ցորեն աժէ:

Կինը հանաքից, իսկ Քերոբն ունեցածից ժպտալով իրարից հեռացան:

Քերոբը տուն հասաւ, աւետեց գարուլաւ բոյս տալը, լաւ լոյս տալն և խաբար արեց եղբօրը, որ մի-երկու օրով իրաւունք առնի, գայ առաջիկայ շաբաթին գարին միամին հնձեն:

*) Խարախարման (հասկերից շինած խեծաղցու) շինում են միմիակն ցորենից, ոչ գարուց:

III.

Աստուածածնայ իրեն տօնի օրն էր: Թէժարել հէնց առաւօտից մարդու վիզը կճում էր ու կծում էր. նրա բոլորքը ալիքաձև շաղ տուած բակ էր բռնել. շոքն ու տօթը քանի գնում անտանելի էին դաւնում. խոտերի ոչ մի սըփսըփոց, հովի ու զեփիւռի ոչ մի շշնջիւն չէր դուրս գալիս... գիւղի դոխերն շտապով իրենց բներն էին վերադառնում. ծիծեռնակներն երամով երկրի երեսին ճախրում էին հա ճախրում, սագերը գետակից դուրս գալով, միքանի անգամ զա-զա-զա անելով, մի բանից կասես նեղուելով ու մզուելով, թևերը բաց պահած, կամ թափահարելով համախումբ առաջ էին վազում, բերանները բաց անում, կտուցներն իրենց երկար, ոլորուն վզերի հետ երկարացնում, ալոչերը թափ տալիս... շներն ու կատուները տների խորքն էին քաշում. աքաղաղը շուտ-շուտ կանգնում էր մի բարձր տեղ և կուկուլուկնու կանչում. հաւերածը կողքին ընկած փորած փոսիկների մէջ փետրին էին տալիս. իշու բարձրածալն զոոցը նախրից էր մարդու ականջին հասնում. ձիերը թմրել, ականջները լոշ-լոշ կախ էին ձգել և ծուլօրէն փոչերն էին թափ տալիս. ոչ-

խարները հօտից դուրս գալով գէսուդէն էին վազվզում...

Այդ բոլորը, բոլորը կարծես մի բանդագուշակ լինէր...

Արևի հէնց հնոցի առջև քիչ-քիչ առաջ եկաւ մի սև բան, թուխ ամսի պատառ. այդ պատառը քանի գնաց մեծացաւ ու ուռնացաւ, կոլորուեց, մէջ տեղը սևին տուեց, իսկ ափերը պսպղացրեց իբրև արծաթի երիգ. քիչ-քիչ հովը շարժուեց, կասես զովն ընկաւ գետին. ատոք հասկերով հասած արտերը ծովի նման նորից սկսեցին ալիք տալ, աջից ձախ օրորուիլ, «Հօրանց գնալ». նորից մլմլաց կանաչափալ մարմանդ դալարը...

—Տիրացն Մաթոս:

—Հրամմէ:

—Հրամանքդ բարի, էդ ամպն օր երկնքի երեսին իճաթ եղաւ (առաջ եկաւ)՝ ինձի էնպէս կթուալ, թէ լաւ ամպ չէ. մեղայ-մեղայ, մենծ խօսիլ չըլլի, Աստծուն դիմադարձութեն չըլլի, մենք վեվ ենք, օր երկնքի ու երկը երեսը քննենք, բերններս հազար հեղ հող ու մոխիր՝ հըմլ...

—Ի՞նչ հը մը, Քերոք ջան:

—Հըմլ լաւ ամպ չէ, սև է, կհասկընաս սև ինչ է:

—Կհասկընամ, հա—, ձեռը նորից ճա-
կատին դնելով երկնքին նայեց տիրացու Մա-
թոսը:

—Սև' է, բարի չէ,—տիրամած կամ
ճիշդն ասած չգիտէր ում դէմ զայրացած աւե-
լացրեց Քերոբը:

Գը՛ռռռ... լսուեց երկնքի երեսից մի չա-
րտդուշակ դժոխալին ձայն, որ բաւականին
երկար տևեց:

—Տիրացու Մաթոս, Քերոբ տատաշ (ա-
նուանակից), Բնչ, ամպին կաշէք. Խէլլը վախտ
է (բաւականին ժամանակ է) մենք էլ մտիկ
կուտանք, կտեսնինք, օր երկնքի երեսը լաւ
նշան չէ...

—Եղ անտէր գոռալը անձրեկ գոռալ չէ,
երկան քաշեց, ձէնն էլ սարթ է—, վրայ բե-
րեց երրորդ մօտեցող ընկերը:

—Ես օր Աստուածածնալ տօնն է. մենծ
կիտն (փորձանք, օրհաս) էսօր է. Հերու չէ
առջի տարին էլի էսման մի պղտի ամպ դուս
եկաւ Գէօգդաղի գլխուն, միրաթն (անտէր)
արտերս զարկեց, տարաւ...

—Աստուածածնալ տօնն ամմենքէն մենծ
կիտն է. էդ կիտէն կիմացուի մեր մեղքերի
չափը—, երկրորդ խօսողին իւր գիտութիւնը

ցոյց տալու համար պատասխանեց տիրացու
Մաթոսը:

—Եղ է, էհ—, ինչոր զայրոյթով նկա-
տեց առաջին խօսողը.— ամեն տարի մինչի էս
անտէր կիտը կհասնինք, կանցնենք՝ մերն էլ
մեզի կհասնի...

—Մի ըսէ Մուկուչ ջան, մի ըսէ, բա-
լամ:

Գը՛ռռռ... լսուեց երկրորդ աւելի երկար,
աւելի մօտ գոռոցը:

—Վաշշ, տներս աւիրելու է—, սրտում
մի ծակոց զգաց Քերոբն, ու նրա աչքերն
առաւ արտասուքը:

Կէս ժամից ամբողջ Հորիզոնը ծածկուեց
սև-սև ամպերի ահուելի շերտերով, տեղ-տեղ
էլ վիթխարի ժայռերի նման մոալ-մոխրագոյն
կուտակներով. երկրի երեսին տիրեց սգատես
ստուեր. եղանակը ցրտեց, խոնաւութիւնն
զգալի եղաւ օդի մէջ։ ծծմբալին հոտը տարա-
ծուեց չորս բոլորքը. գոռոցը քանի գնաց
սաստիացաւ և ձուկը հազար ու մի տեղից
թունաւոր օձի պէս կոտրատուելով սկսեց եր-
կընքի մի ծալրից դուրս գալ, միւսում հանգ-
չիլ...

—Եանի մենք էդ անտէր կեծվխտալուն
ինչի կանք, թէ ձուկը կխաղայ, չենք

ըսէ, թէ սև օձը դուս կուգալ բնէն, օր մարդու սիրտն աղուէ (թունաւորէ)...

— Եղման (էդ նման) մի խօսի, Մուկուչ ջան, էդման մի խօսի, Աստծուն դիմադարցութեն է. մենք վեզ ենք —, դարձեալ նկատեց տիրացու Մայուսը:

— Ե՛հ... սրտնեղած կրծքից թռցրեց Մուկուչն, ելք լսեց սայլի թափքի վրայ մի թրխկոց, տեսաւ վեր-վեր թռչող կարկտի գընդակլը —, ապա երկրորդն, երրորդը...

— Վախխ... վայ... ձունը գլխըներուս... վույ, չորնայի ես... աչքերս քուանար չտեսնէի... բարձրացաւ լաց ու շիւան:

— Մտիկ տու Քերոք, մտիկ տու, թէ Բեղեշէնու վրայ սև սներն ինչ տեսակ են կախուէ...

— Վաշա —, ծնկներին խփեց Քերոքն, երբ տեսաւ կատարուող դժոխային տեսարանը —, արտս ձեռնէս գնաց, օջաղս մարաւ...

— Աղօթք էրէք, Աստծու անունը կանչեցէք, բալքի թեզօք ետ առնի, տամարն (շերտ) ուրիշ տեղ չերթալ —, կասես ճակատագրին հնազանդ ձայնով խօսեց տիրացու Մայուսը:

— Ելի սև, էլի սով... անընիդ մեռնինք, Աստուած, եարաբ մեր մեղքն ինչ էր... հա-

ռաշելով խաչակնքեցին կանալք, որ փայլատակումից խիստ վախենում էին... եարաբ էդ անմեղ բուսը քեզի ինչ էր էրէ, օր մեր մատղներու (մանկտու) բերնի բըդուճը (պատառ) կտրեցիր:

— Վույ, արտեր ջան, վույ, քոռանալինք մենք, վույ, աչքերուս լուսը դուս գար, օր ձեզի էդ օրն ընկած չտեսնէինք... Վույ, Աստուած... մենք Քեզի ինչ էինք էրէ... քեաֆիր խոյ չես... կսկծաց կանանց սրտի ծալը:

— Աղջի Թաքուն, աղջի Վարդուն, աղջի Օքո, աղջի, ինչի էք կայնէ, գնացէք Խաչըր-կեաթը (խաչ-երկաթ) դուրս բերէք, պղընձկարգը դուս հանեցէք, օր թեզօք ետ առնի, թէզ, թէզ —, հրամալեց տան պառաւը:

Այդ ժամանակ ծըլը՝նդ հա ծըլը՝նդ լըսուեց եկեղեցու զանգակների իրար ետևից արագ-արագ տեղացող զօղանչը. ժամկոչը տէրտէրի հրամանով բարձրանալով զանգակատուն՝ ինչոր սրտի նեղութիւնից, իրեն անորոշ էր, բարկութիւնից թէ յուսահատութիւնից՝ ինչքան ուժ ունէր շտապով ջարդում, կոտրատում էր զանգերը, օր Աստծուն իմաց անի երկրին հասած նեղութիւնը, ժողովրդի լացն ու շիւանը, աղքատի վիշտն ու կսկիծը...

Ամպի երկարատև գոռոցի հետ սաստկա-

նում էր ընկուզի մեծութեամբ տեղացող կարկուտն, և անխնայ հարուածում և խոտ և ծաղիկ, և արտ և արօտ, և թուփ և մացառ... հարուածում, ջարդում, փշում, խորտակում ամեն ինչ, ոտնատակ տալիս, ոչընչացնում, հողի հետ հաւասարեցնում...

Գիւղացիները դռան շեմքի հետ կանգնած, ճտերը ծռած, լուռ, արտասուաթոր աչքերով, ամբողջովին վիշտ դառած տեսնում էին հինգ-վեց ամսուայ աշխատանքը ոչընչանալիս:

Մի ժամից երբ նրանք բարձրացան կտուրները չորս կողմը նայելու, տեսան կանաչած Բեղեշէնը ծածկուած ճերմակ, մահուան սաւանով. կասես ձիւն-ձմեռ լինէր...

— Ա՛խիս... ո՞ր ձունը տայ գլխուն գեղացին, ո՞ր ջուրն ընկնի, օր Աստուած Ել Էնոր չի կամենայ... մրմուց խելքը կորցրածի պէս Քերոբը:

— Ա՛խ, Աստուած ջան, լաւ չէրիր... հազար հեղ լաւ էր ջանին գար, մեր տղոցը գար, քան անմեղ բուսին... թաքի մեր օրական պարէնը մեր ձեռնէն չխլէիր —, լի պատրաստականութեամբ մորմոքացին կանալք:

— Հողը գլխուդ գեղացի. գիշեր աշխա-

տի, ցերեկ աշխատի, վարէ, ցանէ, աչքիդքոքը ճերմկցու, քունդ կոտրէ, օր մի կտոր չոր հաց ունենաս՝ մի սահտուայ մէջ Աստուած գլխուդ գարկէ, ձեռնէդ կառնի...

— Ե՛խի... ինչ ըսեմ... էս քանի տարի է աչք չբացինք. եա մուկ, եա դուաւ (եղեամ), եա չորայէն, եա կարկուտ... տրտնջացին միքանի գիւղացի. — էլ ինչ սրտով մարդ աշխատի...

— Ի՞նչ կարանք էնէ, ինչ կարանք... Դրեն կամքը չէ. ինչպէս կուտայ՝ էնո՞ւս էլ կառնի. Աստծու հրամանին զէմ կենալ չիլլի... Աստծու կամեցածը մեզի էս է եղէ —, այնպիսի համոզուած եղանակով նրանց նկատեց տիրացու Մաթոսը, որ կարծես արդարեւ ալդպէս էլ պիտի լինէր, որ կասես ուրիշ կերպ չէր էլ կարող լինէլ:

IV.

Անցան օրեր: Ունեորը որբեց աչքից արտասուքը, պսպղուն գերանդին առաւ ձեռը, գուրս եկաւ դաշտ, սրեց և հնձեց բնութեան պատահարից ազատ մնացած միւս արտերը: Սակայն Քերոբն և Քերոբի նմաններն էին, որ միանգամայն ամեն բանից զրկուելով, ճի-

տը ծուած, լոիկ սկսեցին արտասուել և սրտի
մորմոքով գիտել ուրիշի բաղդատորութիւնը:

Քերոբը հագնում էր իւր կարճ, մա-
շուած միակ զգեստը՝ մուշտակը, որ ամառ-
ձեռ նրա հագին էր, կեմէ գոտին վրալից պինդ
կապում էր մէջքին, մազազուրկ, հօրից ժա-
ռանգութիւն մնացած փափաղը դնում գլու-
խը, գերանդին ուսում և օրը մի դրացու
արտ իրդատ (օրական բանուոր) գնում: Որից
նա ստանում էր օրավարձ մի կոտ գարի, ո-
րից կէս կոտ ցորեն ալիւր, որից մի հոխա
աղ, և այդպիսով օրական պարէն հասցնում
իւր ընտանիքին. իսկ ո՞ր օրն իրդատ տանող
չէր լինում՝ նա գերանդին ուսած կանգնում
էր գիւղի ծալրին և սպասում հրաւիրողի:

— Քերոբ, էդ ինչք ես կալնէ—, մի օր
հարցրեց գիւղի իւզբաշին, որի անունը Պող
Յովակ էր:

— Կալնել եմ կաշեմ, թէ բալքի (գուցէ)
մէկը իրդատ տանի:

— Իրդատ:

— Հա:

— Ինչքանով կուգաս:

— Դու գիտես. ինչ կուտաս...

— Մի ջուխտ չարխցու, լրազի (յօժար)

ես:

— Ե՛հ, եղածն օրհնած է—, համաձալ-
նեց Քերոբն ու գնաց իւզբաշու ետևից:

Մի շաբաթ անց Քերոբը գնաց իւր վարձ
մի զոյգ տրեխացուն ուզելու:

Իւզբաշին երբ տեսաւ, որ Քերոբն առանց
ստանալու չի հեռանում՝ գուրս պրծաւ.

— Եդպէս է բաս, աղքամ զատօ, էդ-
պէս է... քեզպէսները մալոր լաւութենը
թէզ կմոռնան, իրենց մի ջուխտ չարխցուն
չեն մոռնայ... մի իրդատը մենծ բան էր,
հա, օր եկել դուռս կտրեցուցել ես:

— Հախս կուզեմ, ինչի կնեղենաս. մէկ
աշէ, ոտներս չարոխ չկայ—, վրալ բերեց
Քերոբն ու երեսը պնդացրեց:

Յովակը մի կտոր կաշի շպրտեց նրա ե-
րեսին և քթի տակ որոճաց. «դէ, կեցի դու...»

Քաղից յետոյ եկաւ կալոցը. ամեն մարդ
իւր ունեցածը բերեց կալը թափեց, կամին
հեծաւ, սկսեց կալը քշել, ծեծել. սակայն
Քերոբի կալը դատարկ էր. ոչ որան կար, ոչ
կամ. կալի տափը կարծես որբացած լինէր...

Ալժմ նրան էլ իրդատ տանող չկար, որ իւր
տան օրական պարէնը հալթայթէր. ամեն
մարդ իւր կալն ինքն էր ծեծում, լարդն ու
հատիկն ինքն էր ներս առնում. ում փոլթն
էր, թէ Քերոբը կալուկուտ չունի, Քերոբը

պարապ է, ուտելու հաց չունի... Այս երեւոյթը կրկնապատկեց նրա յուսահատութիւնն և ակամայ լացացնել տուեց:

— Օ՛խ-օխ-օխ, Աստուած ջան, էս օրին էլ արժանացուցիր... Հիմի բնչ էնեմ ես, դէ ըսա, Ստեղծող, Դու ըսա, ուր երթամ, ապրուստ չունիմ, ապրունաստ. ուր կորիմ... Եւ սկսեց մատները ջարդրտել, երբ յիշեց, որ Փ.-ի բարաթի ժամանակը լրանում էր, պէտք էր տոկոսը տալ, բարաթը նորոգել, եթէ ոչ կգար գլխին կրակ կիթափէր, հօր թողած պարտքը լիշոցի - ուշունցի առարկայ կդառնար. բացի այդ խիզանը մնացել էր առանց հագուստի, տկլոր, ցուրտը մինչի ոսկորներն էր անցնում... երկու-երեք տարի էր, ինչ հօր հոգու հացը չէր տուէ, տէրտէրի թաղմելան մնացել էր. եղբօրն ասաց.

Ե՞հ, Սերոբ ջան, էլ ուրուշ ճար չը-կալ, եզր պիտի ծախենք:

— Եզր ծախենք. Մարալը —, փշաքա-դուած լացեց Սերոբը. — Հապա առանց եզար բնչ էնինք...

— Էլ եզն ինչերուս է պէտք... դառն և մաղձալի ժպտաց նա, — կալ չունինք, օր ծեծենք, օրան չունինք, օր կրենք... Աս-տուած էդ հոգսէն մեկէն ազատեց, եզալ էլ

քան չմնաց... Մի սէլ խոտ կալ՝ էն էլ կովին անճախ (հազիւ) օգտէ (բաւականանալ)... Տու-նը հացի նաֆաղա (փշբանք) չկալ, Բնչ է-նենք...

— Դու գիտես, ափար ջան —, իւր ճա-կատագրին հնազանդ, հպատակօրէն եղբօրն յալտնեց Սերոբն և բռնեց Մը...ի ճանապարհը: Միքանի օրից Մարալը ծախուեց:

V.

Ճմեռը մօտենում էր: Քերոբի միակ յոյ-սը մնացել էր եղբօր վարձի մնացածը, որ մաս-մաս ստանար, տան համար ծախսէր, մին-չև տեսնէր Աստուած ինչ կտար, ինչ դուռ բաց կանէր:

Իւր մտածմունքների հետ էր Քերոբը, թէ ձմեռն ինչպէս անցկացնէր, երբ ներս ընկաւ ոտից գլուխ ծիծաղի առարկայ գեղի գզիրը.

— Քերոբ ափար, հայդէ:
— Ի՞նչ կալ —, մի անորոշ տիսրութիւն զգալով հարցըց Քերոբը:
— Մախթա (հարկ) մախթա, հայդէ —,
ու նորից վազեց գուրս:

—Մախթա՛—, քարացած կրկնեց Քերո-
բըն և ալուկանաշը կապեց նրա աչքերը:

Գող Յովակը մտրակը ձեռին (ասենք իւզ-
բաշի եղողի առաջին խրախճանքը մտրակ
բռնելն է...) առաւտից նստած օջղի գլուխը
սպասում էր Քերոբի երեալուն, որ նրան լա-
ցացնէր: Քերոբի լացը նրան հաճուք էր...
Եւ չարխցու կաշու ջիգը հանելու...

—Քերոբ, եկամ:

—Նրամանք ես:

—Դիտես մախթադ ինչքան է. օխտը մա-
նէթ իննը շայի. բե՛:

Քերոբը պատասխան չգտաւ տալու. նա-
մէջքը սիւնին դէմ տուեց և արտասուեց:

—Դէ, է, ինչ ես կալնէ:

—Ո՞րդից—, հազիւ թոթովեց Քերոբը:

—Ի՞նչ էնեմ. ինքդ էլ, գիտես օր-
թագաւորի խարճ է. ես էլ գիտեմ չունիս
հըմը՝ ձեռնէս ի՞նչ կուգալ... էգուան գլաւէն
(տանուտէր) գալու է, պիտի տամ... մի կա-
պէկ օր պակաս ըլլի՛ ես եմ պատասխանա-
տու... բե՛:

—Ո՞րդից բերեմ, ի՞նչ էնեմ... ինքն ի-
րեն խօսեց Քերոբը:

—Դէ, է, չես իմանայ—, ձայնը բար-
ձրացըց իւզբաշին:

Քերոբը դարձեալ լուռ էր:

—Մախթան. այ, թէ չէ էս ուրուշ տե-
սակ բան չէ, տղէդ անգամ ծախելու, առնե-
լու իրաւունք ունիմ... Թէզ, թէ չէ կովդ
կծախեմ:

Քերոբի կոկարդը կուչ եկաւ, և ամբողջ
մարմնի վրայով մի անախորժ սարսուռ ան-
ցաւ:

—Քերոբ, այ, կովդ կծախեմ, մախթան բե՛:
Կովի ծախուելով Քերոբի օջաղն իսպառ
կղրկուէր անասունից. մէկը չէր մնայ, որ
շունչ շնչի տար, ցուրտ գոմը տաքացնէր:
Քերոբն երեխայի պէս լաց եղաւ և մօտեցաւ
մի-երկու դրացու.

—Ա՛յ դուռ ու դրկից, ձեր տղոց սատա-
ղէն, միք թողնի տունս աւըրելու. ամեն մէ-
կըդ մի-մի մանէթ աւել վէր եկէք, մախթան
թըմմեցէք (լրացնել). հոգուս պարտքն ըլլի,
տամ. միք թողնի կովս ծախուելու...

Նա, ով Քերոբի պէս սիրտ ունէր՝ նրա
գրպանն էլ Քերոբի պէս դատարկ էր.

—Չունեմ, չունեմ, Քերոբ ջան, կարեկ-
ցում էր նա:

Խոկ նա, ով փող ունէր՝ աղքատի պէս
կարեկցող սիրտ չունէր.

— Զունեմ, չունեմ —, ստախօսում էր նա: — Մինչի երեկուն զանգերի վախտը քեզի ժամանակ, թէ չէ կովդ ետ կառնիմ կծախեմ, կիմանմա...»

Քերոբը խելսու հաւի պէս ման է գալիս դռնէզուռ դարդին դարման ճարելու, սակայն, իզնուր. գիւղում ընկածին օգնող, ընկած տեղից բարձրացնող հասարակական կազմակերպութիւն, համայնական ընկերութիւն չկայ, որ նրա դարդին դարման անէ. իսկ անհատին ուղում ես դոշադի ^{*)} տակ դիր, սեղմիր, հուպ տուր՝ ձէթ դուրս կգայ, փող չի դուրս գայ:

— Զկայ, չկայ...

Սպանիչ դանդաղութեամբ անցնում է ժամանակը Քերոբի համար. վիշտը մաշում, սպանում է նրան. յայտնի է երեկոյեան գալքը, բերանը չի գնում յայտնելու տնեցոց, արտասուքը լուսութեամբ քամում է իւր սրտի մէջ, վիշտը ներսից է ուտում նրան... գուցե ծախելու լրակն, ծախելուց յետոյ այնքան սոսկալի չէ, որքան մինչև ծտխելը...

— Օ՛հ, Եփ (երբ) պիտի անցնի ժամանակը —, յանկարծ դուրս է թռչում նրա ատամների արանքից:

^{*)} Զիթահանքի հաստ գերան, որով մղում են փոխինդը, ձէթ հանում:

Վերջապէս գալիս է նախիրը: Քերոբի կինը թեւերը վեր սոստած, պըպըզած Նաշխունի (կովի) տակ թը՛ռռ թը՛ռռ կթում է. իսկ միւս նէրը պահում է հորթը:

Քերոբը երկու ձեռը գրպանները դրած, հայեացքը տրեխների քթին յառած՝ արձանի պէս կանգնել է գոմի տափում: Նրա համար այդ միքանի ըոպէն կատարեալ դժոխք է. նրա սիրտը ահից ճաքում է, թէ ահա, ուր է ուր չէ ներս կմտնի իւզբաշին, և...

Եւ արդարեւ գոմի գուռը ճռուռկ բայց ուռմ է, ներս է մտնում Գող Յովակը:

— Հան, Քերո՞բ, գտա՞ր:

Քերոբը կարկամուած, կոշտ ձեռներով լոկ սրբում է արտասուքը...

— Զէ, ախալէր, ես չեմ կարայ էգուան (վաղը) քեզի համար գլաւու քով սկերես ըլլի, օրէնքի առաջ մեղաւոր ըլլի:

Քերոբը կոկծից ու կըքից երեսը շրջում է միւս կողմ:

— Թո՛ղ, տրմանչ (տօ-մանչ), կովը թող — օձի սառն երեսով հրամալում է նրա գզրին:

Գզիրը նոյն ծիծաղաչարժ դէմքով վազում է կովի վրայ:

— Ի՞նչ կուզես, էս վէպ է —, լաւ չիմա-

նալով բանն ինչումն է, կովի տակից քուղան
ձեռն ետ-ետ է քաշում Քերոբի կինը:

—Մեակամ (միթէ) հըլը չիտես... հա՛,
հա՛, հա՛ա... դէ կեցի ըսեմ, իմացի. էրիկդ
մախթան չկարաց տայ կովը կտանինք, օր
ծախենք, հա՛-հա՛-հա՛... ծիծաղելով կովը թո-
ղեց գեղի գզիրը:

—Վու, ինչ կխօսի, վու, քոռանալի
ես, վու, աչքիս լուսը դուս գար—, մղկտաց
Քերոբի կինը:

—Վու, էս ինչ եղաւ, վու, էս ինչ ու
օր էր... մորմոքաց փոքր նէրը:

Այդ տեսնելով Քերոբի գլուխը շշեց,
աչքերը մթնեցին:

—Կերանը—, ատամները կրճտացրեց Գող
Յովակը... դէ գնը... էդպէս մաղիղ-մաղիկ
կըերեմ...

VI.

Թարնան սկզբի գեղեցիկ օրեր էին. ա-
րեգակն իւր ջերմութեամբ կենսունակութիւն
էր ներշնչում նոր զարթած երկրին. դալա-
րած բուսականութիւնը թեթև զեփիւռի առ-
ջև օրօրուելով կարծես լափրած նրանով շըն-
չում էր. հօրոտ-մօրոտն ու մայիսի դեղին

ծաղիկը խոտերի տակից իրար «Ճիթ» անելով
նազանի կերպով ճօճում էին գլուխները. վը-
ճիտ առուակը կարկաչելով խոտերի ու թփե-
րի տակից գողտրիկ քըլքլոց էր արձակում. գը-
լանց գեղեցկութեամբ ուրախանալով վերևից
դայլալում էր արտուտն և ողջո՞ն տալիս կեն-
սաբեր արշալուսին. արօտում արածում էր
գեղջուկի ընկեր գըլաստը, հօտաղը նրա մօտ
«Նանի, ջան նանի», կամ «Զան, մարալ ջան»
էր երգում. . Ամեն արարածի համար կեանքի
նոր մէկ գարուն էր սկսուել. սակայն նոր
գարուն չէր աղքատ Քերոբի օջաղի համար...
Մարապոնց տանը ձմեռ էր... ոչինչ չկար-
Քերոբն երբ տեսնում էր, որ գարունը բա-
ցուել է, ամեն մարդ իւր ժանդոտած խոփը
պսպղացրել է, փալեցրել, որպէս պատուում է
երկրի փափուկ կուրծքը, հատիկը նրա մէջ
թաղում, իւր յոլսն էլ հետը, որ միասին ա-
ճեն ու ետ դառնան. երբ տեսնում էր, որ
արօրն ու հորովէլը հովտում ու դաշտու
իրար են խառնուել, երբ տեսնում էր, որ ին-
քը զուրկ է դրանից, ոչ մալ ունի որ վարէ,
ոչ սերմնացու ունի, որ ցանէ, ոչ կթան կով
ունի, որ խապուխաս (կաթփոխ) անէ, եւ
ու պանիր շինէ, և որ գլխաւորն էր, հաց
չունի, հաաց... սոսկումը տիրում էր ինչպէս

անտօնեան հուր նրա ջանին, մորմոքում էր, մրմռում էր, գանգատում էր, տրտնջում էր... և ոչ մի ճար չգտնելով իւր ընկած դրութիւնից բարձրանալու՝ գլուխն հեզ խոնարհած արտաստում էր...

— Զէ, չէ, զուր տեղն է մեր աշխատանքըն ու նեղանալը. առանց Աստծու բան չիլի. Աստուած օր մի անգամ չկամենայ՝ մեր արուն-քրտինք թափելը զուր է... Եւ ապա որոշում էր, որ ինքն էլ մշակ մտնէր ուրիշի դռանը, կամ որ աւելի յարմարն էր, ինչպէս մի անգամ իմացել էր Մը...ցի թուրք աղալարի միտքը...

— Սերո՞բ:

— Համմէ:

— Բալամ, մեր բանը պլծել է... էլ էս-քից ետեւ զուր է...

— Ինչի, ափար, ինչի համար...

— Ինչի... հը՛ը՛, ինչպէս ըսեմ... էնոր համար, օր ճակտներուս էս է եղէ գրած... Իրեն կամքն էնպէս է եղէ, օր մեր պապերու պէս մենք էլ մարապա պիտի դառնանք ժամանակին...

— Մարապա՞... կըկնեց Սերոբն և նրա ամբողջ մարմնով մի սոսկում անցաւ. մի բուռն փոթորիկ յուզեց սիրտը. ինչ էր ալդ փոթո-

ըիկը՝ կիրք, թէ զալրոյթ, նա չէր հասկանում, բայց լուսահատութիւնից զգում էր, որ կասես ինչոր կոիւ էր ման գալի... Ըսել է թողնելու ենք տուն, տեղ, հող, արտ... մըտնելու ենք Մը...ցի աղալարի քով տնով-տեղով ճորտ, մարապա, եսիր... առաաց գիտնալու, թէ ինչ է մեր հախը... ոչ էլ ձէն պիտի հանենք, ոչ էլ խօսինք, թէկուզ մեզի քֆրեն, տանջեն, առանց հախի դուս էնեն, ծեծեն...

— Էլ ինչ ճար ու ճամպայ ունինք... աչքերը քամեց Քերոբը. — Վեզ մեզի էլ մալ կուտայ օր լծենք, հաց կուտայ, օր ցանենք, ուտելիք էնենք... ճարը կտրած երկուսս էլ մշակ պիտի մտնինք... Ե՛, երկուսս էլ մշակ մտնինք, տնէն հեռանանք՝ տունն ում թողնինք...

Սերոբը գլուխն առաւ երկու ձեռի մէջ, կարօտակէզ աչքերով նայեց օջաղում ծխացող աթարին:

— Ճան համար էլ իտարա (անունդ) հաբկաւո՞ է, թէ չէ... Խոյ տարին տասներկուամիս չփլաղ (մերկ) պահել չիլի... էնոնք էլ մեղք են...

— Դո՞ւ գիտես, ափար ջան... ձայնեց Սերոբն և երեսը շընեց:

Սուրբ Յարութեանը, մարդկութեանը

սրտով ու կեանքով նոր մէկ գարնան հետ
զերածնութեան օրերին, երբ ամեն մարդ կար-
միր ձուռվ էր շնորհաւորում գոմէշի ճակա-
տը, որ գաշտ դուրս գայ, վարուցանք անէ,
յսւսոյ նոր գոներ բանայ՝ Մարապոնց երկու
եղբօր տան դուռն էր փակւում... նրանք
տանն ինչ որ կարծկար կոռնի սալլին էին
բառնում, որ գնային Մը... գիւղի աղալարի
դուռը մարտալա...

Երբ բոլոր իրերը բարձին, պրծան, և և
քարերով վեր շարեցին դուռն և զեր-
ջին անգամ համբուրելով շեմքն՝ ասացին.

— Մնաս բարով, հօր օջաղ...

— Մնաս բարով. թէ Աստուած ուզեց նո-
րից մալով ու դէլվթով մեր պապերու պէս
ետ կդառնանք...

Եւ սալլը քշեցին դէպի Մը...

ԳԵՂԻ ԱՂԵՆ

I.

—Ո՛վկէ, անտէր մնալ, ծնկներուս մէջ
թափ ու թաղաթ (ոլժ ու կարողութիւն) չը-
մնաց, ոտներս ջարդան իստակ խուրդ ու խուշ-
կի (ջարդ ու փշուր) եղան—, ուսին ձգած
հազարումի տեղից կարկատած շալէ չէր-
քէզը մի կողմ քարերի վրայ շպրտելով Կ...ի
ճանապարհի մօտի «Գոնով» տղբիւրի գլխին
ճանապարհի մի տարիքաւոր ծերունի և խորը հո-
գոց քաշելով չափուսը վառեց:

—Ի՞նչ է, պլէճ ամի, ինչ էղտեղ մենակ
նստել ես, քեզ ու քեզ կառնիս ու կուտաս—,
քարեւելով նրան մօտեցաւ կուժն ուսին մի
զեռահաս գիւղացի, որ գալիս էր քաղուորի
համար աղբիւրից ջուր տանելու:

—Ե՛հ, Ափին ջան, էս կեանք է, օր մենք
կքաշենք. էս մեր քաշածը կեանք չէ, պա-
տիժ է, կատարեալ պատիժ:

—Պլէճ ամի՞, եդ ի՞նչ շատ գարդլամիշ կըլլիս, ի՞նչ է պատահէ... Տու, տու զութիկդ (ծխատուվ) մի պապիրոս շինեմ. թիւթիւնս պարպել է, էսօր սաղ օրը պապակել եմ:

—Բա գարդլամիշ ըլլելու բան չէ, օր ինքս մենակ մարդ, արտերս կծղել են էնդեղ կիթափին, առաւտօտէն անօթի-ծարաւ մինչի հիմի էս շոքին-կըլակին գէշ գզելի պէս գեղերն եմ ընկէ, աղի ետևէն ման կուգամ —, դժգոհելով իւր վիճակից ծխատուվը խօսակցին տուեց Պլէճը, կամ ինչպէս կոչում էին նրան և... գիւղում Պլէճ ամին:

—Ի՞նչ, աղի քով գործ ունէիր, օր քովն էիր գնացէ —, պապիրոսը վառելով հարցըց Ա.փինը:

—Բա առանց գործի կերթալի՞:

—Ի՞նչ գործ:

—Ա.խիս, Ա.փին ջան —, նորից հառաչեց ծերունին, — էս սաղ երկու շաբաթ է ալըրներս հատել է, էսդից-էնդից փոխ հաց ուզելով եօլա կերթանք. երեսներուս ապուռ չը մնաց, էնքան օր դուռ ու դրկցի բերզեցուցինք: Գարին քաղել էի, գնացի թէ իրաւունք առնիմ ծեծելու:

—Ե՛, տռա՞ը:

—Իսկի իրեն գտալ, օր իրաւունք խընդ-

ըէի —, սրտնեղած վրայ բերեց Պլէճ ամին և չպուխը պինդ ձիգ տուեց, կարծես ուզելով բարկութիւնը նրա վրայ թափել:

—Ո՞ւր էր գնացէ օր:

—Առաւօտ կանուխ ծնկներուս հարաքեաթ տուի, էս սաղ գիւղը (տափը) կտրեցի, հասալ Ք... , թէ մի կերպ իրաւունք ընդրեմ. երթամ իմանամ, օր երթլէս մի սահաթ առաջ գնացնլ է Թիֆլիս. էսպէս գտալը-գտարտակ ետ կուգամ:

—Ե լաւ, ինչի՞ սուբաշուն *) չխնդրեցիր, բալքի (գուցէ) հրաման՝ կուտար:

—Նըննն —, դառն ժպիտ փայլեց Պլէճ ամու դէմքին:

—Ինչի՞ կինդաս:

—Խնդալու բան միտքս ընկաւ՝ կինդամ:

—Եանի (ալսինքն):

—Ըսի «իրաւունք տու գարիս բերեմ ծեծեմ», կայնել է կսէ, թէ «Պլէճ, գիտե՞ս, ազէն քեզի վրայ շատ հեռսոտ է... հիմի էլ եկեղէն քեզի վրայ շատ հեռսոտ է... հիմի էլ եկեղէն քարին ծեծելու իրաւունք կխնդրես. ջուրը վրէդ է»... Հարցուցի, «Ի՞նչ ջուր». թէ «մի մողի վեշկեաշ բե»...

—Նուն է, է, օսկու կուզէ, օր կոծէ...

—Եդ օր չիմացայ՝ էման հէսսս ելու,

*) Տասանորդ հաւաքող:

օր քիչ մնաց քովիս կույոտ ցախաւելն առնելի քթին-բերնին տայի. մէկ էլ ըսի, «նաւը լաթ քեզի սատանայ». հըմը էլի սիրտս չդիմացաւ.

— «Աշը ինքդ մոզի ես ու կաս, ըսի. էլ մոզին ինչ պիտի էնես... Մոզի ունենամ կտանիմ, կծախսեմ, դարդերս հոգամ. էլ քու դուռը ինչի կուգամ, կչոքիմ...

— Հայ լաւ ես էրէ՛:

— Էդ օր չսի՝ կեցած տեղը կըակ կըտրաւ. տեսաւ օր չիլլի՛ դարձաւ, թէ «ես քեզի փորձելու համար ըսի, թէ տեսնիմ ինչ կըսես, աղէն խիստ հրաման է տուէ, օր մինչի իրեն գալը օնչով (ոչոք) օրանը (որան) տեղէն ժաժ չտար», չիլլի՛:

— Եաւաշ, էլլի՛ էդ անաստուածն ամեն տարուայ շնութենը ձեռք է առէ, չի թողնի, օր Փախր-Փուխարէն իրեն հալալ քրտինքով ձեռք բերածը կալը բերէ թափէ, ծեծէ, ու օրը ճերմակ էնէ...

— Դէ կէնէ, էլի. ինչ պիտի էնես, քարըն էլ իրեն ձեռքն է, կակալն էլ:

— Սատկին աղա ըստածներդ, բոլորը մէտեղ սատկին, օր Փախր-Փուխարի արունը սիւլիւկի (տղրուկ) ալու չծծեն—, զալորովով

վրայ քերեց Ափինն ու կուժը դրեց աղբեւրի տակ:

— Գիտես ինչ կայ—, խորհրդաւոր եղանակով դէպի Ափինը ծռուեց Պլէճ ամին:

— Ի՞նչ է:

— Եստեղ մեղքն էնքան աղեստանցը չէ՝ ինչքան էն մարդոցը, օր հողը յոահաթի (ժողովրդի) ձեռնէն տոել, աղեստանցն են տուէ, մեզ էլ էս օրն են ցքէ...

— Օնչինչ (ոչինչ) չէի ուզէ, Պլէճ ամին, էն գիտնական մարդոցէն մէկն ու մէկը գար, մի-երկու ամիս մեր մէջը կենար, օր իմանար թէ մեր քաշածն ինչ է. էլ հըլլը չեմ ըսէ էնքան յոշվատն (կաշառք) ու շտրաֆը..., օր հասկանար մեր դրութենը:

— Ախ, մի ըսէ Ափին ջան, մի ըսէ, գոնէ դարդերս մի նորոգէ—. խորը ախ քաշեց Պլէճ ամին. — Հետը կուգամ, հետն էլ հալ ու մաշ կըլլիմ, թէ ինչ էնես, ինչոքէս կընկանս երես ենիմ. էս մի շաբաթ է առաւօտիրիկուն կոէ, թէ «ուտելիք չունինք, ուտելիքի պատրաստութեն տես» «լաւ կըլլի, լաւ կըլլի» ըսելով մինչի օրս հասուցի, թէ գարին ծեծեմ, հաց հասցնեմ. ումուտս (յուս) էդ էր, էդ էլ էդպէս եղաւ:

«Նրանք երկուքն էլ առժամանակ լու-

ցին. Նրանց երկսին միացնողը միևնույն վիշտըն էր, որ մտածել էր տալիս միևնույն նիւթի մասին: Պլէճ ամին պնչերից ծխի քուլաներն ամպի նման օդի մէջ թողնելով անսպասելի կերպով տաքացած խօսեց.

—Սատանէն կսէ, թէ էգուց և եթ սէլդ էծէ, գնը օրանդ բե, կալը թափէ, ծեծէ, զերջն ի՞նչ կուզէ ըլլի, թաքի էս նեղ օրերն անցնին:

—Լաւ կըսես հըմը, Պլէճ ամի, դու չիտես, թէ էդ մարդն ինչ անաստուածն է. միտքդ չէ, մի տարի իրեն կամքին հակառակ մտանք չայերը քաղեցինք՝ քանի հազար մանէթ շարաֆ առաւ. Էլի էն անհոգին է. էդպէս բան մի էնէ:

—Լաւ կսես, Ափին ջան, չէնեմ, չէնեմ հըմը, դու ինձի ճամպալ խրատ տո՛ւ, թէ ի՞նչ էնեմ, գլուխս որ քարին տամ, որ ջուրն ընկնիմ... ձեռքս նազդ փարա չկալ, թէ երթամ մի տեղէ երկու կոտ գարի առնիմ. է, գեղի մէջն էլ էնպէս մէկը չկալ, թէ մի-երկու կոտ հաց փոխ տալ, էս սև օրերս անցնեմ, մինչի կալուկտի ընկնիլը... էնտեղ կնիկս ու տղէքըս անօթի նստած հաց կուզեն... դէ, ես ի՞նչ էնեմ... կսես «մի էնէ», ես որ ձունը տամ գլխուս... ախ-ախ-ախ, սկսակ էսպէս կետն-

քը—, հառաչեց Պլէճ ամին և տամուկ աչքերը շրջեց միւս կողմը, որ խօսակիցն արտասուքը չտեսնէր:

Ափինը լիովին մտաւ նրա գրութեան մէջ. Նրան օտար չէր այդ գրութիւնը, քանի որ ինքն էլ միևնույն վշտով համակուող գիւղացին էր, միևնույն բովում տանջուած գրացին. յիշելով, որ իրենց տան ալիւրը գեռ բաւական կտար իրենց, եթէ մի-երկու կոտ փոխ տային Պլէճին՝ ասաց.

—Պլէճ ամի:

—Հաջան:

—Իրեկունս արի, տեսնիմ, հօրս ըսեմ, բալքի (գուցէ) մի-երկու կոտ գարի ալուր կարտանանք տայ. տար, միքանի օր եօլա գնը՝ մինչի էն անաստուածի գալը. թէ չէ առանց հիամի օր բերես ծեծես՝ մեղք ես, կրակը կընկնիս:

Այդ խոստումն տինքան ուրախացրեց Պլէճ ամուն, որ կարծես դարդն ու յոգնածութիւնն իսպառ մոռացաւ. ուրախութիւնից պառկեց աղբիւրի վրայ, սառը ջրից կուշտ խըմեց, և ապա մնաս-բարով աւելով իւր խօսակ ցին՝ ուսեց չէրքէզն ու բոնեց գեղի ճամպէն:

II.

Անց կացաւ հինգ, վեց... տասն օր. գեղի աղէն գեռ չեր վերադարձել թէֆլիսից. Պլէճ ամոնց փոխ առած գարի ալիւրը վաղուց է հատել էր: Հիւսնին, Պլէճ ամու կինը քանի օր էր դրացիներից էլի մուրալով-կուրալով էր հաց հասցնում: Նրան քանի տեղից մերժել էին ասելով, թէ «ուզելը մէկ կըլի, երկուս կըլի, Աստուած տալ, չունինք», «երես էին դառուցէ». «դանակը ոսկորին էր հասէ»... բայց ամօթով և մարդու վշտին վըշտակից կինը գեռ էլի մի կերպ քաշքառմ էր, եօլա էր տանում, մարդուն ոչինչ չեր ասում, սպասելով, թէ «էսօր չէ, էգուց աղէն կուգայ». բայց աղէն չեր երևում. արդէն անցել էր երկու շաբաթ, որ նա ուշանում էր:

Մի երեկոյ Պլէճ ամին արտից վերադառնալով գերանդին օճոռքից կախ արեց, փոցին ու եղանը դրեց բակն ու մտաւ թոնրատուն: Հիւսնին տիրամած և վիրաւոր սրտով նստած էր: Պլէճ ամին նկատեց ալդ, բայց ոչինչ չխօսեց և ոտքերը հանելով ներս կախուեց թռոն տաքանալու:

Հիւսնին կտմաց-կտմաց սկսեց հեկեկալ և

և այլ ևս չկարողանալով պահել փուլ եկած սիրտը՝ խօսեց.

— Քա մարդ Աստծու, սէրը Քրիստոսին, մի քիչ էլ ինձի խղճա. մինչի ե՞փ պիտի էս-պէս տանջուիմ... էլ չեմ կարայ. համբերէ. հոգիս էս տեղս հասաւ... ահան, էս իրիկուն ուտելու բրդուճ հաց չկալ. քանի գուռ գնացի՝ չիքը դրել են. վերջը գնացի Վերի-մայլէն (թաղ), թէ Մարդենցէն ուզեմ. էն լիրը հարսը գուրս եկաւ, թէ «չունինք, չունինք. ինչ շատ զահլա կտանիք. էսօր ձերը պարպել է եկել էք մեզնէն կուզէք, էգուան մերն պել է եկել էք մեզնէն կուզէք, էգուան մերն օր պարպի՝ ումէն ուզենք. գնը՝, չունինք...» ամօթուս ըսի «գետին, պատոի, մէջդ մտնիմ, էդ խօսքերն անկճներս չիմանան»... Կարմիր-կոսնանչն աչքերս կտպեց. էլ չիտեմ, թէ ինչ-պէս խելառ հաւի պէս եկել տուն եմ ընկէ», վերչացընց նա և նորից սկսեց հեկեկալ:

Պլէճ ամին գնդակահարի պէս լսեց ալդ խօսքերը, ծպտուն չհանեց, այլ միայն իւր մաշող վշտի հետ դառն հոգոց քաշեց.

— Ի՞նչ օր է մեր քաշածն, Ատեղծող Աստուած, օր աւուր հացի էլ կարօտ ենք մնացէ... ապա էլ ինչչի համար ես մեզի ստեղծէ, օր ծնած օրերէս մինչի գերեզման մըտ-

նիլներս աղքտութենով ու անօթութենով ենք
անցնելու... եարաբ մեր մեղքն ինչ է...

— Ունհ, բան չեմ ըսէ. ինչ օր օր աղքատ
չունեռին ցուց կուտայ՝ մէկ օր էլ ինքըն
ընկնի, օր գիտնալ, թէ ինչ բան է նեղութենը... ունհ, անընիդ մեռնիմ, Աստուած,
էլ ո՞ր օրուան ես պահէ դատաստանդ. դէ,
դատաստան տես, էլի, օր էս մի ամիս է տը-
դոցս անօթի ման կածէ—, անիծեց Հիւսնին
և սկսեց լաց լինել:

Մօր հետ սկսեցին լաց լինել և նրա որ-
դեքը. նրանք խորն զգում էին իրենց ծնող-
ներին պատճառող դառը վիշտն, և ալդ վը-
տով աւելի էին տանջւում, քան իրենց անց-
կացրած քաղցած-ձարաւ սև օրերով:

Ալդ մեռելատան նմանութիւն բերող տե-
սարանը կալծակի նման շանթեց Պլէճ ամուն.
Նա մի դառն ճնշում, մի ամօթահար նախատինք
զգաց, որ ինքը տանտէր, տղամարդ լինելով՝
չէր կարողացել իւր տունն ու տեղն այնպիսի
նախանձելի վիճակի հասցնել, որ կինն ու որ-
դիները սև օրեր չտեսնելով իրենց վիճակից
գոհ լինէին. նրանց արտասուքն ու հեկեկան-
քը մի անուանարկող յանդիմանութիւն հա-
մարեց իրեն տղամարդութեան. տեղից շար-
ժուեց նրա ընկճուած, լոռող հոգին, փոխեց

նրա լթացած, իւր դրութեան հետ վաղուց
հաշտուած զգացմունքն և խօսեցնել տուեց.

— Ես տղամարդ չըլլիմ, գլխուս կնիկ-
մարդու լաչակ ունենամ ծածկած, թէ էգուան
և եթ սէլը չլծեմ, արտը չերթամ, օրանը չը-
բերեմ, կալը չթափեմ, չծեծեմ, քսանըչորս
սահթուալ մէջ տղոցս հաց չհասցնեմ, ես
տղամարդ չըլլիմ... Ինչքոն օր լուռ կեցալ,
տարայ, հերիք է... Ոչ էն իրաւունք կուտայ,
օր հայալ քրտնքով վաստըկածդ բերես ծեծես,
ոչ էլ դրացին աւելորդ ունի օր տալ... ես էլ
ուր երթամ... համբերութենը վերջ ունի.
Էս օրէն էլ նեղ օր... հիմի «ո՛ր տեղէն բա-
րակ է, թող էն տեղէն կտրի», բաւական է...
Հազար հեղ լաւ է ամսներով նաբախտ (բանդ)
նստիմ, քան թէ տղոցս էդպէս մաղիկ-մաղիկ
գալով առաջս տեսնիմ —, ասաց նա, խելա-
գարի պէս վեր թռաւ տեղից, գլխարկը գցեց
գետին, երկու ոտով կանգնեց վրէն, ձեռը
դէպի առաստաղը պարզեց ու աղաղակեց. —
Նամուս, էէլ, գետինը մտի, գետինը, օր էն-
քան տղամարդութեն չունիս աշխրքի երեսը
տուն ու տեղ պահելու, մանր ու խոշոր մե-
ծընելու... թէ չէիր կարալ օղուշաղ (կին)
ու տղայ պահէ՝ հապա էլ ինչի պատճառ
գարձար էլօղլու (ուրիշի) աղջկան, էսքան

մանրուխոշոր վաստըկեցիր, էսքանի մեռքի
տակն ընկար...

Կիսն ու որդիքը ապշած, լուռ դիտում
էին նրա արարքն ու մնում զարմացած, եր-
կիւղած:

Պլէճ ամին մօտ վաթսուն տարեկան
«ծանր կեցող, լիտը եկող» մարդ էր, այդ ա-
ռաջին անգամն էր, որ ալդպիսի բան էր ա-
նում:

— Քա մարդ, ի՞նչ եղաւ քեզի, վուկ, քո-
ռանամ ես, խոլ բան-ման չպատահաւ, նը-
րան մօտենալով երկիւղը սրտում խօսեց Հիւս-
նին և ուզեց հանգստացնել:

— Թէզ, թէզ, տեղս հազըէ (պատրաս-
տէ) պառկիմ քնելու, առաւօտ կանուխ վեր
եմ կենալու, օրնի եմ երթալու, օնչինչ չէ
պատահէ, թէզ—, հրամալեց նա և առանց
մտածելու ապագալի, հետեանքի մասին, այն-
քան որ յուզուած էր նրա հոգին, պառկեց
քնելու:

III

Եւ միւս օր առաւօտեան վաղ, ծէգը-ծէ-
գին Պլէճ ամին որանի սալլը բարձած ճը՛ռռ-
ճը՛ռռ գարին բերեց կալը թափեց, կալ ա-

ըեց, երկու կամ լծեց, մէկին ինքը հեծաւ,
միւսին Հիւսնիին հեծցըեց, ճիսլոտն առաւ
ձեռը, հաւար-հաւար քշեց, մի քանի անգամ
կալի երեսը շուռ տուեց, ծեծեց, մինչև երեկոյ
թիու գցեց, լաւ մանրեց, արեւ մայր չմտած
կապտոնը լծեց, կալը քաշեց, թեղ արեց,
հինգ մատնանի հոսելին առաւ ձեռը, թեղի
գլխին կանգնեց, քամուն տուեց, քամեց, էրնեց,
հատը յարգից ջոկեց, թէճը հանեց, պստի՝ թէ-
ճի — թին առաւ, գարին էրնեց, մղիկն ու կըռ-
ճոնը, ծանծն ու տկիչքը ջոկեց ու կնոշն ա-
սաց.

— Դէ, Հիւսնի, էլ մի աշէ, ժամանակ
չկալ, օրը գիշեր դարձաւ. խախալը *) բէ,
մաղէ, հազըէ, մինչի ես երթամ...

— Ուր—, վրայ բերեց կինը:

— Ուր—, մեքենայաբար կրկնեց Պլէճ .
ամին և կանգ առաւ. այդ վայրկեանին ամեն
ինչ ծանրացաւ նրա սրտին ու ուզեղին. նա
այժմ հասել էր այն կնճռոտ տեղին, որ նրան
խեղդում էր և որից հարկաւոր էր անցնել. դա
առանց իրաւունքի բերելու, ծեծելու խնդիրն
էր. նրա մտքերը խառնուեցին. նա չիմացաւ
ինչ անէր, ինչ ասէր. նայեց դէպի միւս կոդ-

*) Մաղի տեսակ:

մըն և տեսաւ, որ լամբ քայլերով դէպի իրեն
էին գալիս երկու գիւղացի։ Նրանց մօտենալը
կասես փոքր ինչ հանգստացրեց նրան. նա
կարծես նրանց կողմից ինչոր օգնութիւն
յուսաց։

—Ազողում, Պլէճ ամի, բարաքեաւոր
ըլլի։

—Աստծու բարիշն, տղէք ջան—, նը-
րանց ողջոյնն ընդունեց Պլէճը. —բարաքեաթը
տներէդ անպակաս ըլլի։

—Լաւ շուտօք կալ ես ցքէ. քաղդ պըլ-
ծել ես, ինչ է—, հարցրին մօտ եկողները։

—Ապա ինչ էնէի. ուտելու հաց չու-
նինք, մնացել էի անճար։

—Լաւ իրաւունք տուել է—, հարցրին
դբացիները հետաքրքրուելով։

Պլէճ ամին կասես մի վայրկեան կաշ-
կանդուեց պատասխան տալու. դրացիները
նրա դանդաղելուց կասկածելով հարցրին.

—Չլլի՞ առանց հրամանի ես բերէ։
—Հա՛, ախալէր, առանց հրաման առնե-
լու եմ բերէ...

—Լաւ բան չես էրէ, Պլէճ ամի—, գր-
լուխները շարժեցին նրանք։

—Ես էլ գիտեմ, օր լաւ բան չեմ էրէ՝
հըմը ախալէր, ինչ էնէի, որ ջուրն ընկնէի...

ախըր դուք մենակ կսէք, թէ լաւ բան չես
էրէ, ախըր տունս ուտելու բրդուժ
հաց չկայ, անօթի մնացել ենք, էլ
ուրուշ ինչ ճար ունէի... էսպէս դրու-
թան մէջ ինչի՞ պէտք է ունեցած
չբերեմ, չծեծեմ, հաց հասցնեմ—,
կասես մի նոր գիւտ արած պատասխանեց նա,
մարմին և արիւն գարձրած այն միտքը, թէ
երբ ուտելու հաց չունիմ իրաւունք ունիմ
իմ աշխատածս բերելու, ծեծելու, հաց հաս-
ցնելու. և ոչ մի օրէնք չի կարող մեղադրել
այդ ամենաանհրաժեշտ կարիքի հոգացումը։

—Ա՛խ, Պլէճ ամի, կսես թէ մենք էդ
բանը չիտենք, գիտես թէ մենակ դու ես, օր
նեղութան մէջ ես. սազ գեղը քու օրիդ է,
հըմը օր էնպէս մի շան ձեռք ենք, օր մէկի
տեղ վերջը տասը կհանէ, քթերէս մազ
կանցընէ...»

—Կենէ՝ մենք էլ գանգատ կուտանք,
մինչի թագաւորի անկաչը կցքենք էս մեր քա-
շած զուլումները (զըկանք) ... Ախըր էս ինչ
օրէնք է, օր մտրդ իրեն հալալ աշխատանքի
տէրը չէ... ինչ օրէնք է, օր ամսներով ա-
նօթի պիտի սպասենք, թէ բոլոր քաղը վեր-
ջանայ, օր նոր աղի քէֆն ըլլի, գայ մեզի
հրաման տայ... ինչի՞ պիտի էդպէս ըլլի...

— Եղ բոլորը լաւ կսես, Պլէճ ամի, շատ
լաւ կսես, հըմը օր օնչինչ չենք կարայ էնէ.
միտքդ չէ, հերու կանցոնք էլ քեզի պէս մի-
երկու սէլ գարի առանց հրամանի բերին, ծե-
ծեցին՝ եկաւ սաղ թէճը ձեռներէն խլեց. չես
իմացէ Ալէքի տղի բանը, օր էլի առանց հրա-
մանի բերել, ծեծել էր՝ մէկին հինգ շրավ
առաւ... Զեռներէս ի՞նչ կուգայ, ըսա՛... ի՞նչ
ճար ունինք... էլի սիտի համբերենք:

— Զէ՛, չէ՛ —, լանկարծ, արիացած աղա-
ղակեց Պլէճ ամին, — Համբերելը մէկ կըլլի.
մինչի եփ համբերենք. հիմրկուց դէնն ինչ
օր ձեռներէս կուգայ՝ պիտի էնենք. եա (կամ)
ազատինք, եա լժէ չէ մէկէն կեանքերուս
վերջ տանք, պրծինք, հոգեստանքս ազա-
տենք... Հերիք է ինչքան օր համբերել ենք.
էսքան մարդը ինչի՞ պիտի մի մար-
դու եսիր (գերի) ըլլի. ի՞նչ, աղա ըսա-
ծըդ մեզի պէս մարդ չէ. էնիկ խոյ եր-
կու գլխանի չէ: Համբերել հըմը, անօթի էլ
համբերել չելլի...

— Ա՛խ, Պլէճ ամի, ամեն մի խօսքդ մի
օսկի է, հըմը բանն էղ տեսակ չէ, է...

— Եղ տեսակ չէ, էղ տեսակ պիտի ըլլի.
այ, հիմի կերթամ իւզբաշուն կանչելու, օր

գայ, գարին քովը չափեմ; ետև ջաղացը տա-
նիմ...

— Ե լաւ. վերջը:

— Տօ, հալա ես իմ ձեռնէս եկածը կէ-
նեմ, ետև ինչ կուզէ թող ըլլի... աղաղակեց
նա և ուզզուեց դէպի իւզբաշուն տուն:

— Պլէճ ամի, այ Պլէճ ամի —, գոռացին
նրա ետևից դրացիները:

— Հէ՛:

— Սպասէ:

— Ի՞նչ է:

— Սպասէ, բան ունինք ըսելու:

— Ես բան-ման չիտեմ —, իրեն կորցրա-
ծի պէս բղաւեց նա:

— Ա՛յ մարդ, սպասէ, մի երկու խօսք է,
ըսենք, էլի գնը:

— Լաւ, ըսէք տեսնիմ ի՞նչ է —, կատա-
զութիւնը փոքր ինչ զսպելով կանգ առաւ
նա:

— Արի կըլլի, քեզի մի բան կսենք, ան-
կա՞ էրա:

— Ըսէք տեսնեմ ի՞նչ է:

— Խեղճ մարդ ես, վերջը ոտով գլխով
կըակը կընկնիս՝ մեղք ես:

— Եղ իմացայ, ետև՝:

— Մի չարանա, գնը տէրտէրի քով,

ինդրէ՛, աղաչէ՛, քահանայ մարդ է, հետդտար սուբաշու քով, բաւքի համոզես, բերես չափէ, թէ չէ...

— Զէ՛, չէ՛ —, ինքն իրեն կորցնելով յանկարծ գոռաց նա, — ես էլ օնչովի ինդրելու չեմ, ինչքան օր խնդրել եմ՝ հերիք է —, և շտապեց դէպի գիւղ:

IV.

Պլէճ ամին նոր էր ծռուել փողոցի անկիւնը, որ հեռուից ուստաւ մի սև սուրուլիկ փափաղ. ճանաչեց նա այդ փափաղը. երկիւղըն անմիջապէս տիրեց նրան. — Հայ վախհայ, ինչ գէշ ժամանակ ռաստ եկաւ (պատահիլ) —, շշնչաց նա. նրա ճռները դող ընկաւ և այլ ևս չկարաց առաջ գնալ: Այդ սև փափաղը գեղի աղինն էր. նրա երևալն այնքան անսպասելի էր, որ կասես գետնի միջէն բըսաւ: Դեռ Պլէճ ամին իւր երկիւղի մէջ էր, որ նրա առաջ կանգնեց գեղի արէն: Աղի հետ գալիս էին երեք-չորս սուբաշի, իւրաքանչիւրի ուսին մի ջուալ: Պլէճ ամու երկիւղըն աւելի սաստկացաւ, երբ տեսաւ ջուալներն և հասկացաւ թէ ինչու համար էին էնդոնք:

— Ես ուր կերթաս —, ժանգոտած դէմքով հարցրեց նա:

— Պլէճ ամին հազիւ տիրապետելով իրեն խօսեց,

— Իւզբաշու ետեւէն:

— Ինչի՞:

— Բերեմ, օր հացը քովը չափեմ:

— Զափես, հա. դէ արի ես քեզի հացը չափել խրատ տամ —, սպառնաց աղէն և շարժուեց դէպի կալը:

Պլէճ ամին ակտմոյ, դող-դող քալերով հետեւեց նրան: Նանապարհին նա որքան աշխատեց արիանտ, վերանորոգել իւր առաջուայ անվեհերութիւնն ու տրամադրութիւնը՝ սակալն իզնուր, սև փափաղը ջարդուվը շուր էր արել նրա հոգեկան բոլոր քաջութիւնը:

— Ես ինչ գարի է —, թէճի գլխին կանգնելով թունալի հարց տուեց գեղի աղէն:

— Կտեսնիս, աղա ջան, էլ ինչ ըսեմ:

— Ես որ տեղի գարին է:

— Հոտեմազ երկու սէլ գարի ունէի քաղած, մի սէլը բերի, ծեծեցի:

— Բերիր ծեծեցիր, հա, հարամզադա... իրաւոնք...

— Ինչ էնեմ աղս՝ ջան, էս մի ամիս է

անհաց նստել ենք. տեսայ օր շատ ուշացաւ,
գնացի բերի. ներող եղի - , աղերսանքով թո-
թովեց նա:

—Ես օր ամեն մարդ իրեն ուզածի պէս
երթալ, առանց հրամանի բերէ, ծեծէ, ուր
կհասնի, համ, ըսա:

—Ե՛ ինչ էնէի, խոյ անօթի նստիլ չել-
լի. թէ չես ուզէ, օր առանց հրամանի բե-
րենք՝ գեղը կեցի, իրաւունք տու:

—Դու գեռ կհամարձակուիս իմ դէմ էդ-
պէս պատասխան տալ, համ, նզովուած... և
ինչպէս մի լետին սրիկայ այնպէս բարձր և
անսամօթ հայհոյեց գեղի աղէն, որ գետինը
ոտքերի տակ ժամ եկաւ:

Աղի այդ կինտօյավարի հայհոյանքն այն-
պէս ծանր ազդեց Պլէճ ամու սրտին, որ նրա
մէջ վերստին ամեն բան շուռ եկաւ:

—Ի՞նչ օր ճշմարիտն է՝ ին կխօսիմ, ին-
չի կքըֆրդես—, այս անդամ հպարտութեամբ
խօսեց նա:

—Դէ որ էդպէս է, ես քու թէճդ կտա-
նիմ, գու գնը ճշմարիտը խօսի:

Խլել Պլէճ ամու ամբողջ թէճը, զրկել
նրան միակ լոյսից և նորից շաբաթներով մատ-
նել քաղցածութեան նրա բազմանդամ գեր-

գտաստանին՝ գա նրա համար կատալեալ մահ
էր:

Այդ լսելով նրա գլուխը պտուտ եկաւ,
և կատաղութեան գագաթնակէտին հասած՝
գոռաց.

—Ինչի, ի՞նչ իրաւունքով:

—Ե՞ն իրաւունքով, օր առանց հրամա-
նի բերել ծեծել ես:

—Առանց հրամանի եմ բերէ՝ օրէնք կայ,
դատաստան կայ՝ գնը՝ գանգատ:

—Դու ինչի չգնացիր գանգատ, օր իրա-
ւունք չտուի, համ, հարամզադա. ինչպէս օր
գու առանց իրաւունքի գնացիր բերիր. էն-
պէս էլ ես առանց իրաւունքի կտանիմ. ին-
քըդ գնը գանգատ: Զվլները լցէք —, դա-
ռաւ նա սուբաշիներին:

Հիւսնին, որ դառնութեան մէջ թաթա-
խուած լսում էր այդ սոսկալի անիրաւութիւ-
նը և ոչ մի միջոց չունէր, որ պաշտպանէր՝
պառկեց թէճի վրայ, ուզելով մարմնով պա-
հել օրական պարէնն, և սկսեց մաքառել գա-
րին չափող այն սուբաշու հետ, որ մողին
չստանալու ջիգը հանելուն վաղուց էր սպա-
սում:

Այդ տեսնելով Պլէճ ամին գժուածի նը-

ման շարժուեց դէպի սուբաշին և դէն շպըրտեց նրան:

— Դու, քոփակ, դեռ կհամարձակուիս չթողնիլ, համարձակուիս ամպի պէս որոտաց գեղի աղէն, որ այդ աղքատ գեղացին, որի նմաններն իրեն առաջ միշտ ոտի տակի ճիճու են համարուել՝ այժմ գլուխ էր բարձրացրել և հակառակութիւն էր ցոյց տալիս. ու որքան ոյժը պատում էր՝ բռունցքով հարուածեց նրա գլխին:

Պէճը հուժկու հարուածից շշմեց, վայր ընկաւ. սակայն կատաղութիւնը վերջին ծայրայեղութեան հասած՝ հաւաքեց ոյժերը, վեր թռաւ ընկած տեղից և խլելով կողքին պատահած թէճի թին, կոթով այնպիսի մի ուսախառն հարուած իշեցրեց նրա գլխին, որ աղէն շշմեց, աչքերը պէճին-պէճին տուին, ետ-ետ գնաց և վայր ընկաւ. սակայն իսկոյն վեր թռչելով տեղից աղաղակեց.

— Զարդեցէ՛ք էդոր, ես պատասխան կուտամ—, ու ընկաւ բոլոր մարմնով ծերունու վրայ:

Պէճը դեռ դէս ու դէն հարուածելով պաշտպանում էր. բայց վրայ թափուած սուբաշիները գցելով նրան ոտքերի տակ՝ այնպիսի անողորմ հարուածներ սկսեցին տե-

ղացնել գլխին ու թիկունքին, որ ուժասպառ ծերունին ուշագնաց եղաւ և ինչպէս դիակ մնաց նրա ոտքերի տակ:

— Վու, մարդ ջան, վույ, քոռանամ ես. վույ, չորանամ ես, էդ ինչ օրը ցքին քեզի, վույ, Աստուած, վույ, Երկինք, վույ, անհոգի անսաստուածներ, վույ, վույ... մէջ ընկաւ կինըն ու ուզեց խլել նրանց ձեռից ամուսնուն:

— Դու է՛լ կուզես, համարձակ պէ կե, պէ կե, օր էրկադ հետ հաւսըրիս, պէ կե, պէ կե, ընհ—, աչք ու երես չնայելով նրան ևս մտրակեց գեղի աղէն և հազիւ փոքր ինչ յագուրդ աշալով իւր կատաղի կրքին՝ աղաղակեց.

— Ես սհաթիս գլաւուն (տանուտէր) կանչեցէք:

Աշխարհ բռնող աղաղակի, մտրակի շըլիկոցի, անլսելի հայհոյանքների աղմուկի վրայ կալը թափուեցան Պէճ ամու որդիները, որ կար էին վերադարձել քաղից, նրանց հետ և միքանի գիւղացի:

— Վույ, ամի ջան, էդ ինչ բերին գլուխը, վույ, վույ, մարիկ ջան, էդ ինչ բան է... վույ, Աստուած ջան, էս ինչ սև օր է...

հաւի ճիւերի պէս ծնողների վրայ թափուեցան որդիները:

Դրացիները դէն մղելով սուբաշիներին հազիւ խլեցին կիսամեռ դիակն և ուշքի բերելու համար սկսեցին շինել նրան, ձգել ականջներից, ցնցել տմբողջ մարմինը:

Հասաւ գլաւէնս նրա դէմքը փալում էր ուրախութեան ժպիտով, որ նորից դէպք էր եղել գրպանը պարարտացնելու... անմեղի արտասուքով: Դա այն գլաւան էր, որի ագահ կաշառակերութեան մասին հետևեալ անեկդոտն էր կազմուած.

«Գլաւա աղա, հրամմէ երթանք մկիտան մի ստաքան յրախի անուշ էրա: — Նոր հակալ եմ. յրախուն տալուն՝ էդ փարէն էլ ինձի տուէք»:

— Էս իմ պատռած գլուխս, էս արունը, որ վրէս կաս-կարմիր ներկել է, էս եմ իմ սինուիս (կալուած) գարին, օր բերել առանց հրամանի ծեծել է... Էս սահաթիս պրտակոլ գրէ, կապէ նարախտ դի, օր էգուց կապած քաղաք եմ տանելու:

Հազիւ էր ուշքի եկել Պլէճ ամին, օր սկսեցին նրա կոներն ամուր կապկապել:

— Վույ, աղա ջան, վույ, գլաւա ջան, ես ձեր ոտքի տակի հողն ըլլիմ, վույ, ես ձեր

դուայ շունն ըլլիմ, վույ, էլ ի՞նչ ըսեմ, մեզի սաղ-սաղ միք սըպանէ, էսքան մանրուխոշորիս խղճացէք, վույ, միք էնէ, նաչարիս միք կապէ, միք տանի... տարէք, տարէք, ի՞նչ օր կուզէք՝ տարէք, բոլոր ունեցածներս ձեզի ըլլի, թաքի անձարիս թողէք, վույ, ես էն ձեր ոտքի տակը պագնեմ... նրանց ոտքերին փարուելով աղերսեց Հիւնիւ:

— Առջեւէս կ'ըրի լիրբ, թէ չէ էս հէռսիս հատաղէն (բարկութեան ժամանակ) բզիկ-բզիկ կէնեմ —, աքացիով նրա կրծքին խփելով ճչաց գեղի աղէն:

Իզուր էին դրացիների միջամտութիւնն ու աղերսանքն, իզուր էին Պլէճ ամու կնոջ որդիների ողբեն ու արտասուքը. գեղի աղեն կապել տուեց ծերունուն և բանդ ուղարկեց, իսկ գարին ջուալները լցրած՝ իւր ամբարը:

V.

Ոչխարանոցում կռներն ամուր կապած, մենակ բանտարկուած էր Պլէճ ամին: Մի քանի ժամից ուշքի գալով երբ աչքերը բացեց, տեսաւ, որ մենակ է մթութեան մէջ. — Էս որտեղ են բերէ ինձ... հա, նապիստի մէջ որտեղ են բերէ ինձ... հա, նապիստի մէջ եմ... օհ, անիբաւներն ի՞նչ ամուր են կապէ

թերս, մարիկ ջան, չուշնները մսերս կըտ-
րեցին, ձեռներս սառէ, փէտ են կտրէ...

Նա ուժուկող արեց, նստեց պատի հետ,
սկսեց հեկեկալ.—հայ վախ հայ, տես բանն
ուր հասաւ... Ա՛խիս, Աստուած, դու ինձի
քեօմակ (օգնող) ըլլիս. Քեզնէն զատ ուրուշ
օգնական չունիմ... Եարաբ իմ մեղքս Բնչ էր,
օր էս օրը ցքիր. Է՞ն էր, օր ուզեցել եմ կըն-
կանս ու տղոցս հաց հասցնեմ, անօթութենէ
ազատեմ... թէ օր էդ իմ էրածս մեղք է՝
բա որն է էլ արդարութենը. Է՞ն է, օր ա-
զէստանքը տարին-տասներկու ամիս կլպեն ու
զպնեն մեզի, մեր աշխատանքով ապրին ու
մեզի ամսներով անօթիք ման ածեն, նապըս-
տների մէջ փթեցնեն, ունեցածներս ձեռնե-
րէս խլեն... Ա՛խ, եարատան (ստեղծող) Աս-
տուած, թէ օր մենք էդպէս մեղքի համար
դժոխք ենք երթլու, ապա դրախտդ էլ ում
համար ես պահէ. Էն անհոգի ազէստանց հա-
մար... Ա՛խ, ախ, ախ, հիմի Բնչ եղան մե-
րոնք... կնիկս, տղէքս, եարաբ հաց գտան
ուտելու... Ա՛խ, Աստուած, էստեղ և եթ առ
հոգիս, էլ ակնջներս չիմանան էնոնց լացն
ու շիւանը. առ, առ ամանաթդ, միանգամէն
ինձի ազատէ՛ էս կեանքէն, օր ծնած օրէս
էսպէս սև օր եմ անցուցէ, էսպէս սև օր ան-

ցընելէն է՛լ սև հող պիտի մտնիմ... Նա գառ-
նապէս սկսեց լաց լինել և ապա փոքր ինչ
թեթևութիւն զգալով խօսեց.— Է՛, Պլէ՛ճ, մէկ
չչափէիր, թէ վեզ ես դու, օր ազի հետ ոտք
կմեկնես... չիտես, օր նա իրաւունք ունի
մինչև անգամ մեզի սաղ-սաղ սըպանելու... Ա՛խ
ինչ ըսեմ—, քիչ խորհելուց յետոյ շնչաց
նա,— էն խորը գիտնական մարդոցէն մէկն
էստեղ ըլլիր, տեսնիր իմ դրութենը, հաս-
կնար մեր քաշած դառն օրերն էս քեափիր
աղէստանց ձեւնէն, օրէնքով բալքի մեզի էս
դուլումներէն ազատէր, օնչինչ չէի ուզէ, էդ
ըլլիր, էնդից ետև թող իմ մեռած մարմինս
էսդից դուս հանէին:

Նա նալեց բաց երթկին, տեսաւ ներս
թափանցող առաւօտեան արշալուսի շողքերն
և ատամները կրծտացրեց... չէ՛, իմ մտածած-
ներս նաֆիլա (դատարկ) բաներ են... էդ ըլլե-
լու բան չէ... թէ մէկ էստեղէն կազատիմ, ես
գիտեմ. եա աղէն, եա ես. թող երթամ Սի-
քիր, թող երթամ, գէօռը ջհանլամը, թաքի
էնքան խալիս էդ անօրէնի ձեռնէն ազա-
տեմ...

Ալդ ժաշանակ ճռաւալով բանդի դուռը
բացուց և ներս մտաւ գլաւու չափարը: Նա
կոպիտ շարժումներով վեր կացրեց նրան և

թևերը կապած ձիու առաջ խառնեց, տարաւ
Ախալքալակ:

Գեղին աղէն իւր դէմ կատարած քրէա-
կան յանցանքի համար, ըստ գլաւայի կազ-
մած արձանագրութեան և ըստ վկայութեան
իւր սուբաշիների՝ գանգատ տուեց, և բան-
դարկել տուեց ծերունի Պլէճին հէնց այն օ-
րերին, երբ նրա տունն անօթի էր մնացել և
արտերը կծղած հնձող էին կանչում: Պլէճ
ամին չկարաց տանել ուժ ամսուայ երկար
բանդարկութիւնը. մի կողմից բանդի խոնա-
ւութիւնը, միւս կողմից ընտանիքի կարօտն
ու գերգաստանական մաշող վիշտը, երրորդ
կողմից կրած հարուածների հետևանքն ու
ծերութեան տարիներն հալումաշ արին նը-
րան. նա քանի գնաց օրբատօրէ նիշարեց ու
դեղնեց. թուլացաւ նրա կազմուածքը:

Մի գիշեր էլ նա սաստիկ թուլութիւն
զգաց, սկսեց մըսիլ, հազար և դողդողալով
պառկեց քնելու: Միւս օր առաւօտեան բան-
դի վերակացուն երբ մտաւ ներս, տեսաւ նը-
րան դեռ ևս անկողնում պառկած, մօտեցաւ
զարթեցնելու՝ սակայն նա անշարժ էր և սա-
ռած...

Նա մեռել էր...

ՀԱՒՍՏԻ ՃՈՒՐ ՃԵԼ

կամ

ԽԱՒԱՐԻ ՄԵԶ

1892 թ. ամառն էր:

Մի կիրակի օր Սուլտացի Ափոյենց իսօ
ամին, որ տարիքաւոր ծերունի էր, մեծ
քիւլահը գլուխը դրած, կեռածալը փայտին
նեցուկ տուած, երկար կոթանի չպուխը Փըս-
տացնելով՝ ծխի քուլաները կոկորդից դուրս էր
թողնում և Մամլաքաթից *) անցած – գնա-
ցած բաներ պատմում:

Նրա չորս կողմը հաւաքուած գիւղացի-
ները լսում էին նրա խօսակցութիւնը, որ ձե-
ռի կարձ ցուպը, որ աւելի նախընու մահակի
նմանութիւն ունէր քան քահանայի գաւա-
գանի, քարերին թըխթըխկացնելով, քոշերն,

*) Մամլաքեաթ ասում են Բասենին, որտե-
ղից գաղթել են:

ինչպէս ձիու ոտի պոկուած պայտ գետնին չըխչըխկացնելով, հնութեան արխիւից հանած, մի կողքի փեշն երկար, միւսը կարճ ու պատառոտուած, կարկատանների մէջ կորած վերարկուն հագին, որի նախնական կտորն ու գոյնը յալտնի չէր, թէ որն է, այնքան որ բազմազան գոյներ և բազմատեսակ կարկատաններ կային վրան. մաշուած, վրայի մազերն իսպառ գնացած գարիբալդին գլխին, աչքերը խփիսփացնելով ժողովուած ամբոխին մտեցաւ գիւղի էրեցը, Տէր-Սիմօնն ու ընդհանուր ողջոյն տուեց:

—Օրհնեաի Տէր, կարգիդ հաստատ մը նաս—, տեղերում շարժուելով նրա ողջոյն ընդունեցին գիւղացիներն և իրենց միջև տեղ բաց անելով հրաւիրեցին նստելու:

Էրեցը նեղ վերարկուի մի փեշով մի ծունկը ծածկելով, միւս փեշով միւս ծունկը, նըստեց և գաւազանը դրեց կողքին:

Մերթընդմերթ կրկնուող խօսակցութիւնը քահանայի գալով ընդհատուեց. և բոլորն էլ լոելով մի տեսակ սպասողական դրութեան մէջ մտան լսելու, թէ ինչ կասէր, կամ ինչի մասին կիսուէր էրեցը. սակալն էրեցն, ինչպէս իւր սովորութիւնն էր, լուռ էր, դեռ աչքերն էր խթիսփացնում, որ նշան էր թէ,

ո՞, սաստիկ վիրաւորուած է և պատրաստւում է նեղացած մի բան ասելու:

—Ինչպէս ես, տէր հայր, ծառայեմ կարգիդ—, նրա սրտի նեղացած լինելը նկատելով հարցրեց Դսօ ամին և նորից չպուխը տարաւ դնչին:

—Ե՛հ, ձէներդ կտրեցէ՛ք, սուս կեցիք, միք խօսի էլ է... գոնէ մարդու սիրուը հանգիստ մնալ... Նըլը չէք էլ ամընչէ՛ տէրտէրի հալուխաթը կհարցնէք—, սրտնեղացած վրայ բերեց Տէր-Սիմօնն ու նորից միքանի անգամ վրայ-վրայ աչքերն ու շրթունքները խթիսփացրեց, որ նշան էր թէ շատ սաստիկ նեղացած է:

Այդ նկատելով հասակաւորներն առժամանակ լուցին, իսկ ջահէլ-ջուհուլը տակից իրարու աչքով արին:

—Մարդ ինչպէս չնեղանայ, օր էս մի ամիս է խօսելով բերանս մազ բուսաւ, թէ «ո՛րդիք, հարուր լիծուն, հարուր վածծուն տնուոր մի սաղ գեղ էք, մի սուրբ է, մի օր միքանի մարդ թոփ եղէք, ձեր մէջ խորհուրդ էրէք, ինչ օր հարկաւոր է, քար է, փէտ է, ուստա է, իրզատ է՛ հաւաքեցէք, մի օրուայ բան է, գնացէք սրբի վրէն ետ առէք, պատերը քանդուել են, մի-երկու

քար է դնելու, տեղը դրէք, պրծիք... թէ չէ
մարդ չի կարալ նես մտնի, պատի քարերը
քիչ կմնայ, թէ վերըդիէն մարդու գլխուն ըն-
կնին, վրէն թափին... Առքի (առաստաղի) գե-
րընները փտել, կոտրել, կախ են ընկէ, քիչ
կմնայ, թէ մտնողին տակը թողնին... Ես գե-
տեմ, էնքան էդպէս պիտի թողնինք, օր վեր-
ջը մի փորձանք պատահի, մեղքի մէջ կո-
րինք... Տիա, էսօր առաւոտ Վաշիանու մի
սէլուոր ուխտաւոր էր եկէ, մատաղն էրէ, նես
էր մտէ մոմ վառելու, չոքելու երկու ծունը
աղօթք էնելու, ուխտն էնելու՝ քարը բիր-
դան վերըդիէն ընկէ, քիչ էր մնացէ գլխնե-
րուն դիպնի, մի սախտութեն հանէ... Մարդ
բնչպէս չնեղանայ, օր էսքան ջահէլջուհուն
երթըլու ձեռաց ծածկելու-շինելու տեղ, կայ-
նել են էստեղ զուր տեղը օր կմթնեցնեն, սա-
տանեստանցը կուրախացնեն —, վերջացըեց
քահանան և նորից իւր տչքերն ու շրթունք-
ները խըփխացնելով նայեց բոլորի երեսին:

Էրէցի խօսքերն ազդեցին հասակաւոր-
ների վրայ. նրանք գլուխները մի-երկու ան-
գամ տարան-բերին և շշնջացին.

— Շիտակ կսէ մեր քահանէն, ես իմ
Աստուածս:

— Ես ու իմ Քրիստոսս շատ լաւ կսէ

տէր-տէրը. Էսքան գեղուորիս համար ամօթ-
քէ, օր մի սուրբ ունենանք, էն էլ էնքան
զօրաւոր ու էսքան մօտիկ՝ էսպէս մտիկ տանք.
հէջ բան օր չըլլի՝ մեղք է —, տեղում կանգ-
նելով կրակոտ վրայ տուեց մի տարիքաւոր
գիւղացի և նայեց միւսների երեսին, թէ բնչ-
պիսի արձագանք կգտնէր իւր ասածը:

— Լաւ կսէ Սանթօ ափարը, լաւ. Էս-
տեղ էսքան ջահէլջուհուլ թոփ ըլլելուն, դար-
տակ տեղն օր մթնեցնելուն՝ թող երթան
շինեն...

— Հա, հա, ես էլ ըսածիդ յօժար եմ:

— Ես էլ, ես էլ:

— Ի՞նչպէս կիսուիք ես չեմ հասկնայ. ջա-
հէլ տղէքը գործ չունին, բնչ է, էնոնք էլ
էս գեղի մարդը չեն... Ներկոց *) օրով չափի-
ներն ու արօսներն էնտեղ իրար ետևէ հա-
սել են քաղող կուզեն, մարդ չիտէ, թէ սո-
սել են քաղող կուզեն, մէջ տեղէն քանի կտոր
լուղը ո՞ր տեղէն առնի, մէջ տեղէն քանի կտոր
էնէ. հիմի դուք կայնել էք թէ, ա-
ըլլի գործ էնէ. հիմի դուք կայնել էք թէ, ա-
ըլլի, բան ու գործ թող, միքանի օր բանտ եղի
(արգելուիլ) սուրբ ծածկէ. սուրբը հիմի ծած-
կելու ժամանակը գտաւ. էսքան վախտ համ-

*) Ան ժամանակամիջոցը (յունիս և յուլիս),
երբ արտերը հերկում են, կոչւում է հերկոց:

բերել է, թող մի քիչ էլ համբերէ, մինչեւ
գործէ կատիկինք (ատիկի՝ ազատի) —, յան-
դուգն խօսեց մի մեծքթանի երիտասարդ,
որին Զուռօի տղայ էին ասում:

Երեցը, որ իրեն մատուցած գալիանն էր
զըլլըլացնում՝ այդ խօսքերը լսելով յանկարծ
բարկութեամբ լցուեց, աչքերն ու շրթունք-
ներն աւելի արագ-արագ խըփիսփացըեց, էլ
չկարաց համբերէ, մաֆրոշը^{*)} դէն շպրտեց ու
կըքոտած աչքերով նայեց Զուռօի տղի երե-
սին.

— Ծօ փուճ, Աստծու ճամբեցէն ելած,
մարդ էլ էդպէս Աստծուն հակառակ բան խօ-
սի... երկնքէն գլխուն քար կընկնի. հոգին
սատանեստանցը բաժին կդառնալ, խաբար
էս... Տէ՛ւ տարին — տասվերկու ամիս ձեզի
համար կաշխատիք, բլի՛ օր հիմի մի օր էլ սրբի
համար աշխատիք, ինչ կըլի. չայիրն ու ա-
րօսն օր գործ է, սուրբը գործ չէ... Ըսենք
հիմի ձեր տունը քանդուել է. գլուխներուդ-
պիտի բլի՛ (փուլ գալ), պիտի չշինէք, պիտի
տակը մնաք, թէ ինչ է արտ ու չայիրի ժա-
մանակ է... Անիծած կայէնի բանը մի՞ք դար-
ձնէ. էն էլ ձեզի պէս իրեն ետ ընկած ան-
պէտք ցորենն Աստծուն մատաղ էրաւ:

^{*)} Գալիանի երկար գափուկ խողովակ.

— Յորեսն էլ մատաղ ըլլի՛ —, իրարու-
տակից փըսփսացին ջահիլներն ու քթերի տակ
քմըլցիստացին:

Երիտասարդների այդ չարաճճիութիւ-
նը Տէր Սիմօնի բարկութիւնը գազաթնակե-
տին հասցըեց. նա խլեց կողքի գաւազանն ու
աղաղակեց.

— Ծօ փուճ արևներ, էստեղ նստած մարդ
կխօսի, դուք էդտեղ ինչ կծիծաղիք, հա...
Մի փոքր լոեց ու էլի շարունակեց.

— Լշաը, Աստծուած էդոր համար էլ պատ-
ժեց կայէնին, է, օր ձեզի պէս փուճ էր.
մատղի մուխն Աբէլինի պէս շիտակ երկինք
չհանեց, ծուռը հանեց:

— Վալ, վալ, վայ —, ծնկներին ծեծելով
խօսեցին միքանի ծերունի, որոնց սրտին իսկի
դիւր չեկաւ երիտասարդների այդօրինակ վար-
մունքը:

— Էսքան մարդուս ինչի՞ կայէն կշինես,
էրածներս ինչ է —, վիրաւորուելով քահա-
նայի խօսքերից նկատեց Զուռօի տղէն:

— Էլ ինչ պակաս մնաց կայէնից ձեր
էրածը...

Իսօ ամու պնչերը բարկութիւնից լայ-
նացան ու նեղացան. նա ծուխն աղահու-
թեամբ կուլ տուեց ու ասաց.

—Մի լաւ հասկըցու էսոնց տէր-տէր ջան, մի լաւ հասկըցու իրենց էրած լիմարութենք, բալքի (գուցէ) խելքերը գլխները դալ:

—Կայէնն էլ էսոնց պէս իրեն ցորենի կռճոնք, անպէտքը ջոկեց Աստծուն մատաղ բերելու, ինչպէս օր էսոնք իրենց ժամանակի անպէտքը կուզեն ջոկին սուրբը շինելու:

—Ետե՛, տէր-տէ՛ր ջան, ըսա՞ իմանանք—, խնդրեցին շարունակել:

—Ետե... ը՛ը՛, Աբէլն օր մատաղ էրաւ իրեն ընտիր, լաւ օչխարները, էնոր մատղի մուխը շիտակ, այ ինչպէս էս գաւազանս (ցոյց տուեց գաւազանի ուղղահայեաց դիրքը), շիմշիտակ երկինք ելաւ, հըմը կայէնն օր մատաղ էրաւ, էնոր մատղինն Աբէլինի պէս շիտակ վեր չելաւ, ծուռը գնաց. էդ նշան էր, թէ էնոր մատաղն Աստծուն ունդունելի չէ:

—Տեսաք, հը՛ը՛, ջահէլ-ջուհուլ, լաւ անկանչ էրէք, դէ լաւ անկանչ էրէք, օր դուք էլ կայէնի օրը չընկնիք—, չպուխը Փստացնելով նորից վրայ բերեց իսօ ամին:

—Կայէնն օր էդ բանը տեսաւ—, առաջ տարաւ քահանան,—սիրու տիրաւ, չունքի սև սիրու խալին (նախանձու) էր. օ սահաթ հասկըցաւ, օր իրեն մատաղն Աստուած չունդունեց, ախպօրն աչքը չվերուց:

—Վու ձունը գլխուս, մարդ էլ ախպօրը նախանձի Աստծուն էրած մատղի համար—, ցածի շրթունքը կծելով ծնկներին խփեցին հեռու բակում (նախասենեակ) նըստած կանալք:

—Աստուած էդ վախտը վերըդիէն հարցուց.

—«Կայէ՞ն:

—Չէն չկար:

—«Կայէ՞ն, ծօ Կայէ՞ն:

— «Է՛Է՛:

— «Ուր ես:

— «Ի՞նչ պիտի էնես, էստեղ եմ:

— «Հըպը ինչք ձէն չես հանէ:

— «Ի՞նչ ձէն հանեմ:

— «Զըլլի կիսասիրտ էրած մատղիդ մեղքը հասկըցար, սուս կկենա՛ս... դէ գնը՛, դէ գնը՛ էսդից ետե իմացի, օր կիսատ սրտով էրած բանն ինձի ունդունելի չէ:

— Էդ օր Աստուած ըսաւ՝ կայէնի սիրտըն աւելի շատ լցուաւ չար նախանձով. հերսուտաւ, կրտկ կտրաւ, թուրք դարձաւ, մի մեծ դագանակ առաւ, գնաց ախպօրը վրայ: Ախպէրն էլ էդ ժամանակ մեզի պէս միամիտ կեցած մի թոփալ օչխրի ստք կիստկէր, օր գէօզգաշի լըլէր, դեղ էնէր. կայէնը բիրդա՛ն

(յանկարծ) գլխուն կալնաւ ու դագանակը վրայ
բերեց էնոր անկըշքոքին։ Արէլը վեր թռաւ,
թէ փախի, հըմը կալէնը հէջ մաճալ (միջոց)
չտուեց, շունչ քաշելու չթողեց, ինչքան օր
ուժ ունիր՝ զարկեց գլուխ-մլուխ ազմիշ էրաւ
(ջախջախուլ), սըպանեց, արնշաղախ վէր ցքեց
ու թողեց, գնաց։

— Վայ, վայ, վայ—, կալէնի մեղքի ծան-
րութիւնն իրենց սրտի վրայ զգալով հառա-
չեցին գիւղացիներն, — էնոր համար ադամոր-
դու արուն թափած օրէն «սէրը սուր է դար-
ձէ, արունը ջուր», էնոր համար «հացը ետ-
եան (հետիոտն) մենք ձիւոր՝ վազենք-վա-
զենք՝ ետեէն չենք կտրայ հասնի»։ ոչ ու
փուծ էր եղէ կալէնը, ոչ ու փուծ, օր մարդ
սըպանելն արար-աշխրքին օրինակ չթողնիր։

— Աստուած էդ օր տեսաւ հարցուց։

— «Կալէն, կալէն։

— «Հէյ։

— «Եդ որտեղ ես։

— «Եստեղ եմ։

— «Ինչի՞ մատաղ էրած տեղէդ հեռա-
ցել ես։

— «Էկել եմ արտերուս կաշեմ։

— «Ուրտեղ է ախպէրդ, Արէլը։

— «Ես ինչ գիտեմ ուրտեղ է. ես խոյ

էնոր պահապանը չեմ—, ամպարտաւան-ամ-
պարտաւան պատասխան տուեց կալէնը։ Աս-
տուած էդ խօսքի վրայ էլ աւելի բարկացաւ
ու ըսաւ։

— «Անիծուիս դու. զարմդ ու զաւակդ
աշխրքի երեսին հէջ հանգիստ օր չքաշեն։

— Են օրէն—, առաջ տարաւ էրէցը, —
Կալէնի սերունդը նզովուած է ու անարժան.
Կալէնի սերունդը նզովուած է ու անարժան.
Վերջը բիտթուն անհաւատ թուրք ու ան-
վերջը բիտթուն անհաւատ թուրք ու ան-
վերջը բիտթուն անհաւատ թուրք ու ան-
վերջը բարձան... ու մինչի օրս էլ
Կալէնի մեղքի տակն են...

— Ա՛յ կարգիդ հաստատ մնաս տէր-տէր
ջան, օր մեզի ամեն բան էդպէս տեղակի լաւ
հասկցոցիր, մէկ-մէկ հալեցիր, անկճներս լը-
ցիր. փառաւորուիս դու—, լի սրտով վրայ
բերին չորս կողմից։

— Դէ լաւ հասկցիք ջահիլ-ջուհուլ, դէ
լաւ հասկցիք, օր Աստուած վերըդիէն վըէ-
ներդ չբարկանայ, չանիծէ—, այս անգամ հա-
մոզող եղանակով խօսեց Տէր-Սիմօնն ու աչքերը
խփիսփացնելով նորէն գալիանը ղըլղըլացըեց։
Կրօնական ազգեցութեան տակ նրանց
բոլորին տիրեց մտախոհ լուութիւն։

— Լաւ կսէ մեր գահանէն, ես էնոր
սուրք կարգին մեռնիմ. հոգեստանքս հըպը
խոյ սատանեստանցը բաժին էնելու չենք. այ

խալիսը, այ գեղական, էս ի՞նչ բան է, օր էս-
քան տարի է էսման զօրաւոր սուրբը քարու-
քանդ եղած, վերանա (աւերակ) աչքերուս ա-
ռաջ տեսնինք, ու չծածկենք. Սուլտուալ սուրբ
Գէորգի ձէնը տէչէչ աշխրքի էն ծէրէն կու-
գայ. էլ հայ, էլ ուռում, էլ ֆուանկ, էլ քուրդ,
էլ եզրդի, էլ բոշա, էլ թուրք, էլ վեվ ըսես,
օր էնոր դուռը չգան, ուխտ չէնեն, մատադ
չկտրեն, մուրազները չառնին, չերթան... Մե-
նակ մենք ենք, օր մեր սրբի զադրը (յարգը)
չիտենք. այ գեղական, շիտակ չէ ըսած:

— Շիտակ է, շիտակ:

— Ես ու իմ Քրիստոսս շատ շիտակ է—,
վրայ բերին չորս կողմից:

Քահանայի սիրտը ուրախութիւնից բա-
ցուեց ինչպէս մայիսի վարդ:

— Դէ օր շիտակ է, էլ ի՞նչ էսօր-էգուց
ցքենք. վազուանէն թէզը չկայ, երթանք շի-
նենք. ամեն մէկս մի մի բահ ու թի, եա թէ
չէ փէտատ ու բահ վեր առնենք, մի-երկու
հատ էլ կոնդ ու գերան էսօրէն-էնորէն ու-
զագնք. ուստէստանքն էլ, հրէն ուստա Մար-
գենք. ուստէստանքն էլ, հազըր են, ծածկենք
վերջանայ. էգուան առաւօտ ես առաջ ի՞նքս
կերթամ. յօժար էք գեղական—, հարց տուեց

Խօս ամին, որի վառ ցանկութիւնն էր Տէր-
Սիմօնի առաջարկութեան իրականանալը:

— Յօժար ենք, յօժար—, խառն լսուե-
ցին միքանի ձայներ:

Ալդ ձայները Տէր-Սիմօնին կատարեալ
երանութեան հանգիստ պարզեցին. սակայն
այդ ըոպէական ուրախութեան տակ խեղճի
սիրտը կախ էր. կասես ինչ որ բան ներսից
ասում լինէր. «չէ, մի հաւատա, էլի գլուխ
գալու չէ»:

Ալդ համաձայնութեան ձայները յուզե-
ցին Զուռօի տղի ներքինը. նա անկարող ե-
ղաւ տանելու այն հանգամանքը, որ իւր
ձայնը լսելի չեղաւ, ուստի աշխատելով խան-
գարել՝ ասաց.

— Վեվ օր խօսք տուեց, թող էնիկ եր-
թակ. ես չեմ կարալ էգուան թողնի տրտս ու
չայիրս:

Չուռօի տղի այդ վարմունքը սաստիկ
ազգեց Տէր-Սիմօնին. նա տեսաւ, որ գլուխ
եկած գործը խանգարել կուզէ այդ «սատանի
լակոտը», վատ օրինակ կուզէ դառնալ միւս-
ներին՝ սրտի բոլոր դառնութեամբ խօսեց.

— Գիտեմ, Աստծու երեսէն ընկած, գի-
տեմ, էնքան պիտի էնես, օր վերջը սուրբը

պատիճդ (պատիժ) տալ, հանգստանաս... գիտեմ, էդ կուզես...

— Ե՛հ, մեռնիմ սրբին —, նետը դէպի Տէր-Սիմօնն ուղղեց Զուռօի տղէն. — Հապաէլ լինչ սուրբ է, օր մարդու մուրազը տալու տեղ՝ պատիճը կուտայ... էլ էդպէս սուրբը ինչի՞ շինեմ, ետ ինչի՞ սլաշտեմ...

— Ի՞նչ էդտեղ կայնել ես խելքէդ դուս խելառ-խելառ դուս կուտաս. այ անհաւատ շը՛ը՛... Հիմի բերանս ինչ էր եկէ, հայ... յանկարծ բոնկեց Խոօ ամին և ձեռը տարաւ ցուպին. — Էսքան մարդ էստեղ խօսք կկապեն, համաձայն կըլլին, դու ինչ գէշ մկի պէս մէջ ես ընկէ, «եփած ապրի գլխուն ջուր կըլըլես»... Գլուխդ ու կառափդ է կերէ քու գալդ... ուրուշի՞ն ինչի պատճառ կդառնաս... Տէր Բարերար...

— Ես խելքէս դուս չեմ խօսի .. ես օգտաւոր բան կսեմ... դուք խելքերէդ դուս կխօսիք, օր խելքերդ սուրբն է... անպարկեշտ պատասխանեց Զուռօի տղէն:

— Ծօ փուճ, հերիք մարդ համբերէ... արթըդ էս տեղս հասաւ —, ոտի կանգնելով կոկորդը ցոյց տուեց Տէր-Սիմօնը. — Բնչ էդտեղ կայնել ես Փարմասոնի բաներ կխօսիս... կերած դեքին աշեցէք... սաղ գեղի մէջ պաս

ուտելը դու իճաթ էրիր (Հնարել), հիմի էլ կուզես, օր հաւտըներս փոխենք, ինչքան օր սուրբ ու սրբոց գերեզման կայ՝ ուրանանք ու կուրանանք... Ափսոս մեր բերնին, օր քեզի հետ կխօսինք... Եանի թէ գնացէ յուսում ես առէ. գնացէ ջիր (իսպառ) խելքդ կորուցէ, ցնդէ, սարսանդացէ (ցանցառանալ) եկել ես... Փուճ կենդանի, փուճ կակալ, չար Յուլիանոս...

— Խօսքդ չափէ, այ տէրտէր —, ձայնեց Զուռօի տղէն:

— Զէնդ կտրէ, էդդից կորի, թէ չէ ելալ հայ, էդ ում հետ կխօսիս —, պոռաց Խոօ ամին:

— Կորի, կորի, մեր միջէն կորի:

— Տօ անարժան, քեզի կսենք կորի:

— Դէնը կորի, թէ չէ եկաւ, հա...

Խռնուեց ամբոխը:

Զուռօի տղէն լեզուն փորը գցած հեռացաւ: Նրա հետ հեռացան և մի-երկու հոգի իւր ընկերներից:

II.

— Տէր բարերար Աստուած —, Զուռօի տղի գնալուց լետու միքանի ծերունիների մօտ շա-

բունակեց Տէր-Սիմօնը. — քիչ կմնալ, թէ օղորմած հոգի Տէր-Մխիթարի դիւզանն էնէ:
— Հա, հա, տէր-տէր ջան, մեղքի մէջ կորանք —, գլուխները շարժելով և ամբողջ իրաններով օրօրուելով Տէր-Սիմօնի խօսքին վրայ բերին միքանի պառաւ և տեղերից վեր կենալով մօտեցան խօսող ծերերին ու քահանային:

— Են էլ էսոր պէս, Աստուած օղորմի հոգուն, հակառակ կխօսիր, մարդ չէր թողնի սրբի գուռն երթլու, թէ «Բնչ կալ կերթաք էն չոր քարը կհամբուրէք. համբուրել կուզէք՝ եկէք մեր «Զօրաւոր աւետրանն» ու «Թռնող նարեկը» համբուրեցէք, խաչամբուրցքէք»: Նըմը գիտէք ինչ եկաւ գլխուն. էսոր «Խելառ սուրբ Գէորգ» կսեն. ձին հեծած մըրզազը (նիզակ) ձեռքը մի օր Սրբի եամճէն (զառիվալը) ետևն էր ընկէ, հարի (մինչև) տուն մէկ էր քշէ. «Հիմի քեզի էստեղ և եթ փառչա-փարա (կտոր-բրդուճ) կէնեմ. մըրզազս փորդ կոխեմ, օ սահաթ հոգիդ կառնիմ. դուիմ գուռս մարդ գալու չես թողնի, թէ «չոր քար է»... դէ գնը, դէ գնը, օր էլի քահանայ մարդ ես, խնայեցի, մանրուխոշորի տէր ես, մեղք ես, թէ չէ ես գիտէի, թէ քեզի ինչ օրը կցքէի... Թերահաւատը, հողը խա-

բար չտանի, հարի տուն սոլուզը մէկ էր առէ, լեզուն կապուէ փորն էր ընկէ, քիչ էր մնացէ լեղին պատոի: Արթըղ (ապա) էնդից ետև խելքը գլուխը ժողվեց, էլ էնպէս հակառակ չէր խօսի:

Ականջ դնող պառաւներն ու ծերունիները, սրոնք այնքան մանրումասն չգիտէին հանգուցեալ Տէր-Մխիթարին պատահած գէպքը՝ կասես վեր քաշուեցան և երեսներն երկիւղից թէ հաւատից խաչակնքեցին,

— Ենոնք գեռ ջահիլ են, տէր-տէր ջան, սուրբ կարգիդ մեռնիմ, ինչ գիտեն. հըլը դեռ խելքերը գլխները չեն ջնդէ (ժողովել). Էս սրբի պէս զօրաւոր ու մուրազատու սուրբ՝ էս սանճղի մէջ մէկ էլ Գէօնդիւրու սուրբն է, Կուռնաշէտու Կարմիր — Գիրգոր աւետրանն է: Սրբին էդման հակառակ խօսողը մէկ օր չէ մէկ օր իրեն պատիճը կգտնի... ինչ գիտեն, հըլը էդոնց ջուրը դարիվեր կվազէ —, տեղում կանգնելով խօսեց մի կարճահասակ, կմախք դարձած կին, որի հասակը հազիւ լինէր արշին ու կէս. նրա թառամած, լալնացին սնդիկի նման խաղում էր ձեռնեցած կաշին սնդիկի վցալ. բերանն այնքան մեծ էր, որ ներքին ծնոտին, մանաւանդ ընչացքին տուել էր մի տարօրինակ, կենդանու կերպա-

ըանք. աչքերը թէև 69 էին, սակայն հոգու այդ աններդաշնակ լուսամուտների մէջ ինչ որ կենդանի հուր, շարժուն կեանք կար: Նա կլինէր մօտ լիսուն տարեկան, գուցէ և միքիչ աւել, բայց գեռ չէր պատահել, որ նա սուտ խօսէր. «Արզիւրիւմցոց Հոռոմ է պէտք, օր սուտ չխօսի», խօսակցութեան ժամանակ տոանձին դարձուածք էր դառել սուլտացիների բերանում նրա սուտ չխօսելը:

Արզիւրիւմցոց Հոռոմը (այդպէս և նրա խսկական անունն է) թէև հարուստ մարդու կին չէր, սակայն մեծ համակրանք էր վայելում գիւղում, իսկ որ գլխաւորն էր՝ ունէր կրօնական մարդու տոաքինի անուն.—դէ կեցիք, օր ես էլ իմ գլխուս անցածը, պըզտի մանչուս, 0հաննէսիս մուրազը տալը պատմեմ —, տոաջ տարաւ նտ.—0հաննէսս ծիծս էր. մի իրիկուն փաթթէ, օրոցքն էի դրէ, գնացել էի կովերը կթելու. մենք մի անտէր սուր ձէնով խորոզը ունէինք. կովերը կթած վախտս էդ խորոզը գնացէ օրոցքի կամրին էր կայնէ, ինչքան օր ձէն ունի՝ բարձր կուկուլուկնուն էր կանչէ. տղէս ձէնէն զարթէ, վախեցել էր. կովերը կթեմ գամ տեսնիմ օր ինչ՝ տղէս օրոցքի մէջ էնպէս ահամիկ կուլալ, էնպէս կապտուտի, օր քիչ կմնալ սիրտը

պատուի, աղիք-մըզիք բերնէն դուս գալ. քըրտինքն ելէ՝ հեղեղի պէս վրայէն կվապէ. էդ եղաւ մահանէն. էդ տղէն քանի գնաց, ետ գնաց. զպնաւ ու դեղնաւ, իստակ ճիշրք ընկաւ (ջիւերի ուժից ընկնել). վերջն էնպէս դարձաւ, օր ծիծ չէր բռնէ. երկու շաբաթէդման մնաց. լաշակն երեսին քաշեցինք, ըսինք, «Էս տղէն էլ վերջ չունի, կմեռնի». էդման ումուտներս (լոյս) կտրել էինք. մի անգամ տեգերկնիկս Շաքար-ապլաս, թէ «Հոռոմ, տրի իդի տղէդ առնինք, տանինք սրբի դուռը, մի ջուխտ մոմ վառենք, մատաղ ենենք, բալքի Աստուած երկու դռնէն մէկը բանալ. եա (կամ) աճալ (մահ) տալ, եա լացընէ. մեղք է տղէն, հերիք չարչըրուի»: Եցնք, մոմերն առանք, գոմէն ջուխտըմ դոխի ձագ բռնեցինք, չարչէցէն էլ մի շալուխունկ առանք, գնացինք: Գնացինք, գոխերը մատղեցինք, մոմերը վառեցինք, մեռնիմ զօրացը, չոքանք գերեզմանն համբուրեցինք, մի-մի պտղուց հօղ առանք, բերըններս ցըքինք, ես դուս ելալ, թէ խնկի մնացածն էլ խնկամնով գուռը խաչքարի վրալ ծխեմ, հըմը էն էր խունկը ցքի կրակի վրալ՝ բիրդան (լանկարծ) մի կունքըմ եկաւ վրէս. կսես զօրովէն աչքերս փակեցին. տղէն գիրկս առալ,

խաչին թիկն տուի, գուխուրալ (մըափել): դու-
խուրալ մէկ էլ տեսնիմ, որ մի ճենք ը-ճերմակ
միրքաւոր մարդ եկաւ գլխուս վերըդին կայ-
նաւ. ինձի, թէ «աղջի Հոռոմ, տղէդ ինձի տու,
տղէդ»: Ես էլ տուի: Օհաննէսիս առաւ գիր-
կը, սուսուփուս, առանց ձէնուձուք հա-
նելու թշերը կսկուծ (ալինդ) պագեց ու էլի
տուեց ինձի. տուեց ու հետն էլ ըսաւ. «դէ
առ. քանի օր դու ուղիդ սրտով ես իմ դուռս
եկէ՝ տղիդ մուրազը տուի, առ». հըմը էդ
խօսքի հետ էի, մէկ էլ տեսնիմ, օր Շաքար-
ապլաս կշտէս դիւրդմեց (բոթել). «աղջի Հո-
ռոմ, բնչ ես քնէ, վեր ել. էրածդ մեղք ու
պատիճ (պատիժ) է, ուխտ ես եկէ, թէ քը-
նելու»: Աչքս բանամ, օր ինչ, Օհաննէսս աշ-
քերը բացել է, լրունդ (սիրուն) երեսս կա-
շէ, հետն էլ պոկները կը ճպճպացնէ: Ծիծս
քերանը գրի՝ բոնեց: Ե՞ն է էս է, հըլը Օհան-
նէսս պիտի հիւլնդնալ, ես էնոր լոտացը ար-
կին մեռնիմ, էնիկ պրծուց տղիս—, երեսը
խաչակնքելով իւր պատմութիւնը վերջացրեց
Արգիւրիւմցոնց Հոռոմը:

Արգիւրիւմցոնց Հոռոմի պատմութիւնից
ետոյ եղան և ուրիշ միքանի պատմութիւն
անողներ սրբի մասին, որ գիւղացիները լը-
սում էին մեծ լափշտակութեամբ:

Այդ իրար նման և իրարու հետեղ պատ-
մութիւնները բոլոր գիւղացիներին կասես վեր
քաշեցին. բոլորն էլ կրօնական մի տեսակ ճըն-
շող-ճանր տպաւորութիւն ստանալով սրտերը
վեր քաշեցին:

— Ե՞՞հ, սուրբը մերն է, էնոր համար
զագը չիտենք, ուրուշինը հըլը թող ըլլիր՝
տեսնէիր ինչպէս գլխովը պտուտ գար, արե-
ւովն երդում ուտէր. ուրուշներն իրենց հասա-
րակ սրբերին զօրաւոր կենեն՝ մենք մերի վրէն
էլ չենք ծածկէ... էսպէս զօրաւոր սուրբ ո՛չ
էլ մենակ մեր սանձղի մէջ՝ ես կսեմ հըլը
թէ մենակ մեր սանձղի մէջ էլ ըլլի օր միքանի հատ
անճախ (հազիւ) ճարուի—, նորից խօսեց քիչ
առաջ խօսող կըակոտ գիւղացին և պեխերը
սրեց:

— Ախալէր, մենք էն ջահէլջուհուլի խօս-
քին ինչի մտիկ կուտանք... Բան ու գործ
չէ՝ ինչ կուզէ թող. ըլլի, առաւօտէն թէզը
չկայ, երթանք շինենք—, խօսեց իսօ ամին
ուրախացած, որ արդէն տէրտէրի ցանկութիւ-
նը կատարւում էր.— ես էգուց առաւօտ բա-
հը կառնիմ, կանուխ կերթամ, վեկ օր կուզէ՝
թող գալ:

— Շինենք, շինենք—, լսուեց չորս կող-
մից և գիւղացիները վեր կացան տեղերից,

երբ արդէն արևը թեքուել էր սարերի քամակը և հորթերի բառաչը լսում էր գիւղի վերի ծայրից:

III.

Սակայն միւս օրը խեղճ Տէր-Սիմօնի ցանկութիւնը չկատարուեց. թէև իսօ ամին ինչպէս ինքն ասել էր առաւօտ վաղ բահն ու թին շալակած սրբի սարը բարձրացաւ, որ միւսներն էլ տեսնելով ետևիցը գնան՝ բայց ոչոք չերևեցաւ:

Գիւղից դուրս նրան նայում էին երկու գիւղացի, որ իրար պատահելով խօսում էին.

— Զամօ՛, բարի լուս, էդման ուր:

— Աստծու բարին, տատաշ (անուանակից), չալիրը:

— Կտեսնիս բէմբուրատ (բէմուրազ) Իսօ ամին ինչպէս կայնել է, սրբի Տէրէն մտիկ կուտայ—, ծիծաղելով խօսք գլորեց առաջին խօսակիցը:

— Կտեսնիմ, հա՛:

— Բա օր կտեսնիս ինչի չես երթայ:

— Դու ինչի չես երթայ. խօսք տուողի մէկն էլ դու ես:

— Ի՞նչ էնէի, ախալէր, հաւէն (եղանակ)

ամպէլ է, վախեցայ, թէ թօն գայ, մի-երկու հուպուլ խոտ ունիմ քաղած, թօնի տակ մնալ՝ խարաբ ըլլի... է, արօսս էլ էնտեղ կծղել է, թէ էսօր չքաղեմ՝ էլ գերնդի չի բռնէ:

Եւ երկու խօսակից մնացին իրար երեսի նայելիս:

Իսօ ամին կանգնած Տէր-Սիմօնի հետ չորս բոլորքն էին նայում և ձեռով-ոտով սրբան-նրան կանչում, սակայն իզնւր. ոչոք, չերևաց: Նրանք սրտաբեկ նորից իջան ցած:

Այդ ըոպէ Տէր-Սիմօնի սիրտն այնքան տխուր էր, որ «դանակ զարկէիր՝ արիւն չէր դուրս գայ»:

Այնուհետև քանի գնացին դաշտալին գործերն աւելի և աւելի բարդուեցան, որև սուրբը նոր—մէկից մատնուեց մոռացութեան. և Տէր-Սիմօնը լոյսը կտրած դատապարտուեց սպասելու մինչև աշուն, մինչև գիւղացիները կվերջացնէին դաշտալին գործերը:

IV.

Ոկտուեցին ամառուայ շոքերը. շոքերի հետ սկսուեցին տարածուիլ և խոլերալի մասին եղած լուրերն ու սարսափները. ամեն օր նորանոր և միմեանցից աւելի զարհուրելի լու-

ըեր էին պտտում Սուլտա գիւղի թէ կանանց
և թէ տղամարդկանց բերանում։ Զուռօի տը-
զէն, որ «գազէթ էր կարդում», օտար երկըր-
ներից խոլերալի մասին սոսկալի մահ-տարա-
ժամ էր պատմում։ Վախից բոլորի երեսի գոյ-
նը ճերմակ թան էր կտրէ. բոլորը ջուրը
քաշուածի պէս էին. երկիւղից ոչ կերածնե-
րը գիտէին, ոչ խմածները։

Խոլերան արդէն ոտք էր դրել ջաւա-
խէթ, առատ հունձ էր անում Արագովայում,
Գիւմբիւրդայում, Ախալքալակում, Մամզա-
բայում, երկու Խանչալիներում, Մեծ ու Փոքր
Գէօնդիրաներում, ուրիշ շատ տեղերում, վեր-
ջապէս եկել հասել էր Վաչիան ու Հոգամ,
որ Սուլտուալ դուռն էին։

— Աղջիկ, Օսկի։

— Ի՞նչ է։

— Աղջիկ, իմացել ես, կսեն թէ խոլերն
հասել է Վաչեան. օրական տաս-տասնը հինգ
մարդ կտանի։

— Ի՞նչ կխօսի. վայ, վայ, վայ —, թու-
լացած ձեռներով ծնկներին խփեց միւս խօ-
սակից կինը. — անընիդ մեռնիմ, Աստուած,
էսքան մանրուխոշորս ում պիտի թողնիմ...

— Անտէր ցաւը կսեն էնպէս զուլում
քան է, օր բոնածը հէչ սաղ չի պրծի. Բըռ-

նելն ու տանիլը մէկ կըլի. Թոսունենց տու-
նը տասվիրեք ջանէն իրեք հոգի են սաղ մը-
նացէ. մնացած տասը հոգին երկու օրուայ
մէջ իրարու ետևէ ընկել են ու մեռել։

— Ըման, աղջի, փալըլըմ (գոնեա) մէ ըսէ
մարդու սիրտը չպղտորի —, գոյնը գնացած վրայ
քերեց չորրորդն և յուսահատ հայեացքը լա-
ռեց երկինք։

— Կուն, թէ էդ անտէր խոլերն օր կայ՝
բարակ, երկան ճիճու է։

— Վէվ կսէ։

— Քաղքէն եկողները. քաղքցիք են ըսէ։

— Ճիճու է —, զարմացած կըկնեց մէկը։

— Նա, ճիճու է։

— Եա (վահ). ցաւն էլ ճիճու ըլլի. էդ
ինչ տեսակ ճիճու է օր...

— Դէ ճիճու է, էլի. ճիճուն քանի տե-
սակ կըլի. «պոչով անկնջով ճիճու է» *):

— Իմացել ենք ճիճուն մարդու փորը
կըլի, ոչ թէ հիւընդութեն։

— Զըլլի էդ ցաւը ճիճուի կերպարանք է
մտէ, ման կուգայ առանց տչքի երեալու։
— Դէ ես ի՞նչ գիտեմ. կսեն թէ էդ ճի-

*) Այս դարձուածքով հակառակն են ասում.
ալսինքն, հօ պոչ ու ական չ ունի ի ...

Ճուն մարդու բերնէն կմտնի, սեսըդին կերթալ, ջիգեար—բէօգրակը (լեարդն ու թոքը) կուտէ, կարպանէ. ետեւ էլի բերնէն, եա (կամ) թէ չէ մի ուրուշ տեղէն կելնի, ուրուշ մարդու բերան կմտնի:

—Ե՛, թող բերըններն ամուր փակեն՝ նես չմտնի. էդդից էլ զոլալ (հեշտ) բան—, նկատեց անմեղութեամբ մի մանկամարդ կին, որ յուսահատութիւնից թուլացած ձեռները գցել էր ուռած փորին:

—Անտէր ճիճուն հէջ կերևալ, օր գիտնաս թէ ինչպէս կմտնի, եա ինչպէս դուս կելնի—, ահ ու սարսափով խօսեց մի ուրիշ կին և նայեց փողոցի միւս ծայրը. նա տեսաւ, որ միքանի ուրիշ կանալք, որը տղէն գրկած, որը կաթի քուլէն թևը գցած, որը բըդի քուլան բազկին փաթաթած իլիկ կամ թեշիկ մանիկով, որն էլ լուացքի կեղտոտ շորերը հաւաքած բողչա կապած յամը քայլերով մօտենում էին իրենց:

— Եդպէս երդմի (չարդախ) տակը հովտեղը թոփ էք եղէ, ինչ լախրտի (զըուց) կէնէք—, ուսի բողչան վայր դնելով և ճակատից հոսող քրտինքը սրբելով խօսեց մօտ եկող կանանցից մէկը:

— Հողը գլխներուս եկել պրծել է. ինչ ալիտի խօսինք:

— Քա ինչի. ինչ է եղէ:

— Ել ինչ ըլլի. խոլերն հասել է Վաշիան. օրական քսան-քսանըհինդ մարդ կտանի, էդ լախրտին կէնենք:

— Աղջի, զորթ կսէք—, ձեռի բողչէն դէն ձգելով ծնկներին խփեց հարցնող կինը, — հըլը մէկ պատմեցէք, թէ ինչպէս է, օր... բռնէ ու կտանի. ինչ խաբար:

— Էսօր առաւօտ Վաչիանու մարդ էր եկէ, կսէր, թէ խոլերն օր էդքան մարդ կըտանի. բոլոր պատճառը մի պառաւ կընիկ կալ՝ էնիկ է:

— Եա—, զարմացան միքանիսը. — Էդ ինչպէս պառաւ է օր...

— Դէ պառաւ, էլի. պառաւն ինչպէս ըլլի. ըշտը պառաւ:

— Ե՛, էդ պառաւն ինչ կէնէ օր:

— Ես ինչ գիտեմ. կսեն մեռելները լողացնող չկալ՝ ում օր կսեն, չի մօտենալ, թէ կըունուի, բոլորին լողացնողն էդ պառաւն է. խոլերն էլ էդ պառաւի շալակն հեծած՝ հետը անէտուն ման կուգալ:

— Օր էդման է, էլ ինչի կթողնին էդ

գօռքագօռին — սիւմալասիւմպին տները ման
գալու:

— Ի՞նչ էնեն, մեռելները կմնայ առանց
լողացնելու:

— Լողացնել չէ՝ ի՞նչ կուզէ ըլլի. իմ ձեռ-
քըս օր տան էդ գօռքագօռին, ես գիտեմ թէ
ինչ կէնեմ —, առաջ տարաւ մի նորատի
հարս:

— Ի՞նչ կէնես:

— Ի՞նչ կէնեմ, հը՛լ՛ն. իրեն էլ մեռել-
ներու հետ սաղսաղ կթաղեմ:

— Ըման, աղջի, խելառ-խելառ հերիք-
դուս տաս. սաղսաղ էլ մարդ թաղեն. փա-
լլիսը մի խօսի էլ է. վույ, քոռանամ ես,
մեղքի մէջ կորանք... Ախըր Զուռօի տղի քով
հաց ես կերէ, է, ի՞նչ պիտի ըլլի. էնոր հօր-
ողբօր աղջիկն ես:

— Լաւ, մի տըռըսխա (մասխարա) էնէ.
լաւ կսէ Մինօն. Հըպը չէ, գօռքագօռը տնէ-
տուն ման գայ՝ օր ցաւը հետը ման ածէ,
համ —, հար տուեց Մինօին մի ուրիշ հարս:

— Հըպը մինչի տնէտուն ման գալու
մէջ բան չըլլի, Զուռօի տղէն հէչ կը-
սէ, թէ «իրարու տուն շատ միք երթայ-գույ.
դսի գեղերէն մարդ միք նես առնի, տներդ-

ու տեղերդ իստակ-փաք պահեցէք, ջուրը ե-
փեցէք՝ էնպէս խմեցէք...»

— Մէկ էլ ես ի՞նչ գիտեմ, կսէ, թէ «ղմի
ու ատոլ միք ուտէ, վնաս է, բոխկն ու փոռ-
չուլուղն է մարդու փոր կը ցաւեցնեն...»
Ախըր մինչի էդպէս բան չըլլի, կսէ..»

— Ըմանն, էդոնք բիտթուն էլ դարտակ
բան են —, վրայ բերեց մի ուրիշ ջահէլ հարս.
— տեա, էնոր համար խոլերը չեկաւ քաղ-
քէն երկու-երեք օրուայ մէջ հարուր, հա-
րուր լիծծուն մարդ չտարաւ. քաղքըցոնցէն
էլ շատ բանի հետեւող. Զուռօի մանչը խոյ
էնոնցէն էլ շատ բան չփտէ... հըպը էնպէս-
չէ, Հոռոմ ապլայ —, խօսող կինը դառաւ դէ-
պի Արգիւրիւմցոնց Հոռոմը, օր ոչխարը հօ-
տը խառնած, մի ցտխ ճիպոտի տեղ կոնա-
տակը դրած վերադառնում էր տուն:

— Հըլպըթ բոլորն էլ նաֆիլա բան է —,
գլուխը շարժելով առաջ անցաւ Հոռոմը. —
աճըլներս ըշտը եկել է, էդ է. հազար օր
էսդին էսդին ընկնինք, հազար օր դեղ ու-
դեղըանք էնենք՝ ճակտներուս ի՞նչ օր գրած
է էն պիտի ըլլի. հէչ մէկըմ Աստծուն մազի
տկէն (երկինք) փախիլ չի կարայ. ի՞նչ էլ օր
էնենք՝ գիտցիք, օր բոլորն Աստծուն դիմա-
դառցութեն է. Աստուած վերըդիէն կտեսնի.

վրէներս աւելի՝ շատ կրարկանայ... Ելի դուք
ըսէք ժամ առնինք, պատարագ էնենք, խաչ
ու աւետրան դուս բերենք, Մարիամ Աս-
տուածածնայ պատկերը դուս հանենք...

— Ընչ, մեռնեմ զօրացը —, խաչակնքե-
լով հառաչեցին միքանի կին:

— Գեղի չորս բոլորը ման գանք, թա-
փոր էնենք, չոքինք, լաց ըլլինք, արուն-ար-
տըսունք թափենք, բալքի էնիկ մեզի լուսը
հանէ, մեզի խղճայ, տներս ու տեղերս վե-
րանա (աւերակ) չթողնի , խիստ համոզուած
եղանակով վերջացրեց Հոռոմը:

— Ղարթ կսէ, հըպը ի՞նչ է. մեր էրածը
գիտէք թէ լաւ բան է... Ելի Աստծու փեշէն
կալինք. թէ լաւութեն է՝ թող էնոր ձեռքով
ըլլի, թէ մայ (մահ) է, Ելի թող էնոր ձեռ-
քով դայ. մենք էնոր ձեռքի հողն ենք, ի՞նչ
կարանք էնէ. ախըր հիմի Աստուած չիտէ,
օր ցաւ կայ, եդ ցաւը գեղ կուգայ, մենք էս-
քան մանրուխոզորի տէր ենք. էնիկ վերը-
դիէն չի տեսնի. Հոռոմի ըսածի պէս Ելի մոմ
վառենք, խունկ ծխենք, մատաղ էնենք, խընդ-
րենք ի՞նչ օր բարին է, ի՞նչ օր իրեն կամքն
է՝ ի՞ն էնէ—, խօսեց մի տարիքաւոր կին և
հառաչ արձակելով նայեց Հոռոմի երեսին:

Սակայն Արգիւրիւմցոնց Հոռոմն աւելի

քան հանգիստ էր, մինչև իսկ անվախ. փոքր
ի՞նչ լուելուց յետով նա շարունակեց.

— Հէք էլ չեմ վախենալ. զուլում ըսա-
ծըդ մարդու ձեռնէն չգայ, թէ չէ Աստծու
կողմէն եկած զուլումը՝ զուլում չէ. ի՞նչի
պիտի տխրիմ, բոլորիս վերջն էլ աճալն է,
հէչ մէկը աշխրքիս երեսը սաղ չէ մնացէ,
բոլորս էլ ուշ թէ թէզ սև հողի բաժին ենք.
թէ ակեար (եթէ որ) աճալներս եկել է՝ թո՞ղ մեռ-
նինք, հազը էս հէջուփում աշխրքէն կա-
զափինք. թէ չէ խոլեր չէ էն օր օխտը գըլ-
խանի դե գայ՝ մեզի բան չիլի. «Աստծու պա-
հած գաւը գէլը չի ուտէ»... Մէկ էլ մեռնիմ
մեր սուրբ Լուսաւորչի տուած հաւտին, Է-
նիկ մեզի հայքը իստոնեաներուս էման մի զօ-
րաւոր հաւատ է տուէ, օր մի բանի մէջ մին-
չի Աստծու մատը խառը չըլլի՝ օնչիչ չիլի:
Մենք Սուլտեցիներս Լուսաւորչի ղրկած է-
ման զի զօրաւոր սուրբ ունինք, սուրբ Գէոր-
գը —, երեսը խաչակնքելով ձեռը դէպի սուր-
բը պարզեց նա, — օր մենակ էնոր բարեխօ-
սութենը մեզի հերիք է. մենք էնոր բարեխօսու-
թանը դիմենք, երթանք դուռը չոքինք, ա-
զաւենք, մատաղ կտրենք, բարեխօս բանենք,
էնիկ մեզի լուսը կհանէ... Հէք միք դարդ
էնէ —, յանկարծ ի՞նչ օր կենսատու ներշընչ-

մամբ խրախուսուած ձայնը բարձրացըեց նա. — ես մենծ ումուտ ունիմ. մեզի բան ըլլելու չէ, և այդ խօսքերով բոլորի մէջ կասես մի կենդանի հաւատ, կազդուրող լոյս ներշընչեց:

Այդ ժամանակ Զուռօի տղէն, որ առողջապահական մասնախմբի անդամ էր նշանակուոծ, անցկացաւ դէպի գիւղի ներքին թաղը:

— Ըշտը ինքը խոլեր է ու կայ. էլ ինչ խոլեր. էնքան խոլեր-խոլեր ըսաւ, օր սոնղը (վերջի վերջով) բերելու է, խմբի միջից մըրմարցին միքանի կին և նորից հաւաքեցին բողչաներն ու քուղաները, ցրուեցին տըները...

V.

— Ախպէր, լաւ կսէ մարդը. էստեղ պարապ-սարապ նստելուն՝ երթանք չայդարէն (գետակ) իստկենք, ինչ կըլլի. հէչ բան օր չէ՝ իստկութեն է. մեր նեխիրն էնոր միջէն կանցնի ու կդառնայ. մաքրենք, թող ջուրը մի հարզով (առուռվ) վազէ, ամբոխի մէջ մտնելով խօսեց Զուռօի տղի ընկերներից մէկը:

— Բան չունիս. էս շոքին-կրակին վեկ պիտի երթալ չայդարա իստկելու. մինչի հիմի

ինչսէս եօլա ենք գնացէ՝ հիմիկուց դէնն էլ էնալէս եօլա կերթանք. հըմը խոլերն էլ կայնել, չայդարին կազէ, օր կեղտոտ ըլլի՝ գայ. իստակ օր ըլլի՝ չպիտի գայ. հա-հա, հա-հաա—, հեռւում Զուռօի տղին ցոյց տալով ամպարտաւան-ամպարտաւան ծիծաղեց արևի ծեծկած մի գիւղացի, որ սաստիկ ատում էր նըրան:

— Ե՛լ, Էլ, Սուքիաս, Մէլրօի ծոտիկ, քեզի հետ եմ, չե՞ս իմանայ—, նրան մօտենալով բարձր խօսեց Զուռօի տղի ընկերն, երբ տեսաւ, որ Սուքիասն ուզում էր ուրիշներին դարձնել իրեն կողմը. — Ի՞նչ դունչդ ծոել ես մեր Արաբօ շան պէս կհաջես, էսքան մարդուն պատճառ կըլլիս, չե՞ս թողնի չայդարէն իստկելու. օր իստկեն ի՞նչ վնաս, է, ըսա տեսնիմ:

— Հաջես դու. վնաս չէ բա ի՞նչ է. կերակի օրով արտ ու չայիր չենք երթալ, թէ մեղք է, Աստծուն հակառակութեն է, հիմի երթանք չայդարա իստկենք, թէ ի՞նչ է Աստծու զրկած հիւնդութանը դէմ կենանք:

— Ե՛, ճրագէ պըռկներ, լապշօ (մեծ բերան), խոլերն օր գայ՝ դէմ կկենամս, հա...

Այդ ժամանակ ամբոխի մէջ մտաւ Զուռօի տղէն:

—Անկաջ էրէք, սըպըլտըրիկներ (մարմնով և խելքով թեթև), անկաջ էրէք, երկու այլբ-բեմ կարդըցել էք՝ ձեզի աշխրքի փիլիսոփան զաննը կէնէք (կկարծէք). Աստուած չուզենալ գեղը խոլեր ցքել, թէ չէ չայլարա իս-տըկել չէ՝ էն օր երկինք ենինք, աստղերու վրայ ման գանք՝ էնտեղ էլ խոլեր կլրկէ:

Միւս գիւղացիները փողոցում քարերի վրայ նստուած զուարճալի հետաքրքրութեամբ լսում էին Չուռօի տղի, ընկերների և Սուքիասի վէճն և սալասում, թէ ով տւելի զօրեղ, յաղթական խօսք կասէր:

—Սուքիաս, Սուքիաս, դու օր կայնել ես էդման հակառակ կխօսիս, գիտես խոլերն ինչ բան է:

—Լաւ, ինչք չէ. գիտեմ:

—Դէ օր գիտես, ըստ տեսնամ ինչ է:

—Խոլերը ցաւ է, Աստուած է ստեղծէ, ինչպէս օր ձեզի է ստեղծէ—, վիրաւորելու մտքով պատասխանեց Սուքիասը:

—Լաւ... մարդու անպատիւ էնել հարկաւոր չէ. ես քու խօսքդ բանի տեղ չեմ դնէ... Հիմի կեցի, ես ըսեմ խոլերն ինչ է:

—Ի՞նչ է. քուկդ ըստ տեսնինք:

—Դորժ է, խոլերը ցաւ է, հըմը ստեղծողը ոչ թէ Աստուած է, ապա ձեր տների

աղբն ու դեքն է, աղտոտութենն ու կեղտոտութենն է. իստակ օր մնաք՝ բան չիլլի:

—Հա, հա, հաա, խելքի աշեցէք, իսոլերն Աստծու ստեղծածը չէ... Ինչ, ինչ...

—Հա-հա, հաա—, յարուցուեց ընդհանուր ծիծաղ. Աստծու ստեղծածը չէ...

Զուօի տղէն շշմեց:

—Դէ, լաւ, հիմի խրատ տու, թէ ինչպէս էնենք, օր աղբ ու կեղտ, աղտոտութեն ու կեղտոտութեն չըլլի, մեզի հնարք ցուց տու:

—Հնարքն էն է, օր դուռ ու երթիկ, գոմ ու տուն իստակ-փաք պահէք:

—Էդ իստակ-փաք պահէլը մենք հասկցանք. հըմը էն եզն ու գոմէշը, ձին ու կովըն օր չեն հասկնալ, մեր խօսքին անկաջ չեն էնէ, ինչ էնինք, դու ըստա... դուք ըսէք—, դէպի ամբոխը դառաւ Սուքիասը:

Սլդ խօսքի վրայ այնպիսի ծիծաղ բարձրացաւ, որ գետինը կասես ոտքերի տակ շարժուեց:

—Ե, Սուքիաս, էդ կաես հըմը, ետև էդ էնելու վեվկ կթողնի:

—Ինչք չէք թողնի—, հարցըց Սուքիասը:

—Ինչք:

— Հա:

— Բա աթար ինչ էնենք, ինչ վառենք:

— Եդոր մասին մեր փիլիսոփաները հըւը չեն մտածէ:

Չուռօի տղէն տեսաւ, որ որքան աշխատում էր լուրջ խօսել՝ նրանք այնքան աշխատում էին մասխարութեան տալ. կարծես ամբոխն ուխտել էր բոլոր ուժով նրանց ծաղրի մատնել. տեսնելով, որ զնոր էր իւր և ընկերների աշխատանքը՝ բարկութիւնից հառաչեց:

— Հըլլը, առաջ տարաւ Սուքիասը, — կսեն սուրբը շինենք, տէրն եղող չկայ՝ թէ ժամանակ չունինք, գեռ մնայ, հիմի կուզեն օր կիրակի օրով երթանք Աստծու օրը խոռինք (կոտրել, վնասել), չալզարա իստկենք:

— Այ էդ լաւ ըսէիր. էդ բանին ես էլ եմ համաձայն, ամբոխի մէջ մտնելով հախ տուեց իսօ ամին, որի սրտի վէրքը գեռ չէր անցել սուրբը չշինուելու պատճառով. և «բոլորն այդ սատանի լակոտի՝ Չուռօի տղի պատճով, որ սատանի չալզարի ^{*)} պէս գեղ էր ընկէ, էնքան ջահէլ-ջուհուին ձեռքին կխաղցնէր...»

^{*)} Կապ հենքելու քառակուսի գործիք:

— Է՛հ, ինչ օր կսենք, ձեզի համար կը-սենք. Աստուած չենէ խոլերը գեղ գայ. օր գայ՝ էն ժամանակ կհասկնաք—, լոյսը կտրած սպառնաց Զուռօի տղէն:

— Բերանդ խէր բաց, բերանդ, զաթէն էնքան ըսիք, օր վերջը բերելու էք—, լը-սուեցան միքանի ձայներ:

— Զանը՞մ, կարդըցողները միքիչ պակաս կըլին—, լսուեց մի ուրիշ գիւղացու ձայն, որից Չուռօի տղէն ամենեին չէր սպասում: Այդ երևոլթն աւելի լուսահատացրեց, ընկճեց նրան:

— Բամբակն էլ նոսր կըլի. հա, հա, հաա:

— Կուտն էլ պոլոզ, հա, հա, հաա:

— Հալն էլ պակաս, ծիծաղեցէք, է, հա-հա-հաա—, գիւղացիների ծաղրին վրայ բերեց Սուքիասն և այս անգամ ալնպէս պինդ ծիծաղեց, որ գօտին վըթ կտրուեց:

Չուռօի տղէն տեսնելով այդ խալտառակ դրութիւնը, գլուխը քարշ հեռացաւ:

— Հըպը ինչ կըլի, եփ (երբ) օր մի կար-ժումի մէջ մուկ ու կատու ըլլի, շուն ու գէլ ըլլի, օձ ու գորտ ըլլի... վայ մեզի, վայ մեզի... հըպը էլ ինչ կըլի. թողել են սաղմո-սըն ու ժամագիրքը, աւետրանն ու նարե-կը, կտակարանն ու շարականը՝ ընկել են շուն

ու կատուի, էշ ու գոմշի, ես ինչ զիտեմ
գորտ ու մկի ետև—, համոզուած խօսեց Իւօ
ամին:

—Մարդ ի՞նչալէս չըտրաքի. մենք բար-
կենդընի ուրբաթ օրն անգամ պասերս չենք
ուտէ, թէ մեղք է, եկել է, կսէ, թէ ապասե-
րըդ կերէք, իզին է. հիմի մեղք չէ, գաղէ-
թի մէջ գրած է...» Ես էտոնց գաղէթն էլ
ու իճաթ էնողին էլ—, այս անգամ լըջու-
թեամբ տաքացաւ Սուքիասը:

—Էն էլ ինչ, կալտէտ ու բշտէ, անտէ-
րը լիզուս չի էլ դառնայ՝ թէ ըսեմ, կերէք:

—Ի՞նչ, կալտէտ ու բշտէ, հա՛, հա՛,
հա՛. ո՞ղդից է:

—Որդից. լծու եզն ու կթան կովը մոր-
թեցէք. ալ որդից—, գաւէշտով պատասխանեց
Սուքիասը, կտրած գօտին ձեռում հաւաքելով:

—Տեա՛, էնո՞ր համար նաշալնիկն օր ա-
մեն օր քաղքէն Վաշիանու հիւընդներու
համար կալտէտ ու բշտէ կբերէ, կուտեցնէ՝
չեն մեռնի—, վրայ բերին միքանիսը:

—Դարտակ բան է, ջանըմ. պաս օր (որ)
ուտենք, էդով Աստծու դէմ աւելի մեղանչած
կըլինք. մեռնիլ, մեռնիլ՝ արդար, առանց
մեղքի էլ է մեռնինք, գոնէ էն աշխարքը հո-
գեստանքս դժոխքէն ազատենք. էն օր հիմի

պաս ուտենք, հըպլ էլ եփ մեղքերս քաւենք.
էս՝ լսոլեր է. բիրդան եկաւ ու տարաւ. ե-
տեւ...

—Հըլպլթ դարտակ բան է. ինչպէս
օր կանք, էնպէս շատ լու է—, լսուե-
ցին միքանի ձայներ:

—Ամենէն յաւը գիտէք ո՞րն է—, հարց
տուեց Իսօ ամին:

—Ո՞րը:

—Երժանք Տէր-Սիմօնին ըսենք, էս շա-
բաթ Մայրամ—Աստուածածնալ տօնն է, պա-
տարագ էնէ... թէ կարանք մի-երկու զըսըր
(ամուլ) կով առնինք, մատաղ էնենք, աղքըտ-
ներուն տարտընենք (բաժանել):

—Լաւ ըսէր. էդ ամենէն լաւն է, Իսօ
ամի—, նրա խօսքին հախ տուին բոլորը:

—Էնենք, էնենք, էգուցուանէն թէզը
չկալ—, լսուեց չորս կսղմից. և ամբոխն ու-
զում էր ցըուել, տեսաւ որ մի երիտասարդ
երկու ոտքը չորս արած վազում էր դէպի
գիւղի ցածի թաղը:

—Նիկօ, տօ նիկօ, էդ ուր էգման հա-
ւարով—, ձայն տուեց ամբոխի միջից մէկը:

Սակայն նիկօն պատասխան չտուեց,
վազելը շարունակեց:

— Տօ, Խըրխնդուկ *) քեզի հետ ենք, չես
իմանայ:

— Հէք, հէք:

— Ինչպէս թէ հէք. էդ հէքի բան չէ.

մի պահէ:

— Ե՛հ—, ձայնեց նիկօն և հեռացաւ:

— Տեսնիս էդ ի՞նչ է պատահէ, օր շտա-
պով կվագէ:

— Տօ, ծռաւ դէպի Զուռօի տղի տուն:

— Հա՛, ծռաւ, ծռաւ ու մտաւ նես:

— Առըթ մտաւ նես:

— Ի՞նչ կսէ:

— Հրէն, էն էլ Զուռօի տղէն, դեղի շի-
շէն ձեռքը, երկուսով դուս եկան:

— Տօ, մէկդ ու մէկդ մէկ վաղեցէք իմա-
ցէք ի՞նչ է:

Վազ տուեց նրանցից մէկն ու գոյնն իս-
պառ գնացած, շունչը կտրուած վերադար-
ձաւ:

— Ի՞նչ է, տօ:

— Խոլեր:

— Խոլեր:

— Հա՛. խոլերը Վարդիկենց հարսին բըռ-
նել է:

*) Անպէտք, երկար, հաստ բոլու:

— Ի՞նչ կխօսի:

— Հաղորդ. եկել է Զուռօի տղի ետևէն:

Վալրկենաբար բոլորի երեսի գոյնը թը-
ռաւ, «լեզուները փորերն ընկաւ» և լոեցին,
ինչպէս լուսմ են գորտերը, երբ նրանց կըը-
կուալու տեղը քար ես գցում:

VII.

— Ա՛ղի, Ա՛նախաս:

— Ի՞նչ է:

— Ա՛ղի, իմացէլ ես. կսեն, թէ Արգիւ-
րիւմցոնց Հոռոմն էրած (երազ) է տեսէ, հա՛,
դո՞րթ է:

— Ի՞նչ էրած, չեմ իմացէ:

— Հըպը՛, կսեն թէ սուրբն էրծել է:

— Քա, վեր սուրբը:

— Մեր գեղի սուրբը, սուրբ Գէորգը:

— Առըթ:

— Հաղորդ. միակամ (միթէ) չես իմացէ:

— Զէ:

— Հըպը՛, սաղ գեղն էնտեղ է թոփ եղէ:

— Ինչի:

— Գնացել են էրածը պատմել տալու.

կուգանս. արի մէտեղ երթանք:

— Լաւ կըլլի. քիչըմ համբերէ, մինչի

տղէս փաթթեմ. հողը թընրէն նո՞ր եմ հանէ, դեռ տաք է, փոել եմ օր պաղի. էդտեղ կեցի, էս սհաթիս օրոցքը դնեմ, գամ — , ասաց Անախասն ու վազեց ներս երեխան փաթաթելու:

— Դէ թէզ էրա — , նրա ետևից շտապեցրեց խօսող կինն ու դռանը մնաց կանգնած: Նա ուշագրութեամբ դիտում էր, թէ ինչպէս տղամարդ ու կնիկմարդ շարէ-շար ու խումբ-խումբ կտուրների վրայով ու փողոցներով վազում էին Սրգիւրիւմցոնց Հոռոմիմօտ, տեսած երազը պատմել տալու:

— Աղջի, հիմի շատ նեղն է Վարդիկենց հարսը:

— Հըպը Բնչ է, նեղն է. հարի (մինչի) իրիկուն եա ապրի, եա չապրի:

— Մէկէլ հարսն էլ կսեն բռնուել է, դո՞րթ է:

— Կո՞րթ է. էն էլ առաւ օտոս է բռնուել:

— Անընիդ մեռնիմ, Աստուած. էս Բնչ զուլում էր բերիր մեր գեղի գլխուն:

Ալդպէս խօսում էին Սրգիւրիւմցոնց Հոռոմիմօտ գնացող կանանցից երկուսը:

Քառորդ ժամից դուրս եկաւ Անախասն ու սպասող ընկերուհու հետ ուղղուեց դէպի երազատես կնոջ տուն:

Նրանք փողոցը նոր էին ծոռւել, տեսան, որ Սրգիւրիւմցոնց Հոռոմիմ դռանն այնպիսի հոծ բազմութիւն էր հաւաքուել, որ ոտ դընելու տեղ չկար: Հաւաքուած, պատմել տուող ամբոխը տան ներսը չգետեղուելով՝ երազատես կնոջ առել դուրս էին բերէ: Ինքը Հոռոմը, որպէսզի բոլորին լու երեար և ամենքը նրա ձախնը լսէին՝ բարձրացել էր մի բարձր քարի գլուխ և լսողներին հաւաքել չորս բոլորքը: Ալդ տեղից նա պատմում էր իւր տեսած երազն, իսկ հաւատով լի ժողովուրդը ուշի-ուշով լսում:

Անախասն ու ընկերուհին երբ մօտեցան, տեսան, որ երազատես կինը հայեացքը յառած երկինք, ձեռի զանազան շարժումներով մերթ Սրբի սարը, մերթ Կանաչ գօլի (լիճ) ճամպին ցոյց տալով խօսում էր. «Եկաւ, եկանաւ, հըմք էն է գեղը ոտք դրեց՝ մէկ էլ տեսնիմ ինչ, մեռնիմ զօրացը, մի լըռունդ զըռ (բոզ) ձի հեծած...»

— Աղջի Հոռոմ, մենք նո՞ր եկանք. Նորէն պատմե, էդ չեղաւ, մենք չիմացանք, նորէն:

— Հա՛, հա՛, լաւ կսեն, նորէն-նորէն, մենք էլ ուշ ենք եկէ, ծերէն չիմացանք — , Անա-

խասն ու ընկերուհին միացան նոր եկած միքանի տղամարդու ու կնիկմարդու հետ:

— Զանըմ, թողէք մէմ խեղճը վերջացնէ. էս քանի հեղ եղաւ, ճոթէն (ծալը) կսկսէ՝ հէչ մէմ վերջը չհասանք—, դժգոհութիւն յայտնեցին շատերը, որոնք սկզբից դալով պատմել էին տուել, սակայն երբէք վերջը չհասել:

— Նորէն, նորէն—, լսուեցին նորից միքանի նորեկների ձայներ, որոնց զիջանելով Հոռոմն սկսեց.

— Է, դէ լաւ անկանջ էրէք, օր էլ կրկնել չտաք. էս քսան հեղ եղաւ սկսելս, կէսն հասնելիս, ետ դառնալս ու նորէն սկսելս. հերէք է. թէ նոր եկող ըլլի՛ էնոնց էլ դուք պատմեցէք. դէ հիմի անկանջ դրէք:

Բոլորը լուեցին և շնչերը կտրած պատրաստուեցին լսելու. այդ րոպէ Հոռոմը կասես նրանց համար Սինայի պատգամներով մի նոր Մովսէս լինէր, որ ժողովրդին նոր աւետիս էր տալու:

Ընդհանուր վիշտը միացրել էր նրանց, մի հոգի, մի մարմին էր դարձրէ: Հոռոմի պատմութիւնը կասես նրանց համար «հոգու դեղ» լինէր:

— Եանի արեգակը նոր էր ծուէ մէրը

մտնելու, ելալ արտերը սիպեղ քաղելու, օր աղը դնեմ. տեսնիմ, օր մէ կարճ մարդը, գլուխն երկան, սե-սուրուլիկ փափաղ դրած Կանանչ-գոլի կողմէն դէմի գեղ կուգալ, ձեռն էլ սե գաւազան ունի բռնած:

— Գրող ելնի, ցաւն է:

— Հա, անկաջ էրէք, օր տեղակի պատմեմ. էդ մարդը մի հալիւոր (ալեոր) մարդը էր, ճեր-ճերմակ միրուքով. միրուքն էնքան երկան էր, օր մինչի ծնկներն էր հասէ. աչքերը փոթուտած, օր տեսնէիր՝ լեղիդ փորիդ մէջ կպատռիր. կարճ յոտներն ամուր-ամուր գետնին զարկելով մեր գեղի ճամբէն բռնել էր, կուգար. հագածն էլ երկան ճտանի սե սապոլկներ էր:

— Սեր թէզ է—, լսուեց միքանի ձայն:

— Ես էլ եանի թէ արտի թմբի հետ ճամբու քով կայնել եմ. մէկ էլ տեսնիմ ինձի դարձաւ, թէ.

— «Քուրս, Սուլտուալ ճամպէն էս է, սխալ խոյ չեմ եկէ:

— «Լսի հա, էս է. ինչի՞ կհարցնես, ում կուգես»: Ես ինչ գիտեմ, ինքս անտեղակ, թէ ինչը ինչոց է: Հսաւ.

— «Ինձի խոլեր կսեն. իմացել ես. Ես մինչի հիմի Վաչիան էի. Վաչիանու անճախ

(Հազիւ) պրծալ. Հիմի եկել եմ ձեր գեղը.
Հըմը շատ չախին է (դժուար):

— Հըմը էդ խօսքը բերանն էր, մէկ էլ
տեսնիմ մի լըսունդ զըռ ձիաւոր բիրտան-
բիրա երկան մրգաղը ձեռքն եկաւ, առաջը
կտրեց:

— Մեռնիմ գօրքին:

— Յոտացը մեռնիմ —, շշնջաց ամբոխն և
երեսը խաչակնքեց:

— Էդ ձիաւորը մի ջահէլ, լիքը լիպասով
(դէմքով) երկան սև պեխերով տղամարդ էր.
իւղանկիւով (ասպանդակ) ձիու կողերին զար-
կեց ու ըստաւ.

— «Էդ ուր էդման:

— «Հէջ, Սուլտան քիչ գործ ունիմ:

— «Իրաւունք չունիս Սուլտան մտնելու.
Հիտես, օր էդ գեղը տէր ունի:

— Խոլերը, թէ.

— «Տէր վեպ է»:

— Եանի թէ չիտէ:

— «Ես եմ:

— «Ի՞նչ էնեմ, թէ տէրը դու ես. դաւ-
թրիս մէջ գրած է՝ պիտի մըտնիմ. քեզի ինչ:

— «Հիմի «քեզի ինչ» խրատ կուտամ. ում
հետ կխօսիս. մրգաղս քաշեմ, փորդ օխտը
տեղէ կծակեմ. դու չիտես, օր էս գեղն ա-

ոանց իմ հրամանիս օնչով չի կարալ սուք դնէ.
դու չխենս, օր ինձի Խելառ սուրբ Գէորգ
կսեն:

— Յոտացդ տկին մեռնիմ, մուրակ տը-
ռող սուրբ Գէորգ.

— Անընիդ մեռնիմ, զօրաւոր սուրբ Գէ-
որգ.

— Զօրակ մեռնիմ, Խելառ սուրբ Գէ-
որգ.

Լսուեցին շատ ձայներ. և ամբոխը հայ-
եացքն յառեց դէպի սուրբը (շինութիւնը),
որ հրաբխալին բարձր բլուրի վրայ երևում էր:

— «Զէ, ես պիտի մըտնիմ. ես հրաման-
մրաման չխեմ» —, ըստ ու քշեց առաջ, սո-
ւը հարի Վարդիկենց դուռը հասուց:

— Տեսաք. էնոր համար Վարդիկենց եր-
կու հարսը մէտեղ բռնուան. մէկն երէկ գի-
շեր, մէկն էլ էսօր առաւոտ — , խօսեցին մի-եր-
կուսն ամբոխի միջից:

— Ես էլ կայնել եմ մաթ-մաթ (ապուշ-
կտրած). կաշեմ, թէ էդոնց վերջը ինչ պիտի
ըլլի:

— Ետև, ետև, աղջի, թէդ արա — , համ-
բերութիւնները հատած շտապեցրին շատերը,
որոնք սրտի տրոփիւնով սպասում էին, թէ
ինչ էր իրանց խօստանում Հոռոմի երազը:

—Ետեւ, մէկ էլ տեսնիմ էս սուրբ Գէրգը, մեռնիմ զօրացը,

—Ընհ, մեռնիմ անընին—, էլի խաչակնքեցին երեսները շատերը:

—Մրգաղը քաշեց ու ձին էդ խոլերի վրայ քշեց. ձին ետի ոտների վրայ ծառս ելաւ, հըմը կուզէր օր էդ խոլերին լոտաց տակ ցքէր, զջնամիշ էնէր, հում-հում ուտէր:

—Զջնամիշ էր էրէ, է, ինչ կըլիր—, նորից լսուեցին միքանի բացականչութիւններ:

—Էդ եղդեար (ծեր) խոլերն արթըղ փափի օր պըծիս. էն կփախի՝ էս սուրբն ետևէն, էն կփախի՝ էս սուրբն ետևէն. քշեց տարանաւ մինչի գեղի սինոռի (կալուած) գըլուփը:

—Յոտացդ տկին մենք դուլ ու զուրբան ըլլինք—, կրծքերին խփեցին միքանի կին և գլուխները շարժեցին:

—Տեսանը, ըշտէ էդման հախէն կուգայ:

—Արեգակն արթըղ մէր մտնելու վրայ էր—, շարունակեց Հոռոմը,—տեսայ, օր շատ հեռացան, երկուսն էլ աչքէս կորան՝ ըսի. «գիշեր եղաւ, էլ սիպեղ քաղել չիլի, երթամ տուն տեսածս պատմեմ». էդ մտքի հետ էի, մէմ էլ տեսնիմ էդ դըռ ձիաւորը, սուրբ Գէրգն առաջս կտրեց.

—«Խոյ տեսանը, խոյ տեսանը մինչի ո՛ւր քշեցի խոլերը, գեղէն ինչըղ հեռեցուցի. դէ հիմի գնը ձեր գեղացոց ըստ, օր ես քանի էստեղ եմ, էս սարի գլուխը՝ էս գեղն էլ խոլեր չի գալ. հըմը ըստ, օր Զուռօի տղի, մուռօի տղի խօսքի անկաջ չէնեն, գան վրէս դայդով-դանոնով (կարգ ու կանոնով) ծածկեն, թէ չէ էն զուլումը կբերեմ գեղի դլխուն, օր «մէրը մանուկը կմունայ»... Էս քանի տարի է էստեղ եմ, վրէս բաց է, պատերս քանդուել են, հէջ մէմ չեկան մարդավարի չշածկեցին, չշինեցին...» ըստաւ ու ձին քշեց: Ես ուզեցալ, թէ գեղ վազեմ, թէզըմ իմաց էնեմ գեղացոց, բիրդան լոտքս քարի դիպաւ, վէր ընկալ... Զարթիմ, օր ինչ. ոչ սուրբ, ոչ խոլեր. տեղիս մէջը պաւկած եմ: Արթըղ ելայ, ճրագ վատեցի, երեսս խաչակնքեցի, աղօթք էրի, մինչի լուս էլ չպառկայ...

Երազի պատմութիւնը լսող, հաւատացեալ ժողովրդին ինչ-որ անսովոր, կախարդական գրութեան մէջ գրեց. նա մի-երկու վայրկեան լոռութիւն պահելուց լետոյ իրար խըռնեց. աղմուկն ու աղօթքի աղաղակներն իւրար խոնուեցին, և ամեն մարդ մօտինի հետ սկսեց խօսիլ.

—Տեսանք, մենք օր կսէինք, թէ ամեն

բան գարտակ խօսք է, էլի երթանք սըբի լոտներն ընկնինք, աղօթք էնենք, արուն-արտասուք թափենք՝ անկաջ չէին էնէ. տեսար ինչպէս մեր խօսքը թագուորցաւ:

Հա, հա—, վրայ էին բերում միւս-ները—, մենք էնոր սուրբ գորքին մեռնինք:

— Դէ, ձեզի տեսնիմ, էլ միք աշէ. էլ սպասելու ժամանակ չէ. ինչ կէնք էրէք՝ էսօրէն թէզը չկայ՝ գնացէք սուրբը ծածկեցէք, օր մեզի էսպէս զուլումէն ազատեց—, ասաց Հոռոմն ու իջաւ քարի գլխից:

Բոլորը վեր կացան:

— Դէ, Անախաս, էլ չսպասենք. մի-մի քուղա առնինք, երթանք եղ ջընդենք (ժողովել), մեկելոնք էլ թող ուրուշ բան էնեն—, ասաց Անախասի ընկերուհին:

— Մենք էլ երկուսով երթանք հաւկիթ ժողվելու—, վրայ բերին ուրիշ երկու կին և վազ տալով մի-մի քուղա ձեռներն առան, փեշերը վեր քաշեցին գոտիները զարկին, բապուճներն ու գուլպաները հանեցին, բոբիկ ոտով ընկան գիւղը:

Նրանց օրինակին հետևեցին և ուրիշները:

Միքանի տղամարդ էլ մի-մի ջուալ շալակած, մի թերթ թուղթ մի տիրացուի ձեռք տուած, սկսեցին տները ման գալ հաց հաւա-

քելու: Միքանի ուրիշներն էլ սկսեցին փող, գառ, ուլ, ոչխար, հորթ, մոզի և ալյն հաւաքել:

Էլ տուն չմնաց, որ մի-երկու կոտ գարի կամ ցորեն չտար. էլ տանտիկին ու քէլվանի չմնաց, որ եղ ու հաւկիթ չտար, էլ ջահէլ հարս ու ազապ աղջիկ չմնաց, որ ճակտէն մի ոսկի չկտրէր կամ թէ չէ մի ջուխտ գուլպայ չտար. էլ օջազ չմնաց, որ գառ, ուլ, մոզի, հորթ, ոչխար կամ փող չտար:

Ֆողովարարութեան քանակը հասաւ մինչ երեկոյ մօտ մի հարիւր րուբելու: Այդ բոլորը փող դարձնելով յանձնեցին միքանի հոգու, որ բոլորովին նոր շինութեան համար հոգս քաշեն:

Եւ արդարե միւս օր բոլոր գիւղը սուրբըն էր հաւաքուել. երիտասարդները փորում էին, հասակաւորները քար ու փայտ կրում, հաբսներն ու պառաւ կանալք գողնոցներով հող կրում. ջահէլ աղջկներն ակտիներն (իճաթ) ուսերին գիւղի մօտից վագող աղբիւրից քուղաներով ջուր կրում. ամեն մի ուստա իւր գործիքներով արիւնքքատինք մտած ձրի աշխատում. իսկ Տէր-Սիմօնը վերարկուն հանած, անթարու (կապայ) փեշերը վեր քաշած ման էր գալիս, ուրախութիւնից երկինք

բարձրանում, շրթունքներն ու աչքերը շուտ-
շուտ խըփխացնելով երեմն հրամայում, ել-
քեմն խրախուսում, երեմն էլ «օրհնեալ լի-
նիք, որդիք, օրհնեալ» խօսքերով օրհնում,
գովում և հոգով փառաւորւում. իսկ ծերու-
նիներն իսօ ամու շուրջը վէր թափուած չը-
պուխները դնչերին հոգով միմիթարւում էին...
Մի խօսքով ամեն մարդ աշխատում, շի-
նում, աղօթում, օրհնում, իւր լուման ընդ-
հանուր սեղանի գանձանակն էր ձգում:



**ԹԵ ԻՆՉՊԻՍ ՄԱՐԴԸ ԿՐԹՈՒՄ Է
ԿՆՈՇԸ**

I.

— Տէր-տէր, տէր-տէր, դուռը բաց—,
գիշերային մթութեան մէջ Ա. քաղաքի քա-
հանալի գուռը երկիւզով բաղխում էր մի հա-
սակաւոր մարդ.— տէր-տէր, եա, տննաշէնն
իսկի չի իմանայ. մարդ էլ էդպէս խորունկ
քնի—, ինքն իրեն քթի տակ խօսում էր նա
և նորից գուռը կամաց բաղխում:

— Վեզ է—, վերջապէս ներսից լսուեց մի
կանացի ձայն:

— Վաշ, հաւտաս տէրտէրը տունը չէ,
օր իրիցկինը դուս եկաւ. էսոր բան ըսել
չիլլի. էս անգամ օր ձէնս առել է՝ հաւտաս
իսկի դուռը չբանալ:

— Վեզ է—, երկրորդ անգամ լսուեց տէր-
տէրակնոջ ձայնը:

— Ես եմ իրիցկին խանում —, երկիւղած ձայնով պատասխանեց ծերունին:

— Դու վեզ ես:

— Նաշարենց Աղամը:

— Նաշարենց Աղամը —, կրկնեց տէրտէրակինը, բարկացաւ, ինչպէս իրենք են ասում Փրայոն կտրաւ և դռան ետևից գոռաց:

— Ի՞նչ պիտի էնես տէրտէրին. տէրտէրը քնած է... տէրտէրը տունը չէ... Վուշը, մուխերդ չմարի. գիշեր տէր-տէր, ցերեկ տէրտէր, չբերգաք էլ... Զէ, չիլի —, ձալնը աւելի բարձրացնելով շարունակեց տէրտէրակինը. — Քանի անգամ ըսել է, թէ «կկոռուիք, ինչ կէնէք էրէք՝ գիշերը միք գալ, ինձի ձէն միք տա»:

Ծերունին տեսաւ, որ տէրտէրակինն իմաց տալու չէ տէրտէրին՝ մտածեց մի հնարի դիմել, որ մի կերպով վերկացնել տալ նրան, և ասաց.

— Իրիցկին խանում, չարդ տանիմ, մինեղանա, էդոր համար չէ կանչելս:

— Էդոր համար չէ, բա ինչի համար է —, սորից չարացած վրայ բերեց տէրտէրակինը:

— Անթառի թոռը հիւանդ է, իրեն ման-

չուն զրկել էր տէրտէրի ետևէն՝ էկել, տունը չէր գտէ. Հիմի ես եկալ, էդոր համար ուշացայ... Իրիցկին խանում, գլխուդ ու արեւուդ մատաղ, ըսա շտապի, թէ չէ տղէն մեղք է, անհաղորդ կրլիի:

Տէրտէրակինն էլի ուզում էր խաբել, թէ տէրտէրը տանը չէ, բայց անհաղորդ բառը լսելուն պէս գնաց զարթեցնելու ամուսնուն, որ այդ օրն երկու մեռել իրար հետթաղելով և միքանի ծխակատարութիւններ անելով սաստիկ յոգնել և ժամը եօթից պառկած անուշ խոմփացնում էր:

— Տէրտէր, վեր կաց —, ոտի ծալրով նըրան բզելով խօսեց էրէցուհին. — Նաշարենց Աղամ ամին եկել է, քեզի կկանչէ:

Տէրտէրը հազիւ տեղից շարժուելով հարցրեց.

— Հա, ինչ է. չըլլի՞ էլի կռուի համար է. ըսա տունը չէ:

— Զէ, կսէ Անթառի թոռը սաստիկ նեղըն է, թող գալ հաղորդ տալ:

Քահանան վեր կենալով տրորեց աչքերն ու երեսը և կիսահագնուած դուրս գնաց իմանալու, թէ այդ ինչ Անթառի թոռ էր, քանի որ ալդպիսի բան չկար. ինքը հէնց այդ օրը գնացել էր Անթառենց տուն տասնու-

վեց ամիս ապառիկ մնացած կնքահալս մի
աբասին ստանալու:

—Ադամ ամի՞:

—Օրնեա ի տէր ~, նեղը մնացած՝ գըլ-
խարկը վերցնելով երկիւղած բարեեց Ադամը:

—Աստուած օրհնէ. դու ես, էսպէս կէս
գիշերով ինչ խաբար:

—Տէրտէր ջան, կարդի՛դ մեռնիմ, իրա-
րու ջարդեցին, ինչ խաբար. մէկ հասի, էլի
իլլաճը դու ես—, այլ ևս անկարող լինելով
ճշմարիտը չասել, երկիւղով հազիւ խօսեց ծե-
րունին:

—Վե՞վ:

—Մեր տղերքը, վե՞վ:

Տէրտէրակինը, որ ամուսնու ետևից դուրս
էր եկել դուռը փակելու, լսելով ալդ՝ յօնքերը
սաստիկ վրայ բերեց և հէնց ալն է ուզում
էր բերանը բաց անել և «զորս դու պատուի-
րեցեր» նախատել ծերունի Ադամին, որ հա-
մարձակուել էր իրեն խաբել և սուտ խօսելով
քահանային անուշ քնիցը զարթեցնել տուել՝
բայց ամուսնու ներկայութիւնից քաշուելով,
խոժոռ հայեացքով նայեց ծերունու երեսին
և քթի տակ ինքն իրեն փնթփնթաց. «ապա-
սիր դու, մէկ էլ կուգաս տէրտէր կկանչես,
հալդ կտեսնիս... ցերեկ հանգիստ չունինք,

գիշեր հանգիստ չունինք. ամեն մի ապուռ-
ճուպուռ բանի համար՝ «տէրտէր»... Տէր
Աստուած, էս քաղաքն էլ ուրիշ տէրտէր
կայ, թէ մենակ իմ տէրտէրս է... և ոտնե-
րը գետին զարնելով գնաց ներս:

—Էդոր համար է մարդու գիշերն ան-
հանգստացնեն, ախպէրս, մարդու էլ քնէն
վեր կացնեն. ձեզի քանի անգամ ըսել եմ,
թէ կկռուիք ինչ կենէք էրէք՝ գիշերը միք
գա, ինձի միք վեր կացնէ...

—Տէրտէր ջան, ինչ էնեմ, ոտքիդ էն
տակը պագնեմ, ներող եղի, մեր տէրը դու
ես, քեզանից սաւալի (զատ) էլ ում դիմենք.
մենք է գիտենք, որ մեր էրածն անքաղաքա-
վարի բան է, համա ինչ էնեմ, ինչ ձուն
(ձիւն) տամ գլխում... իրարու թամամ ջար-
դեցին, ոչ էն խօսք հիսակնալ, ոչ էն. էլ մազ
ու միրուք չժողին՝ փետեցին, էլ հօր գանկ
(գանգ) ու կող չժողին՝ իրար խառնեցին, էլ
դագանակ ու աման չմնաց՝ մէլդան բերին,
էլ դուռ ու դրկից չմնաց՝ սաղ աշխարքը գըլ-
խներուս հաւաքեցին... բիլաքիմ ոչ ըլլէին
էզոնք հայ, որ իրենց էլ խախկուխայտառակ
էրին, մեզ էլ.

Քահանան այդ լսելով այլ ևս չխօսեց.
վերարկուն անձը գցեց և գնաց:

—Աղամ ախալէր —, ճանապարհին հարցեց քահանան, — ախր էդոնց դարդն ինչ է, ինչ ունին իրարու մէջ բաժնելու, օր տարին-տասներկու ամիս իրարու հետ կկռուին, չըլլէ՞ էնպիսի մի բան կայ...»

—Ես էլ չիտեմ, տէրտէր ջան. ես էլ չիտեմ, թէ էդոնց կռուի պատճառն ինչ է. ես էլ շաշմել մնացել եմ. մէշտեղը մի բան չկայ. իմ է խելքս չի հասնի... Առաջ օր նոր պըսակուան՝ մեր տունն էին. իրարու հետ եօլա չգնացին. հարսս կկռուիր, թէ, Աստուած օդորմի հոգուն, «կեսուրս մարդուս խրատ կուտայ, վրէս վեր կվարէ», վերջն էլ կայնաւ, թէ «ես էստեղ չեմ մնայ, ես կերթամ մարանց»: Տեսանք որ չիլի՛ իրեն էլ, մանչուս էլ զրկեցինք մարանցը. էնտեղ էլ տղէս սկսեց, թէ «զոնքանչս կնկաս բաներ խրատ կուտայ, լիզու կիսառնէ... Ես տղամարդ ըլլիմ, ու կնկայ պէս լաշակ ծածկած աներանցս տուն հարս երթա՞մ... ըսել է ես կնիկմարդ եմ. չէ, դաբուլ չեմ էնէ. չեմ մնայ»:

—Ետև:

—Ետև տեսանք օր ճար չկայ, էդ տեղից էլ դուս բերինք, առանձին օդա բռնեցինք, տունուտեղ էրինք էն ումուտով, թէ էդտեղ իրարու հետ սիրով կըլլին, եօլա կեր-

թան. Համա տւելի՛ վատ. Հիմի օրը տասն անգամ կրակ կկտրին, իրար վրայ կվազեն, կերթաս մէկին կիրատես, մէկելը կսկսէ. մէկելն կվազես՝ առաջինը կտաքնայ... Ա՛խ, տէրտէր ջան - , սիրով քաշելով շարունակեց ծերունի Աղամը. —Ժամանակս է խարաբ, ժամանակս. հէյ գիտէ հէյ. մեր ժամանակը վեվկ էր տեսէ, օր հարսը կեսեր, եա կեսարոջ դէմ քերան բանար, պատասխան տար, եա թէ չէ երեսի եափաղը ետ տանիր. վեվկ էր իմայէ հարսի ձէնը, վեվկ էր լսէ, օր տղէն թողնի իրեն հօր օջաղը, մի կնկայ համար էրթայ աներանցը, եա թէ չէ երկու-երեք օրուայ պսակուած՝ բաժնուի, ջոկ տուն ըլլի... Հիւլիւա կէնէին, մի մատ մոմ կշինէին, չորս գիէն վրէն կիսնդային, տոսխա կդարձնէին... Հըմը հիմի, վայ ինձ, վայ ինձ, ինչ ըսեմ, հալքաթ մի մեղք գործած ունինք Աստծու գէմ, օր մեզ վրայ էսպէս պատուհաներ կըզրկէ, թէ չէ հայքը իստոնէի տունը Քրիստոսի տուն պիտի ըլլի. մեծը պիտի խօսի, պըստիկը պիտի լսէ...

Քահանան, որ երբեմն լսում էր Աղամի խօսակցութիւնը երբեմն ոչ, և «շիտակ կսես, Աղամ ամի, շիտակ, խէրն էլ էն ժամանակն էր, շառն էլ» խօսքերն էր վրայ բերում և

գաւազանն ածմծելով մթութեան մէջ ճանապարհ գտնում, որ շուտով վերջացնի, գնայ կիսատմնացած քունը լրացնի, ալդ ժամանակ տեսաւ, որ արդէն հասել են:

— Ես չեմ տունը:

— Հա, ես է, ասաց Աղամն ու առաջ անցնելով դուռը բաց արեց:

II.

Դրացիներն արդէն իրենց պարտքը կատարելով, ալսինքն Մանուկին և Սանամին իրարից բաժանելով ցրուել էին իրենց տները: Իսկ Մանուկը կնոջը տանը մենակ թողնելով գնացել էր դուրս: «Նա խիստ վրդովուած էր զգում իրեն, որ իւր, ալսպէս ասած տղամարդկալին հրամանները չեն կատարւում, կամքը չէ իրագործում և ինքը դեռ ընդհակառակը անպատուած էլ էր դրանով: Իսկ Սանամը օրօրոցի կողքին մենակ նստած, «վայ մարիկ ջան» կանչելով, հեկեկալով լաց էր լինում:

Քահանայի ներս մտնելուն պէս Սանամը վեր կացաւ, աջն առաւ, հրաւիրեց սենեակում գտնուած միակ օթոցի վրայ նստելու:

Փոքրիկ թիթեղեայ հասարակ լամպարը

հազիւ էր լուսաւորում սև քարերով շինած սենեակի պատերը և հողէ լատակը, որի ընդհանուր դատարկութիւնը կատարելապէս պատկերացնում էր նրա մէջ կեցողների ամենատեսակ աղքատութիւնը:

— Ո՛րդիս, ասա տեսնիմ, ես ի՞նչ կպատահի, օր օրը տասն անգամ ջիլիթ-դալիսան կըլիք, դուռ ու դրկից գլխնելուդ կհաւաքէք, վրէներդ խնդացնել կուտաք...

— Տէր-տէր ջան, յոտքդ պազնեմ, ըսեմ մէկ իմացի, թէ ես սուչ (յանցանք) ունիմ՝ երեսիս թքէ՝ մի-երկու հատ էլ գլխուս զարկ, զաբուլ եմ. ախր տարուելու բան չէ, տէր-տէր ջան, Աստծու մի բոբոլական կրակ է. ամեն մի դարդկակ բանի համար դականակը կառնի ու վրայ կվագէ...

— Դէ՛ ինչ էնենք, որդի, դու էլ մի քիչ համբերէ. կնիկմարդ ես, թէ մի անգամին պատասխան տաս, մէկել անգամին սուս կեցի. տղամարդ է, թող խօսի-խօսի, չար սահման անցնի... կնիկարմատ ասածդ մի քիչ էլ պիտի մարդուն հնազանդ ըլլի, լսզուն իրեն պիտի պահէ:

— Հա, հա, ըսա, ծառալ եմ օծեալ կարգիդ, ըսա, բալքի էդոր բան հասկցնես —, քթի տակ ինքն իրեն խօսեց ծերը, որ պատ-

րաստռում էր խօսելու, բայց հերթ չէր գլունում:

—Տէր-տէ՛ր ջան, էդքանն ինչպէս չի-տեմ, գիտեմ. գիտեմ, որ կնիկարմատը պիտի իրեն էրկան հնազանդ ըլլի. իհարկէ հայ-քրիստոնէի կարգն էլ էդպէս է. հըմը մէկ պատմեմ իմացի՛, յետև տես, թէ մեղաւոր եմ, ինչ կուզես ըստ:

—Ըստ տեսնիմ:

—Տէր-տէ՛ր ջան, ինձի օր չի ցուց տալ, օրը տասն անգամ կդնէ ու կծեծէ. ամեն տեսակ նեղութեն ու զրկանք կտանիմ, հըմը ծեծ չեմ տանի. ինքը էրկիմարդ է, ուժով է, կռուինք կը թէ չէ, կտեսնի օր չիլի, դականակը կառնի ու վրէս կհասնի. գու գիտես, փառք Աստծու, կերսարս էլ էստեղ է, գիտէ, մարդս ուրսւշի գուռը խզմաքար է, ամսական բոլոր-մոլոր չորս մանէթ հախ ունի. է՛, էդով մարդս ինչ պիտի կառավարուի. հըմը յոտքիդ տակի հողն ըլլիմ, աղքըտութեն էլ կտանիմ, անօթութեն էլ կտանիմ, տկլոր էլ կմնամ, գիշերներն առանց ճրագլուսի էլ կնստիմ, ինչ պիտի էնեմ, իմ զսմաթլս էս է եղէ, պիտի տանիմ, հըմը էդքան դարդի մէջ ծեծ չեմ տանի. ես ամանաթ ջան չունիմ, օր ամեն անգամ դնէ ու ջարդէ:

Հեռի սուրբ կարգէդ, գեօվդէս (մարմինս) օր բանամ՝ դականակի տեղերը կապուտ-կապուտ-կել, չիպուխ-չիպուխ կայնել են, ախը ես մեղք չեմ. ինձի էլ մեր է բերէ: Ուր է, մեղք ունենամ, հա, ինչքան օր կուզէ թող ծեծէ, իրաւունք ունի, յոտքի տակ թող առնի, սըպանէ, չանըմ, կսեմ, թէ մեղաւոր եմ, կծեծէ. հըմը անմեղ, անմեղ տեղս տէր տէր ջան, մեղք չեմ ես... աղազակեց Սանամն ու սկսեց նորից բարձրածալն լաց լինել:

—Ախը գու էլ կխօսիս, կխօսիս, քո սու չըդ չես ըսէ. գու էլ մի մեղք կունենաս, օր էրիկդ կծեծէ. թէ չէ մարդ էլ իրեն կնկան տուանց պատճառի ծեծէ. ես ինչի իմ կնկան չեմ ծեծէ. մէկ քու էրածդ էլ ըստ:

—Ըսեմ, տէր-տէր ջան, ըսեմ —, լազըքիչ դադարեցնելով շարունակեց Սանամը. — ըսեմ էրածս, տես էդտեղ մեղք կա՞լ:

—Դէ ըստ իմանամ:

—Ինքը Խըթըզ էր գնացէ. մօրքուրս եկաւ մեր տուն, թէ «Սանամ, տղէդ առ, երթանք քիչ բաղչաները ման գանք»: Ես էլ տղէս տուալ, գնացի: Ետ դառնայներուս ժամանակը մօրքուրս շատ ստիպեց, թէ երթանք մարանցդ, մօրդ տեսնինք, էնդից իջնինք առուն: Ես չէի ուզէ. է՛ն «առէք-կերէքը» վը-

կայ չէի երթալ, հըմը զօրով տարաւ։ Մէկ
էդ։ Մէկ էլ մէկ պստի դարտակ պատուկ ու-
նէի. մէրս պանիր էր առէ, աղն էր գրէ. ի-
րենց պատուկները չէին առէ. մի քիչ մնա-
ցել էր՝ իրենց խանթի աշկերտի հետ խաբար
էր էրէ, թէ «Սանամ, պուտուկդ երկօրով
զրկէ, մի քիչ պանիր է մնացէ, աղը դնեմ,
եփոր պարպի՛ էլի ետ զրկեմ»։ Ես էլ դրի,
զրկեցի։

— Եդ երկուս. էլ—, ծիծաղելով հար-
ցրեց քահանան։

— Մէկ էլ, տէր-տէր ջան. Ես բարձը կը
տեսնիս, օր տղիս գլխու տակն է։ Տղէս ա-
ռաջ գլխու տակը բարձ չունիր. մի պստի
մինտար ունէի, քանդեցի, տղիս գլխի տակի
համար բարձ կարեցի։ Եդ երեք բանն է մեղ-
քըս. թէ էլ ուրիշ բան էրած ունիմ՝ հոգիս
էն սատանեստանցը բաժին դառնալ, պաշտում-
պատարագն ինձի խռով կենալ, դժոխքի քիւ-
թիւք ըլլիմ, վառիմ-վառիմ չանցնիմ, էն կանանչ
մեռոնն ինձի քըրքը, ծակծկիմ, դեղին ջրե-
րըն ելսին վրալէս վազեն..Ա՞յ, ուր է ուր չէ հիմի
կուգալ՝ իրեն հարցու. թէ էդպէս իմ ըսածիս
պէս չեղաւ գլխուս զարկ, երեսիս թքէ...Հա—,
նորից լաց լինելով շարունակեց Սանամը, —

դականակի կտորտանքը պահել եմ, տէր-տէր
ջան, օր գիշերը վրէս ջարդեց։

Եւ վեր կացաւ դագանակի կտորները բե-
րելու։

— Հըն, մեր ժամանակը հարսը վեր կե-
նար կերսարոջ քով, էն էլ տէր-տէրի առաջն
էդքան երկենուբարակ խօսիր. հայ վախ,
հայ... նորից հառաչեց ծերը։

— Ահա, մենակ էդ է—, դագանակի ու
հաստ ճիպոտների միքանի կտոր քահանալի
առաջն ածելով լացեց Սանամը. — օրը մի դա-
կանակ վրէս կջարդէ. բոլորն օր հաւաքէի,
մի ձմեռուայ վառելիք կըլիր...

Քահանան վերցրեց ճիպոտների կտորնե-
րը, նայեց, նայեց, գլուխը շարժեց և ասաց։

— Խելառ է քիօֆակօղլու տղէն, Բնչ է.
մարդ էլ եղպէս դարտակ բանի համար կնիկ
ծեծէ...»

Ծերունի Ադամը լուռ դիտում էր իւր
խորհրդածութիւնների մէջ ընկզմուած, երբ
արդէն միջամտելուց լոյսը կտրել էր։

Այդ ժամանակ ներս մտաւ Սանուկը։
Նա երբ տեսաւ քահանալին ճիպոտների կը-
տորները ձեռում նստած՝ շփոթուեց, ներքին
յուզումից արիւնը խփեց գլուխը, դէմքը կար-
մրեց, օր այնքան ամօթից չէր, որքան բար-

կութիւնից, որ կինը բանն ալդտեղ էր հասցրել և քահանայի աշն առնելով ծալապատիկ նստեց հօր մօտ, հողէ յատակի վրայ:

— Ե՛, Մանուկ ախպէր—, ճիպոտների կտորները ձեռում պահելով սկսեց էրէցը, — ախըր էսպէս չիլի. Էս քանի հեղէ կուգամ, կիրատեմ, կհամոզեմ՝ դու էլի քու էրածէդ ետ չես կենայ. կռիւր, դալմաղալը մէկ կըլի, էրկուս կլի, հէջ բան օր չըլի ամօթ է. էդ ինչ բան է. կնիկ ծեծելը որն է... կնիկ ծեծելն այ՝ փափաղդ առ ցիք ոտքիդ տակը, թակէ, թակէ՝ էլի նորէն դի գլուխդ—. և քահանան այնքան զգացուեց իւր աստծներից, որ իւր հին, մի կողմը խանձուտծ գըլիստրկը մի-երկու անգամ տուեց տափովը, վըրէն կանգնեց մի լաւ ճիշլորեց, ապա նորից դրեց գլուխը. — այ, կնիկ ծեծելն էս է, մանտուանդ էդպէս դարտուկ բանի պատճանով: Ի՞նչ է մեղքը, ըս՛ տեսնիմ. թէ մեղաւոր է, մի-երկու հատ էլ ես հասցնեմ. Հըմը ինչպէս ինքը պատմեց՝ ծեծելուդ պատճառը շատ դարտակ բան է. — թէ «առանց իմ հրամանիս մարանցդ ես գնացէ»...

— Համապէս է. համա մենակ էդ չէ:

— Ե՞լ ինչ կայ—, հարցրեց քահանան:

— Իմ տունս պուտուկ չկայ, նա կըռնէ

առանց իմ հրամանիս պուտուկը մարանցը կդրկէ:

— Եդ երկուս. էլ. էլ ուրուշ կայ, թէ մենակ էդ երկուսն է:

— Մինտարը կքանդէ, տղին բարձ կշինէ առանց իմ...

— Տեսմը, տէր-տէ՛ր ջան, տեսմը, խոր իսկական անկջովդ իմացար. ըլլի օր մենակ ըլլէի, ըսէի, չհաւատալիր, վեվ գիտէ, ըսէիր, թէ «սուտ կխօսի, կխաբէ»...

— Հալքատ (ի հարկէ) սուտ կխօսիս—, կնոջն անմիջապէս ընդհատեց Մանուկը:

— Ո՞ւտ... Ստին էն ժամը քըքըէ, համամը: Ստին էն ժամը քըքըէ, համամը:

— Զէնդ կտրէ—, բարձը որոտաց Մանուկն և կանգնեց ոտքի:

— Ախպէ՛ր, ի՞նչ է, ի՞նչի կտաքնաք. ըսէ՛ք տեսնիմ ի՞նչ է—, միջամտեց քահանան:

— Կսուի օր ըսեմ—, գլուխը շարժելով քահանային պատասխանեց Մանուկը:

— Ի՞նչ է, ըսա իմանամ, ըսա. տան քահանեցէն չեն ամնչէ, ըսա:

— Ըսելն ամօթ է:

— Վ՞ուկ, քոռանամ ես, էլի ի՞նչ է մոգոնելու—, ծնկներին խփելով ողբաց Սանամը:

— Մոգոնելու ի՞նչ կայ. ինչ օր դորթ է,
էն եմ ըսելու:

— Հսա տեսնիմ, ախալէ՛ր. էլ ինչք կհեռ-
սոտիս, ըսա իմանամ:

— Հսելն ամօթ է... իզին (հրաման)
կուտաս ըսելու—, դէպի քահանան դառաւ
Մանուկը:

— Հա, հա, իզին կուտամ. դու ըսա. թէ
նեղանալու բան է, քու տեղդ ես նեղանամ:

— Վալ, Աստուած ջան, հըճըպ (եարաբ)
ի՞նչ պիտի ըսէ, հեծկլտաց Սանամը:

— Հեռի քու սուրբ կարգէդ, ամօթ չէ,
օր իմ հերս զո՞ճա, հասակն առած մարդ ըլլի՝
էնիկ դէմը նստի, ծիծը բանալ տղին ծիծ
տալ, հա... Մարդ սաղսաղ գետինը մտնի
լաւ չէ. ես դաբուլ չեմ էնէ. պիտի ծեծեմ,
օր կրթիմ... «Էրիկ եմ էնոր համար, օր ա-
զուն էլ խօսիմ, անլուն էլ», իրաւունք ու-
նիմ. պիտի ծեծեմ...

Քահանան ուզեց խօսիլ, հանգստացնել,
բայց Սանամը վրայ բերեց.

— Զէ, չէ՛, ամեն բան կտանիմ՝ ծեծ չեմ
տանի. անտէր ջան չունիմ... ինչ օր տարալ՝
հերիք է... թէ օր պիտի ծեծէ՛ ես էստեղ
չեմ մնալ:

— Հա, հա, պիտի ծեծեմ, օր կրթեմ.

Կուզես էդ է, չես ուզէ էդ է: Ես քեզի զօ-
րով դուրս չեմ էնէ. թէ չես ուզէ առաջդ
(ճամպէդ) բաց է:

Այդ լսելով՝ Սանամը վեր կացաւ տեղից,
մօտեցաւ օրօրոցին և սկսեց քնած երեխալի
փորքաշը քանդել. — օր էդպէս է՝ ես էլ գի-
տեմ իմ ընելիքս:

— Էդ ի՞նչ կենես..., դէպի նրան շար-
ժուեց քահանան:

— Զէ՛, տէր տէ՛ր ջան, ես էլ էստեղ չեմ
մնայ. փառք Աստծու, հօրս տունը մի կտոր
հաց կճարուի, օր ուտեմ, անօթի չմեռնիմ:

— Մի քիչ համբերէ՛, որդիս, տեսնինք
ինչ կըլլի. ախր էդպէս բան չիլլի. ոչ դու
խօսք կհասկնաս, ոչ էն. երկուսդ էլ քար էք.
մէկդ ու մէկդ կակալ պիտի ըլլիք, օր եօլա
երթաք, բան հասկնաք:

— Ե՞ս ինչի պիտի կակալ ըլլիմ, ես տղա-
մարդ եմ. կակալ ինքը պիտի ըլլի, կնիկմար-
դըն ինքն է:

— Զէ՛, տէրտէր ջան, խոյ կտեսնիս. քու
քովդ ինչ կէնէ, օր մենակ մնանք ինչ էնէ.
տաքիդ տակը պագնեմ, էլ չեմ կարալ մնալ,
իլլամ չունիմ, էլ էս տեղս հասաւ—, թէ իմ
աճալս (Ճահ) չես ուզէ՛ թող—, վրայ տալով
խօսեց Սանամ և ցոյց տուեց կոկորդը:

— Ե՛, աղջի, կնիկմարդ ես, ամօթ է՛.
Հէշ բան օր չըլլիմ՝ էսօր-էսօր տէր-տէր եմ,
տան քահանայ եմ, քահանայական կարգէ՛ս
ամնչէ, սպասէ տեսնինք ինչ կէնենք:

Մի ըոաէ Սանտմը կանդ առաւ. նրան
ազգեցին քահանալի խօսքերը. բայց միենոյն
ժամանակ յիշելով մարդու սպասնալիքը՝ ցըն-
ցուեց բոլոր մարմնով. ուստի տւելի լաւ հա-
մարեց թողնել, հեռանալ, քան լռել և մնալ:

— Զէ՛, տէր-տէր ջան, ամօթ չէ՛ ինչ
կուզէ ըլլի: Քանի օր ինձի պիտի ծեծէ՛ ես
էստեղ մնացողը չեմ:

— Հա, հա, էլի կըսեմ. պիտի ծեծեմ...
պիտի ծեծեմ, օր քեզի պէս անամօթ ու ան-
կիրթ կնիկը կրթուի —, կնոջ խօսքին աղա-
ղակեց Մանուկն և շարժուեց առաջ:

Քահանան ստիպուած թողեց Սանտմին
և դառաւ դէպի Մանուկը:

Իսկ Սանտմն ալլ ևս ոչ մի բանի ուշա-
դրութիւն չդարձնելով հաւաքեց իւր մանր-
մունը իրերը, բողչա կապեց, գրկեց նոր զար-
թած երեխալին ու շիմ-շիտակ գնաց մարան-
ցը...

Եւ ալդ առաջին անգամը չէր...

ՀԱՅԻ ԶՄՐՈՒԹԻ ԿՈՐՑԲԱԾ ՓԻՄ- ՓԻԼԻ ՓԻԼԻԾԲ

Թրափի կնիկը, կամ ինչպէս կոչում էին
նրան Մամզարալում Անզալն աղքատ մարդու
կին էր: Նրա ամուսինը ջրաղացը գարի տանելիս
սալլը սապոնելու ժամանակ ընկել էր անի-
ւի տակ, մեռել: Անզալը տարիքն անցկացրած
լինելով չէր կարողացել երկրորդ մարդու գը-
նալ, մանաւանդ, որ հետը տանելու էր եր-
կու աղջիկ, որոնց մէկն արդէն տասը տարե-
կան էր, միւսը տասնեհինդ:

Ամուսնու մահուանից յետոյ աղքատու-
թիւնը նրա առաջ բաց էր արել իւր գոները.
և նա անկարող լինելով կառավարել իւր ար-
տըն ու չափրը, տուն ու տեղ պահել՝ սկսել
էր սրանքա համար կուէ աման շինել, մա-
նած մանել, խոիլ գործել, ալդպիսով մի կերպ
գլուխ պահել:

Մի գարնանալին գեղեցիկ օր, երբ արեւը զէնիթից նոր էր թեքուել դէպի արևմուտք, Անդալը մի փիլիճ (փոքրիկ աքաղաղ) թեկի տակ դրած վերադառնում էր հարևան գիւղից՝ Նիւլալիսից, ուր գնացել էր մի բազմամարդ լնտանիքի համար կճուճ շինելու։ Դործն աւարտելով նա ստացել էր իւր վարձը երկու կոտ գարի ալիւր, յաւելուած դրա բարի տանտիկինը լսելով նրա մեծ աղջկայ հիւանդ լինելը՝ նուիրել էր մի փիլիճ։ Անդալը թողնելով, որ մի բարեհոգի մարդ իւր սայլով, դէպքը պատահած ժամանակ, ալիւրը բերէ, փիլիճը կուան տակ խոտած եկաւ տուն, մորթել տուեց և հիւանդ աղջկայ համար, ինչպէս իրենք են ասում, բըընձէ չորպա պատրաստեց։ Նրա փոքր աղջիկը բմբուլի հետ մոռացմամբ գուրս էր գցել և փիլիճի գլուխը։

Ամդալն իւր հիւանդ աղջկան նոր էր նստեցրել տեղաշորի մէջ կերակուրն ուտեցնելու, որ դրսից լսուեց իրենց հարուստ դրացուհու՝ Հաճի Զմրութի խօսակցութեան ձայնը. լսեց իւր հասցէին ուղղուած խօսքերը, հետաքրքրուած մօտեցաւ դռանն ու ականջ դրեց։

— Աղջի, Զարման, աղջի։
— Ի՞նչ է, Հաճի ապլալ։

— Աղջի, արի մէմ. արի։
— Ի՞նչ կայ։
— Արի մէմ տես, էս էնելու բան է, օր էս աղքտի թողածն էրել է։
— Ի՞նչ է։
— Փիլիճս մօրթել կերել է, գլուխն էլ քմբլի հետ դուս է ցքէ. դու ըստ, իսիկ էնելու բան է. խօսիմ, կայնիմ հետը կոիւ սարքեմ՝ ինձի լայեղ չէ, չխօսիմ՝ չիլի...
— Վուր, բիլաքիմ Աստծու կրակին գալ էդ կաւկոխ չաթլաղը, օր սուտ խեղճ չըլլի, ու... Հերու էլ զոճա (մեծ) հաւս պարտկուաւ (անլայտանալ), ձէն չհանեցի, թէ, էհ. հիմի... Հաճի Զմրութին գիւր գալու համար վրալ բերեց խօսող կինը։

Անդալն ալեւս չկարաց համբերել, գուրս պրծաւ և տեսաւ, որ Հաճի Զմրութն իւր մորթած փիլիճի գըլուխը ձեռումը բռնած կանդնած է։

— Ինչի՞ զուր տեղը մարդու մեղքը կառնիք. ինչի՞ եմ ձեր փիլիճը գողցէ։ Եդ փիլիճը, Նիւլալիս էի գնացէ աման շինելու, Օանեց Ուրիկը տուեց փեշկեաշ։

Այժմ Հաճի Զմրութը որքան էլ չուզենար, չէր կարող չխօսիլ. մանաւանդ, որ Անդալի խօսելու ձեր նրան աւելի ծանր թուաց։

— Հրամանք ես, «Փեշկեաղ». դու ըսկըր ես էլ հաւտրցի... էս իմ փիմփիլի փիլիճիս գլուխն է, դու ում կխաբես. լաւ է, համ ուտես, համ էլ ատկազ էնես:

— Աման, Զմրութ ապլա, ինչ կխօսիս —, դողգողաց Անդալը. — աղջիկս հիւանդ էր, 0-սանեց Ուրիկն իմացաւ, տուեց, թէ «տար, մորթէ, եփէ, աղջկանդ ուտեցու». զուր տեղը հոգուդ մեղք մի էնէ. մենք էդ բանի տէրը չենք. էսքան վախտ է սաղ գեղի մէջ հըլը հէջ մէկըմ մեր գէշ անունը չէ իմացէ, հիմթ պիտի մի փիլիճի համար անըններս կոտրենք:

— Հէջ էլ հոգուս մեղք չեմ էնէ. դու քեզուքեզ բան մի սարքէ. թաղքի ցորեկ փիմփիլի փիլիճս էստեղանքը սաղ-սալտմաթ ման կուգար. սոլուղամ մէջ ուր գնաց, ինչ եղաւ, երկինք ելաւ... էլ ինչ աւելորդ խօսք-խօրտ. թալ, տիա, հաստատ փիլիճիս չաթալ կակութն է. նոր ես մորթէ, արանն էլ վրէն հըլը չէ ցամքէ:

— Թէ ակեար ես քու փիլիճէդ խաբար եմ, էս իմ երկու աչիցս լսէն զուրկ նստիմ, չարժանանամ էն առէք-կերէքին, հոգիս սատանէստանցը բաժին դառնայ, պատընքիս թելերը մենծ սատանէն ինքը քանդէ, դժոխ-

քի կոճ շինէ՝ վառիմ-վառիմ՝ չանցնիմ... թէ չէ, ինչ ըսեմ...

— Չէ թէ սուտ ըսողին, համար գարկութեամբ վրայ բերեց Հաճի Զմրութն, և սըրտում ինչ որ մի դառն նախատինք զգաց, որ աղքատ, հացի կարօտ Թրափի կնիկը, կաւկոխ Անդալը համարձակուեց իրեն գէմ ալդպէս յանդուգն խօսել. «Անդալն ով, ինքն ով». նա մանաւանդ հաստատ համոզուած էր, որ իւր փիլիճն է, — սեսմը, գիտի չաթլադ. ալամ... համ փիլիճս գողնայ ուտէ, համ էլ երգում-պատառ էնէ... Հազար որ երկինք ելնիս, իմ փիլիճս է, դու ես գողցէ:

Քա մէրս, քուրս, ինչի մարդու սաղ սաղ կնահատակես, ես էլ հասած աղջկայ տէր եմ, աղջկաս անունը մի հանէ, լաւ չէ... Տիա, Ակւլալիս մի հեռու տեղ չէ. Մամզանիս, ձեւերս էնտեղ կհասնի. հետո մարդ գի, մէտեղ երթանք, հարցնենք. թէ սուտ եղալ՝ ետև ինչ կուզես ըսաւ...

— Նըլը իդոր լիզուին աշէ. գիտի... չիմի քեզ համար տէէ! Ակւլալիսներն ընկ-նիմ պիտի...

Անդալն ալլևս անկարող էր տանել այդ անտեղի մեղադըրանքն ու ծանը վիրաւորան. միւնոյն ժամանակ տեսնելով, որ իւր քը. միւնոյն ժամանակ տեսնելով,

լացն ու աղերսանքը չեն օգնելու՝ իւր պստի աղջկան ծածուկ ուղարկեց քահանայի ետեւից, պատուիրելով, որ հիւանդ աղջկալ անունով կանչի նրան, միւնոյն ժամանակ և խնդրի, որ աւետարանը հետը բերի: Աղջկան ուղարկելուց յետոյ նա իւր թևերը պարզելով դէսի մէկ կամ միւս հանդիսատեսը միջամբ տութիւն, արդարադատութիւն էր խնդրում:

— Քա, մեղք չէ—, կարեկցելով ասաց մէկն իր մօտինին.— Բնչ է բկին չոքէ. խեղճըն ինչպէս աղաչանք-պաղատանք կէնէ, երդում-կրակ կուտէ. բալքի Աիւլալիսու են տու՞մ. թող մարդ գնէ, հարցնէ:

— Գու ինչ գիտես. էդպէսներու տակը շատ բան կայ. հերու էլ իմ երկու վառեկա էսդից պարտկուան, ամօթուս ձէն չհանեցի:

— Հրազ Հաճի Զմրութն իրեն փիլիճը չի ճանչէ. Գիրգոր աղի պէս մարգու կնիկը մուտ կիսուի—, վրալ բերեց երկրորդը, որ ինչոր հակառակութիւն ունէր Անդալի հետ, միւնոյն ժամանակ ուզում էր դիւր գալ Հաճի Զմրութին:

Կոիւն արդէն սուր կերպարանք էր ստացել, երդումից անցել սպառնալիքի, այնուհետեւ քիչ-քիչ հայհոյանքի՝ երբ քահանան աւետարանը թևի տակ հուզ տուած մօտեցաւ

Նրանց: “Նա այնքան էր շտապել, որ հազիւ էր կարողանում շունչ քաշել:

— Ի՞նչ է, Անդալ, աղջիկդ շատ նեղն է օր հաւարով կանչել ես. աւետարան էիր ուզէ, կարգացուի պիտի վրէն, ի՞նչ է... թէ ճաշակ պիտի տըուի...”

— Տէրտէր ջան, յօւսս ու տպաւէնս գնւ ես—, ասաց Անդալը քահանալին, որը կարծում էր թէ նրա աղջկան հաստատ մի բան է պատահէ, որ այնքան գուռուդրկիցն այնտեղ էր հաւաքուել. — բ'ն, բ'ն, իդի աւետարանդ երդում ուտեմ:

Քահանան զարմանք կտրաւ.

— Ի՞նչ երդում, այ քուրս. ես աղջկադ հալը կհարցնեմ:

— Զէ, երդում պիտի ուտեմ, իլլած չկայ: Թազքի երդում չուտեմ՝ չեմ հանգստի—, թազքի երդում չուտեմ՝ չեմ հանգստի—, խօանց յախնելու, թէ բանն ինչումն է, խօսեց նա, այնքան որ շփոթուած ու ինքն իրեն կորցրած էր:

— Ես հէչ բան չեմ հասկնալ. այ քուրս, ըստ տեսնիմ ի՞նչ է. խոյ աղջկադ բան չէ պատահէ, որ խելքդ կորուցածի պէս ես... պստի աղջիկդ հաւարով կանչեց, թէ քէլէր պստի աղջիկդ հաւարով կանչեց, թէ քէլէր քուրս շատ նեղն է, հիմի դու ի՞նչ կսես...”

Անդալն հազիւ հասկացաւ քահանայի
հարցրածը, յարեց.

— Տէր տէր ջան, միամիտ կեցած տեղու
ինձի փիլիճի գող կըռնէ, Աստուած կվեր-
ցընէ...

— Ի՞նչ փիլիճ, զեզ, ի՞նչ կխօսիս...

— Հաճի Զմրութը—, լալով նրան ցոյց
տուեց Անդալը:

Քահանան երբ իմացաւ, թէ բանն ին-
չումն է՝ գարմացած նայեց նախ Հաճի Զմ-
րութի, յետոյ միւսների երեսին և ծիծաղելով
ասաց.

— Ա՛յ ձեր մուխը շմարի, հա՛, ես էլ գիտեմ
թէ ի՞նչ է, աւետրանն ու մասնատուին ա-
ռայ, վազեցի—, և ապա նեղացած ուզում էր
գնալ, որ Անդալը նրան ընդհատեց:

— Ապա ես մեղք չեմ... անորդի մարիկ
եմ, վեզ ըսես՝ հասնի ու գլխուս կզարկէ...
իմ տէրս էլ վերևն Աստուած է, ներկը դու,
տէր-տէր ջան, բե՛ աւետրանդ:

Հաճի Զմրութը ամացելով քահանայից,
որ ինքն էր պատճառ դառէ նրան կանչել
աւալու, միւնոյն ժամանակ բարկանալով, որ
Անդալն իրենից ծածուկ ուզարկել էր աղջկան
քահանայի ետևից, որով և իւր վայելած պա-
տիւն ընկնելու էր, գեռ լուսմ էր, տեսնելու,

թէ Անդալն ինչ էր ասելու, որ ինքն ըստ
այնմ պատասխան տար:

— Ի՞նչ փիլիճ է. հա՛, լա՛ւ, էստեղ եմ,
ըսա՛—, տեսնելով նրա չափից գուրս վրդով-
մունքը հարցրեց էրեցը:

— Ըսեմ, տէր-տէր ջան. Հաճի Զմրութ-
ապլակի փիլիճը կորել է, հիմի եկել ինձի գող
կըռնէ, թէ դուք էք կերէ...

— Տէր-տէր ջան, կարգիդ մեռնիմ, էս-
տեղ ի՞նչ կայ մեղդըրելու. փիլիճս թաղքի ցո-
րեկ էստեղանքը սաղ-սալամաթ ման կուգար.
նոր ելայ, թէ հաւերս նես առնիմ. Համրեմ,
տեսնիմ, օր փիմփիլի յուունդ մի փիլիճ ու-
նէի, սաշախլի յոտներով, կակառթն էլ չա-
թալ՝ չկայ. գուս եկալ ժուռ գալու՝ գլուխն
իրեն դռնէն գտայ. տեա, իմ փիլիճիս գլու-
խըն է, կակըռթէն կճանչեմ... Հապա ի՞նչ է-
նեմ, սուրբ կարգիդ մեռնիմ, խորոզս կորի
տէրը ըլլլիմ...

— Թող ըսէ, տէր-տէր ջան, էդ փիլիճն
ես էսօր Ղիւլալիսու բերի. Օսանենց Ուրիկը
տուեց: Թէ ակեար սուտ կսեմ սուրբ կարգի
ինձի քրքրէ, չալըմմիշ ըլլիմ, օխտը պորտով
աւուր գատաստընին պարտական մնամ. տիա՛,
թող հետս մարդ դնէ՛ երթանք Ղիւլալիս
հարցնենք:

— լաւ, քուրս, մէրս, մարդ էլ էդպէս
քանի համար էսքան դուռուդրկից գլխուն
թոփի էնէ... մարդ մարդու ձի կբախշէ, հիմի
մի փիլիճի եղածն ինչ է... ամօթ չէ... այդ
ասելով քահանան խօսուն հալեացք ձգեց Հա-
ճի Զմրութի երեսին:

Հաճի Զմրութն այդ հալեացքից սաստիկ
կարմրեց, որովհետև այդ հալեացքը նա այս-
պէս հասկացաւ. «ամօթ չէ քեզ համար, որ
մի փիլիճի համար լալեղ ես արէ, և մի աղ-
քատ խեղճ կնոջ նեղացնում ես»...

— Ի՞նչ էնեմ, տեսալ, որ չի հաւտալ՝
ըսի աւետրնի վրա երդում ուտեմ:

— Մի լաւ մտածէ, Անդալ խանում —,
պաշտօնական լրջութեամբ խօսեց քահանան,
— մի լաւ մտածէ, թէ էրածդ ինչ է: Ըսենք
Հաճի Զմրութը սխալել է, սուտ թէ զորթ
մի բան ըսել է, էղոր համար էլ հէջ մարդ
աւետրան բերել տայլ... Քրիստոս ինչ կսէ.
չէ ըսէ, թէ իմ անունս դարտակ, ային-օյին
բաներու վրայ միք լիշէ... հակառակը, դուք
բերնի ծամոն էք շինէ, սահաթ գլուխ «Քրիս-
տոս, աւետրան, ճաշակ»... էդ ինչ հալ-
քրիստոնէի բան է... մեղք է, մեղալ քեզ
Աստուած...

Կոռով հետաքրքրուող կանալք «զորթ

կսէ, հըպը ինչ է. մեղք է բիլա» ասելով
ցըուան տները:

Հաճի Զմրութը նրանց հեռանալով քիչ
ազատ զգաց իրեն խօսելու. առաջ անցաւ.

— Խոյ ես բան չսի. մենք էստեղ կայ-
նած իրար հետ կխօսէինք, ինքը լրբացած
տնէն դուս եկաւ... այդ խօսքերով նա աշ-
խատեց իրեն անհամ դրութիւնից ազատել. —
ինքն էր աղջկան ետեղ զրկէ:

— Վո՞ւ քոռանամ ես —, վրայ տուեց
Անդալը. — տես թէ հիմի ինչ կսէ, ուր է,
կընկտիքն էլ գնացին, որ շահատ ըլլէին. թաղ-
քի հիմի գող կըսնէր, արթըդ տեսաւ, օր
չիլլի...

Անդալի այդ խօսքերը սաստիկ ազգեցին
Հաճի Զմրութին, նրա բարկութիւնը շար-
ժուեց և նա ժայթքեց.

— Հիմի ինչ ես լրբացէ, աղքատի կնիկ...
թէ ասոխ չես կերէ՝ սիրտդ ինչի կկսկծէ»... ըսի,
ըսի՝ հիմի ինչ եղաւ, ում կնիկն ես... հիմի
խանչըլիդ քարն ընկաւ, ինչ է... վալլա...
աճալիս թէ աղքատի կնկայ սիրտը նեղ կըլլի...
օր էդպէս է՝ էլի կսեմ, իմ փիլիճիս գլուխն
է, գու ես կերէ. սուտ երդում օր ուտես
հաւտըլըղը վեվ է. այ երդում —, աղաղակեց
նա և նորից ցոյց տուեց փիլիճի գլուխը. —

Հիմի շատ հեռսս հանես՝ ես էլ երդում կուտեմ:

Անզալը բարկութիւնից և յուսահատութիւնից էլ չփառացաւ թէ ինչ անէր, երբ տեսնում էր, որ երդուիլն էլ ազատելու չէր իրեն այդ անուարկութիւնից. այնուամենայնիւ այս անգամ իրեն կորցրածի պէս պինդ բռնեց քահանալի փեշից և լացեց.

— Հոգուդ մեռնիմ, տէր-տէր ջան, թող էնիկ չհաւտայ, խոյ Հախ Տէրը վերըդիէն գիտէ. ինձի սաղսաղ մի սըպանէ. ես ազապ աղջկայ տէր եմ. աղջկայ անունը կոտրելու պէս գէշ բան չկայ. թաղքի երդում չուտեմ, չեմ հանգստի. բե՛ աւետրանդ:

— Լաւ, երդում տամ, համա, էն մարդը չի հաւտայ, էլ ինչ երդում:

— Եդ ինքը գիտէ. բե՛ աւետրանդ:

Հածի Զմրութը տեսնելով, որ Անզալի երդուելով ճշմարտութիւնը նրա կողմն էր անցնելու, հետևապէս և ինքն իւր վայելած լարգանքը կորցնելու էր, առաջ անցաւ և գոռաց.

— Խոյ ես հաստատ գիտեմ, օր իմ փիլիճիս գլուխն է. հըմը օր էղպէս է՝ ես էլ երդում կուտեմ. թող Հախ Տէրը մեղաւորի

բալէն տալ. դէ բե՛, տէր-տէր ջան, աւետրանդ:

Քահանան տեսաւ, որ իւր մեղմ վարմունքը, խրատական խօսքերը նրանց չեն ազդում. և նրանք իրեն առ ոչինչ համարելով սուրբ գըքին են ուզում դիմել՝ բարկացաւ, մտաւ իւր դերի մէջ և այն է ուզում էր բերանը բանալ, որ թէ նախատէր նրանց և թէ իրեն լսել տալ՝ երբ յանկարծ անսպասելի կերպով որդից որ էր լոյս ընկաւ Հածի Զմրութի կորցրած փիմփելի փիլիճն, և աղբի քժոցի ծէրեն կանգնելով կասես յաղթական ձանով կանչեց.

— Կուկու լուկունանաւ...

Վ Ե Բ Զ



三一七

Կենդրոնական և Կովկասեան գրավաճառանոցներում ևս և իրեն հեղինակի մօտ ծախւում են.

«ԵՐԴՈՒԽՄ», ՎԵպ. 40 կ.
«ՊԱՏԱՆԵԿԱՆ ՅՈՒԴԵՐ» 15 կ.

Ըուտով առանձին գրքով լոյս կտեսնի «ՀԱՅ ԳԵՂՋՈՒԿԻ ԱԼԲՈՄԻ» Ա. մասը՝ «Գաշտալին գործիքներ»:

Պատրիաստ է տպագրութեան համար «ՀՕՐՈՑ-ՄՈՐՈՑ»-ի երկորդ գիրքը:

ԳԻՆՆ Է 30 4.

2013
12941

